

4568

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԽՈՅՑ ՄԻԱՅԵԱԼ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ


Ն. ՏԵՐ ՀԵԿՈՆԴԵԱՆ

# ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԴԱՍԱԴԻՐՔ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

ԱԶԴԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ ՀԱՄԱՐ

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ



Կ. ՊՈՂԻՆ

ԳՐԱԾՈՒՅՆ Գ. ԳԱ. Պ. Շ. Ա. Ե. Ա. Ե.

ՏՈՎՄԱՆ Վ. ՄԵԽԱՍԵԱՆ

Սուլթան Համամ հասեխի, թի 14

1897

491.99-8

8-45

1837




## Ա Զ Դ


Միացեալ վարժարանաց Խնամակալութիւնս՝ Մայրենի Լեզուի Դ. տարւոյ Վեցերորդ տպագրութիւնն ի լոյս ընծայելու առոքիւ, կը փուրայ կրկնել թէ՝ անոր մէջ ներմուծուած են մանկավարժական նորանոր պահանջմանց եւ ազգային մանկացւոյն իրական պիտոյից համապատասխան ամենակարեւոր բարեփոխութիւններ, որ արդիւնք են նշանաւոր մանկավարժից երկարամեայ ներհուն փորձառութեանց :

Արդ, տարակոյո չունինք որ Պատ. Հոգաբարձութիւնք, Տեսչութիւնք եւ Ուսուցիչք եւս համամիտ պիտի գտնուին մեզ լիովին եւ պիտի շարունակեն գործածել սոյն օգտակարագոյն գիրքն իրենց խնամոց յանձնուած վարժարանաց մէջ, եւ բնաւ չափի զիշանին գործածել սորո Նախարարութեաններն, յիշելով մանաւանդ՝ որ Խնամակալութեանս հրատարակութեանց ամբողջ հասոյրը յատկացեալ է ազգային կարօս վարժարանաց եւ որբանոցաց պէտքերը յէլլէտու հոգալու :

Խնամակալութեան Միաթեւ Վարժարանաց



Օդ, Օդապարիկ, Ամպ, Անձեւ, Փոքորիկ, Ծավ, Նաւ :



## ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Ռ. ՏԱՎԻԿ

ԱՌ ՄԱՆՈՒԿՆ

Ուրախութիւն քեզ անպակա՛ս,  
Ո՛վ գու մանուկ սիրելի.  
Ծլի՛ս, ծաղկիս եւ ծերանա՛ս,  
Տալով պտուղ արժանի.  
Որպէս ծաղիկ, մանո՛ւկ, քաղցր ես  
Ու չնորհագեղ որպէս օր:

Մանո՛ւկ, մանո՛ւկ, ինձ չը խաբես  
Միշտ կա՛ց այդպէս լուսաւոր:  
Նայի՛ր վերըն, տե՛ս, ի՛նչ սիրուն  
Այն տեղ փայլին բիւր աստղեր՝  
Եւ անթի՛ւ են, և շողողո՛ւն,  
Որպէս երկու քո աշեր:

182002

Այն տեղ, հոգեա'կ, բնակած է  
Մեր սուրբ Հայրը երկնքի,  
Նա' է որ մեզ ուղարկած է  
Եւ կեանք եւ սէր եւ հոգի:

Նա' կը ծագէ իւր արեգակ  
Ամենայն օր քո վերայ,  
Որ զուարձանաս որպէս թռչնակ. —  
Օրհնէ՛ Անուն սուրբ Նորա:

Ունի Որդի մի Միածին,  
Նա' է Փրկիչ աշխարհի.  
Նա խաչ ելաւ, առւաւ հոգին . . .  
Որ դու լինիս մարդ բարի:

Նա սիրելով իւր թշնամիք,  
Օրհնեց Խաչին եւ ներեց.  
Եւ մեղ գրեց իւրեան որդիք,  
Սիրել միմեանց պատուիրեց:

Նա' հեզութեամբ յաղթեց չարին  
Եւ մեղ ասաց որ եւ մեք,  
Հետեւինք այդ օրինակին,  
Չ'հպարտանանք մենք երբէք:  
Մանուկ սիրուն, աղօթք արա՛,  
Երբ դու գլուխդ խոնարհած,  
Կը համբուրես պատկերդ ահա՛,  
Ոսկենկար զարդարած:

Եւ կը ժպտի որպէս շուշան  
Անհոգ մանուկն մօր գրկին.

Այսպէս թռչնակ ճիւղին վերան,  
Օրհնէ իւրեան հրեշտակին:

Եկէ՛ք, Հայոց եկեղեցի,  
Այն տեղ տեսնէք զմայլուած  
Պայծառ գէմքը այդ երկնացի,  
Դարնա՛ն վարդը կիսաբաց:

## Ա Խ Ա Զ Ի Ն Վ Ա Ր Ժ Ո Ւ Թ Ի Ւ Ն

### Օ Դ

Սեղանին վրայ փետուր մը գրէ՛ք եւ թերթ մը  
թռողթ առնելով շարժեցէ՛ք առջին. առանց փետուրին  
գպչելու՝ ան կը շարժի և գետին կիյնայ: Ինչո՞ւ կիյ-  
նայ. — ի հարկէ ոչ թէ վախէն, որովհետեւ փետուրն  
անշունչ առարկայ մըն է: Բայց կ'երեւի թէ փետուրին  
և թղթին մէջ տեղ կայ ուրիշ անտեսանելի մարմին մը,  
որ թղթէն հրուելով՝ փետուրը վար կը ձգէ սեղանին  
վրայէն: Առէ՛ք խողովակ մը, նայեցէ՛ք վրան — դա-  
տարկ է, փշեցէ՛ք այդ խողովակին մէկ ծայրէն և ձայն  
մը կը լւէք մէջէն: Աս ալ նոյն անտեսանելի մարմինն է,  
որ խողովակին ներքին երեսին զարնուելով՝ այդ հըն-  
չումն արտադրեց: Լայնարձակ քղանցքնիդ բանալով՝  
հովին գէմ վազեցէ՛ք և կը զգաք որ բան մը սաստիկ կը  
դիմադրէ ձեղ. աս ալ միւնոյն անտեսանելի մարմինն

է որ ամէն տեղ կը գտնուի: Նայեցէք, ձեր կուրծքն անդադար կ'ելլէ կ'իջնէ, և ամէն անդամ ելլելուն՝ բան մը ձեր քթէն բերնէն ներս կը մտնէ, և ամէն իջնելուն՝ այդ բանն ալ դուրս կ'ելլէ նոյն ճամբով. աս մի և նոյն անտեսանելի մարմինն է, որ մինչև անդամ ձեր մարմինին ներսն այցելութեան կ'երթայ: Այս անտեսանելի մարմինը կը կոչուի 0Ւ: Այսպէս ուրեմն օդը մենք չենք տեսներ, բայց մեր միւս զգայարանքներով — շօշափելիքով, լսելիքով և հոտոտելիքով — կ'իմանանք անոր ներկայութիւնը. բայց ինչո՞ւ չենք տեսներ, եթէ լուսամտի ապակին շատ մաքուր է. դուք մինչև անդամ կը խարուիք կարծելով թէ շրջանակին մէջ ապակի չկայ: Մենք չենք տեսներ ապակին, որովհետեւ շատ թափանցիկ է, իսկ օդն՝ ապակին աւելի թափանցիկ է: Այսու ամենայնիւ, օդը թանձրանալով տեսանելի կ'ըլլայ, և կապոյտ գոյն կ'առնէ: Կապոյտ երկնակամարն, որ մեր գլխուն վերեւ կը տարածուի, ուրիշ բան չէ՝ եթէ ոչ նոյն իսկ այդ թափանցիկ օդը 60 հազարամեթրէ աւելի թանձրութեամբ, որուն մէջն կը տեսնենք երկնային աստղերը: Այդ օդը, որ կը շրջապատէ ամբողջ երկիրը, կը կոչուի մինոյորս:

Եթէ օդը մարմին է, պէտք է որ ծաւալ մը և որոշ ծանրութիւն մը ունենայ: Օդը՝ այդ երկու յատկութիւններն ալ ունի: Առնենք բաժակի մը և ջրով լեցուն աման մը: Բաժակը դարձնելով դնենք ջուրին վրայ և սկսինք կամաց կամաց ջուրին մէջ իջեցնել: Կը տեսնենք որ ջուրը անոր փոքրիկ մէկ մասը կը լեցնէ, իսկ բաժակին վերի մասը դատարկ կը մնայ, թէկ մինչև յատակը ջուրին մէջ խորասուզեցինք այն: Ի՞նչ է, որ կ'արգիլէ ջուրը բաժակին մէջ լեցունելէ: Բաժակին մէջ օդ է

զատ բան մը չի կրնար գտնուիլ, որովհետեւ պարապ է. այդ կը նշանակէ որ արգելք եղողն օդն է: Ուրեմն օդն ալ մարմին մըն է, որ բաժակին մէջ իր յատուկ տեղը կը բռնէ և չի թողուր ուրիշ մարմիններու նոյն տեղը գրաւելուն, որովհետեւ երկու մարմին միանգամայն միենան տեղը չ'են կրնար բլաւ: Բաժակը ջուրին մէջ իջեցուցած ժամանակնիս կը զգանք թէ բան մը կայ որ ի ներքուստ կը դիմադրէ և բաժակը դժուարութեամբ վար կ'իջնէ, իսկ եթէ զայն փոքր մի ծուեինք՝ ջուրը մէկ կողմին վրայ առաւել ճնշելով, միւս կողմանէ դուրս կը խուսափէր ներսէն դիմադրող օդն, եւ բաժակն ինքնիրեն կը խորասուզէր ջուրին մէջ: Բաժակը ջուրին մէջ ընկղմելէ ետք՝ հանենք զայն, բայց ուղղակի և բերանը դէպի ամանին յատակը: Կը տեսնենք թէ ո՛րքան բարձրացնենք բաժակը՝ նորա հետ կը բարձրանայ նաև մէջի ջուրը, նոյն իսկ ջրոյն մակերեւոյթէն վեր: Ինչո՞ւ. — վասն զի արտաքին օդն երեսի կողմէն կը ճնշէ գաւաթին ջուրն, և որովհետեւ բաժակին մէջ օդ չ'կայ և բոլորովին դատարկ է, ուստի ջուրը չորս կողմէն ճնշուելով՝ մէջը կը մտնէ: Ադ կը նշանակէ թէ օդը մարմին է, բայց շատ նուրբ և թափանցիկ, և իբր մարմին ծանրութիւն ալ ունի, թէկ շատ աննշան: Օդը ջրէն շատ թեթեւ է, որովհետեւ անոր մասնիկները՝ ջուրին հետ բազդատելով՝ չափազանց թոյլ և անջատ են, այսինքն իրարմէ հեռի և անջատ կապակցութեամբ: Այն մարմիններն, որոնց մասնիկներն այնպէս թոյլ և անօսք են և այնքան նուրբ որ մենք չենք կրնար տեսնել, կը կոչուին օդային կամ կազային մարմիններ: Օդն ամենուս հարկաւոր է. առանց օդի կենդանի մը չի կրնար ապիթիլ, բոյս մը չի կրնար աճիլ: Այս պատ-

ճառաւ ալ նախախնամութիւնն օդին այնպիսի յատկութիւն մը տուեր է որ ամէն տեղ կը գտնուի, թէ ջրերու մէջ, թէ' հողի տակ փորուած նկուղներու և թէ' մինչեւ անդամ կարծր ու հաստատուն մարմիններուն ամենափոքր ծակոտիկներուն մէջ. մէկ խօսքով, բնութեան մէջ ամէն պարապ տեղ լեցուն է օդով. Երբ ջուրը կ'սկսի եռալ, կը տեսնէք որ անոր մակերեւոյթին վրայ պղպջակներ կը բարձրանան. ատոնք ուրիշ բան չեն, բայց եթէ ջուրին մէջ եղած օդն որ ջուրին երեսը բարձրանալով գոլորշիներու հետ կը ցնդի պաղ օդին մէջ. Օդն ահագին ովկիանոսի մը պէս ամէն կողմէ շրջապատած է երկրագունան, և ինչպէս ձուկերը ջուրին տակ, այնպէս ալ մարդիկ և ամէն կենդանիները այս ովկիանոսին ներքե կ'ապրին. Օդը մինչեւ տասն մղոն երկրէս վեր տարածեալ կը բարձրանայ. Որքան երկրիս կը մօտենայ՝ այնքան թանձր է ու ծանր, իսկ որքան երկրէս կը հեռանայ՝ այնքան անօսր ու թեթեւ. Մղոն մը բարձրութեան վրայ ա'յնքան կ'անօսրանայ, որ մարդուս անկարելի է այն տեղ ապրիլ, որովհետեւ շնչառութիւնը կը դժուարանայ. Թուչուններն ալ չեն կրնար թռչիլ այդ բարձրութեան մէջ.

---

### ԶԵՐՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՑՐՏՈՒԹԻՒՆ

Մէկը չը տեսնէր ջերմութիւնը, բայց ամէն մարդ կ'զգայ անոր ներգործութիւնը. Երբ գարունը գայ, արեգակը կը բարձրանայ երկրակամարին վրայ, անոր ճառագայթները կ'սկսին աւելի ուղղակի թափիլ երկրիս վրայ քան թէ ձմեռը, հետեւաբար եղանակն ալ կը

տաքնայ. Օրինակի համար, ձեռքբ ուղիղ բռնէ՛ ճրագին վրայ թէւ փոքր ինչ բարձրէն, և կ'զգաս որ կ'այրի. Ետքը տա՛ր ճրագին աչ կամ ձախ կողմը, և ա'յնքան ջերմութիւն չես զգար, թէւ համեմատաբար աւելի մօտիկ բռնես, որովհետեւ ճրագին ճառագայթներն ուղղակի չեն ազգեր ձեռքիդ, այլ խոտորնակի. Այսպէս ալ արեգակին նկատմամբ. կէս օրին տաք կը լւայ, որովհետեւ ծիշդ մեր գլխուն վրայ կուգայ և իր ճառագայթները գրեթէ շեշտակի մեր վրայ կը թափին առատօրէն. իսկ առաւոտուն և երեկոյին չեղ դիրք մ'ունենալով, իր ճառագայթները նուալ ջերմ կը լւան, Զայս կարողէք նշմարել նաև ձեր ստուերին վրայ. կէս օրին ստուերը շատ կարծ կ'ըլլայ, գրեթէ ձեր ստքին ներքեւ. որովհետեւ արեւուն ճառագայթներն ուղղակի վերէն իյնալով՝ ամէն կողմէ կը շրջապատեն ձեղ. իսկ առաւոտուն և երեկոյին ձեր ստուերը մէկ կողմի վրայ կ'երկարաձգի. Արեգակը կը տաքցնէ երկիրն և օդը, մենք ալ երկրէն և օդէն կը տաքնանք. Եթէ օդ ըլլար կամ շատ քիշ ըլլար, մենք ալ սակաւ կը տաքնայինք. Եթէ երկրէս երեք հազարամէթը բարձրանանք (եթէ կ'ուղես՝ օդապարիկով), նոյն իսկ ամառը սաստիկ ցըրտութիւն կը զգանք. ասոր պատճառն ի հարկէ այն է թէ ո'րչափ բարձրանանք, ա'յնչափ օդը կ'անօսրանայ: Բարձր լեռներու գագաթներն, ամենատաք երկիրներու մէջ անդամ, ձիւնով ու սառոյցով ծածկուած են միշտ: Արեգակն է գլխաւոր աղբիւր ջերմութեան, բայց արեգակէն զատ կրակէն ալ ջերմութիւն կ'ստանանք: Կրակը մարմիններու այրելէն կը գոյանայ, բոցով կամ առանց բոցի, վասն զի առանց բոցի ալ կարելի է այրիլ. Երկաթն, որ սաստիկ ջերմութենէ գրեթէ կը ճերմկի եւ կաթն, որ սաստիկ ջերմութենէ գրեթէ կը ճերմկի եւ

ամենեւին կրակի նմանութիւն չունի, կ'այրէ ամէն բան  
որ իրեն դպչի: Բայց ի'նչպէս կրնանք ունենալ կրակ:  
Հին ժամանակները՝ կրակ վառելու համար՝ կ'առնէին  
կարծր տախտակի կտոր մը, մէջ տեղէն կը ծակէին,  
յետոյ կակուղ փայտ մը կ'անցունէին այն ծակին մէջ  
և կըսկսէին արագութեամբ դարձունելու: Փայտերուն  
շփուելէն ջերմութիւն կը գոյանար և այն ջերմութե-  
նէն կակուղ փայտը այրել կրսկսէր: Վայրենիները մինչև  
այսօր այսպէս կը պատրաստեն կրակը: Փորձի համար  
չուանը շարունակ քսէ՛ ծառին, ծուխ կ'արձակէ ու  
կ'այրի: Եփուելէն մինչև անգամ սայլերուն անիւները  
կ'այրին: Այդ պատճառով մարդիկ ձիւթով կոմ օճա-  
ռով կ'օծեն անոնք: Զիւթը սոնակին և անիւնն մէջ  
կակղութիւն կը պահէ և թոյլ չի տար անոնց շփուիլ  
իրարու հետ: Բախումէն ալ ջերմութիւն կը ծնի: Եթէ  
մուրճով շարունակ զարնես երկաթին վրայ, կը տաք-  
նայ երկաթը, Դիտէք որ երբ հրահանը զարնենք կայծ-  
քարին, պողպատի մասնիկները սաստկապէս շփուելով  
ա'յն աստիճան կը տաքնան ու կը կարմրին, որ կ'այրեն  
փափուկ արեթը: մարմիններու փտելէն և անոնց այլ  
և այլ խառնուրդներէն ալ ջերմութիւն կը գոյանայ:  
Յայտնի է ձեզ որ եթէ չմարած կրաքարի վրայ ջուր  
թափէք՝ սաստիկ կը տաքնայ: Գիւղացին խոտը խնա-  
մով կը չորցունէ և ապա կը դիզէ, վասն զի գիտէ որ  
եթէ թացութենէն փտիլ սկսի, տաքնալով կը բռնկի  
ու կ'այրի: Այսպէս շատ անգամ մեղմիկ լոյս մը կը նըշ-  
մարուի ծառերու խոռոչներու կամ ճահիճներու և գե-  
րեզմանատուներու վրայ, և տգէտ մարդիկ այլ և այլ  
մեկնութիւններ կուտան, չգիտնալով որ ան ուրիշ բան  
չէ, եթէ ոչ փտութենէ առաջ եկած կաղերու այրում:

Ոմէն մարմին միւնոյն կերպով շտաքնար: Կան շուտ  
և ուշ տաքցողներ Փայտէ ցուպը կրնաս վառել և մէկ  
ծայրէն միւս ծայրն աներկիւղ ձեռքդ բռնել: նոյնպէս  
կարող ես բաժակին մինչև կէսը տաք ջուր լեցնել և վե-  
րէն դատարկ մասէն բռնել, առանց ձեռքդ այրելու,  
որովհետեւ ապակին ուշ տաքցող է, իսկ փայտն աւելի  
ուշ: Ասոնցմէ աւելի ուշ կը տաքնան ջուրը, օդը, մա-  
զը, փետուրը, թուղթը, վուշը, բուրդը, և այլն: Բայց  
փորձէ՛ ձեռքդ առնուլ երկաթէ կամ որ և իցէ մետա-  
ղէ գաւաղան մը՝ որուն մէկ ծայրը կրակի մէջ ըլլայ, իս-  
կոյն ջերմութիւն կը զգաս, և եթէ քիչ մը շարունակես  
բռնել՝ ձեռքդ անգամ կ'այրես: Այս պառճառաւ է  
որ կըսեն թէ երկաթն և միւս մետաղները ջերմութեան  
յաւ հաղորդիչ են, իսկ ջուրը, օդը փետուրը եւայլն  
վաս հաղորդիչ են. լաւ հաղորդիչը թէկ ուշ կը տաքնայ,  
բայց նոյնքան ալ շուտ կը պաղի: երկաթեայ վառա-  
րանը վայրկեանի մը մէջ կը բորբոքի և առատ ջերմու-  
թիւն կուտայ, բայց ոչ երկար ժամանակ: այս պատ-  
ճառաւ աղիւսէ վառարանը նախամեծար կը համարինք,  
վասնզի թէկ ուշ կը տաքնայ, բայց նաև ուշ կը պաղի:  
Չմեռը բրդեղէն ու մազեղէն զգեստներ կը հագնինք,  
վասնզի լաւ հաղորդիչ ան: ատոնց մազերուն մէջ գըտ-  
նուած օդն և իրենք ալ միանգամայն արգելք կըլլան  
և թոյլ չեն տար մեր մարմինին սեպհական ջերմութեան  
դուրս ելնելուն: Ահա այս պատճառաւ է որ ցուրտ  
երկիրներու բնակիչները իրենց տան պատուհաններուն  
երկու կարգ ապակի կ'անցունեն, որովհետեւ երկու ա-  
պակիներն և անոնց մէջտեղ գտնուած օդն՝ իբրև վատ  
հաղորդիչ թոյլ չեն տար ներսի ջերմութեան դուրս  
ելլելուն:

Կաշին ալ վատ հաղորդիչ է ջերմութեան, և այն կենդանիները, որոնք հիւսիսային ցուրտ երկիրներու մէջ կ'ապրին, փափուկ մուշտակէ զատ կը կրեն նաեւ հաստ և ուժեղ մորթեր ու կաշիներ: Բրդեղէն մազերն ո՛րքան բարակ ու փափուկ ըլլան, այնքան տաքցնող են: Պողատու ծառերը ձմեռը դիտմամբ կը փաթթեն խոտերով և փսիաթներով, որպէս զի չսառին: Զիւնն ալ վատ հաղորդիչ է և բացօդեայ անապատներու մէջ՝ փոթորիկներու ժամանակ՝ ուղեւորները ձիւնին ներքե պահուելէ զատ միջոց չունին փրկութեան: Վատ հաղորդիչ նիւթերու միջնորդութեամբ միայն կրնանք սառոյցը շուտ հալելէ ազատ պահել ամրան տաքերուն մէջ,

ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ԶԵՐՄՈՒԹԵՆՔՆ ՏԱՐԱԾՈՒԻԼԸ  
ԵՒ ՀՈՎԻՆ ՈՒ ԶԵՐՄԱԶԱՓԻՆ ԾԱԳՈՒՄԸ

Մարմինները ցուրտէն կը սեղմուին եւ տաքէն կը տարածուին: Առ կտոր մ'երկաթ կամ կապար, չափէ ճշդութեամբ, ապա տաքցուր և կը տեսնես որ քիչ մը երկնցեր է: Նոյն երկաթի կամ կապարի կտորը նախ պաղ և յետոյ տաք եղած ժամանակ անցուր միւնոյն ծակէն. պաղ ժամանակը դիւրաւ կը մտնէ, իսկ տաքցած ժամանակը չի մտներ: Ահա այս պատճառաւ դարբինները նախ լաւ մը կը տաքցունեն անիւի մ'երկաթէ շրջանակը և ապա կ'անցունեն, որպէսզի պաղելէն ետքը պինդ գրկէ անիւր: Բայց ինչո՞ւ համար գետանախն-ձորը կրակի մէջ խորովելէն յետոյ կը խորշոմի եւ կը փոքրնայ. ինչո՞ւ թաց և նոր դռները դժուարաւ կը

**ՀԱՅՐԱՅԻՆ ԳՐԿԴԱԸ** **ՊՈBLԻЧՆԱ ԲՈՂԱԿԱԸ** **1922**

փակուին, իսկ երբ չորնան՝ կը մկանի աղաղուարժիլ իրենց ծխնիներուն վրայ: Ասոնց պամաճառը բոլորովին տար-բեր է: Ինչպէս գետանախնձորը, նոյնպէս և մասն փայտը շատ ջրային կաթիլներ կը պարունակեն իրենց միջ ջեր-մութեամբ ջուրը կը չոգիանայ, և կը մնան պարապ տեղ-ուանք, որոնք նոյն իսկ նիւթին մասերը կը գրաւեն՝ իրարու մօտենալով: Փորձի համար փայտի կտոր մը ձգեցէ՛ք ջուրին մէջ և մէկ երկու օրէն հանեցէ՛ք: Կը տեսնէք որ փայտը անհամեմատ կերպիւ ծանրացած ու մեծցած է: ատ կը նշանակէ որ անոր բոլոր ծակոտիք-ները ջրով լեցուած են: Դրէ՛ք այդ փայտը տաք տեղ մը, ջուրը քիչ քիչ կը չոգիանայ և փայտին իրարմէ հեռացած մասնիկները իրենց առջի դիրքը կ'առնեն: Զու-  
*(1002)*  
*(8940)*  
*5052*  
*20244-60*

րին ջերմութենէ գոլորշիանալը ամէն օր կը տեսնէք երբ եռաշնէք ջուրը: Եռացման ժամանակ անոր կաթիլնե-րը կը տարածուին, կը հեռանան իրարմէ և ամենամանը մասնիկներու կը բաժնուին, որով վերջապէս շոգիածե կը բարձրանան, որովհետեւ տարածուելով օդէն աւելի կը թեթևենան: Բայց ի՞նչ է պատճառը, ո՞ր սառոյցը կը լողայ ջուրին երեսը: ո՞չ ապաքէն ջուրէն աւելի պաղէ, հետեւաբար պէտք է որ անկէ աւելի սեղմուած ըլլայ, և եթէ աւելի սեղմուած է, այսինքն եթէ շատ մաս-նիկներ ժողուուած և խտացած են մէկ փոքր տարածու-թեան մէջ, ի հարկէ ծանր կը լլայ, ուրեմն պէտք էր ջուրին տակը երթար: Սակայն բնութեան մէջ այս իրո-ղութիւնը այլապէս կը կատարուի: ճշմարիտ է որ ջու-րը նախ կը սեղմուի ցուրտէն, բայց երբ սառելու աս-տիճան ցրտանայ, իւր մասնիկներն ուռելով և տարած-ուելով աւելի մեծ տեղ կը բռնեն: Սակաւիկ մը ջուր՝ անհամեմատ մեծ դիրք ստանալով սառած վիճակին

մէջ քան թէ առաջ՝ աւելի մեծ տարածութիւն կը բըռ-  
նէ, և իր ներքեւ գտնուած ջուրի կոյտէն աւելի թե-  
թևալով, կը լողայ անոր վրայ: Նախախնամութենէն  
սահմանեալ այս բնական բացառութիւնը մեծամեծ օ-  
գուտներ ունի: Եթէ սառոյցն ալ միւս մարմիններու  
նման սառելով՝ սեղմուէր, ծանրանար և հետեւապէս  
ջուրին տակն իջնէր, այն ժամանակ տակաւ առ տա-  
կաւ բոլոր ջուրերը կը սառէին և մենք ջուր ստանալու  
համար կը հարկադրուէինք հալեցնել զայն: Բաց աս-  
տի, ձուկերը ու բոլոր ջրային կենդանիները կը սառէին  
ու կը ջնջուէին:

Արդեօք օդն ալ կը տարածուի ջերմութենէն, Փորձի  
համար՝ եզան փամիուշը փշէ՛ և այսպէս անիկա օդով  
լեցնելէ յետոյ կրակին մօտեցուր, իսկոյն կը պայթի:  
Կը նշանակէ թէ մէջի օդը տաքնալով՝ այն աստիճան  
կը լայննայ, որ չկրնար ամիսիուրիլ իր առաջին տեղը  
և կը պայթի: Վառարանը վառած ժամանակ, շատ  
անդամ անոր մէջ դիզուած փայտերը կրակ կ'արձակեն.  
այս կը նշանակէ թէ փայտերուն մէջ կեցած օդը սաստ-  
կութեամբ տարածուելով՝ դէպի այլ և այլ կողմեր կը  
մղէ կայծ կտրած ածուխի մասնիկները: Երբ սենեակի  
մը մէջ կրակ վառենք, մէջի օդը տաքնալով կը տարա-  
ծուի, և իբրև աւելի թեթև մարմին, ծխնելոյզէն  
դուրս կելլէ իր հետ տանելով ածուխի մանր կտորները  
իբրև ծուխ, իսկ խոշոր մասերը ծխնելոյզին մէջ կը մնան  
իբրև դիրտ: Այդ միջոցին սենեակին բովանդակ օդը  
բռնութեամբ ներս կը մղուի վառարանին մէջի դա-  
տարկ տեղը լեցնելու համար: Այսպէս կըսկսի օդին  
առածզութիւնը: Մի և նոյն ժամանակ սենեակին մէջ  
օդի բացակայութենէն դոյացած դատարկ տեղը կը

լեցուի նոր օդով որ ներս կը մտնէ դռներէն և լուսա-  
մուտքի մանր ճեղքերէն, և այդպէս վառարանը վա-  
ռելով՝ սենեակին օդը կը մաքրուի: Զերմ օդի մասնիկ-  
ները տարածուելով կը թեթեւնան և կը սկսին բարձ-  
րանալ դէպի ճեղունը, և անկէ կը հակին դէպի լու-  
սամուտները, և ընթանալու ժամանակ պաղ օդին հետ  
խառնուելով՝ դէպի դռները կ'իջնեն աստիճանաբար  
պաղելով և գետնի վրայէն կ'ուղղուին դէպի վառա-  
րանը, որպէս զի տաքութենէն դեռ նոր բարձրացած  
օդին տեղը բռնեն: Հոյն տաքնալով՝ օդը նորէն կը բար-  
ձրանայ դէպի ճեղունը և նոյն կարգով կ'իջնէ դէպի  
յատակը: Այսպէս ահա օդը անդադար կը պտըտի սե-  
նեակին մէջ, մինչեւ որ անոր բոլոր մասերը հաւասա-  
րապէս տաքնան Բա՛ց, ցուրտ սենեակի մը դուռը դէպի  
ի տաքը և մէջը պահէ՛ վառած ճրագը: Եթէ ճրագը  
բարձր բռնես, կը տեսնես որ անոր բոցը տաք սենեակին  
դէպի ցուրտը կը հակի: — ուրեմն այդ ուղղութեամբ  
կ'ընթանայ տաք օդը: յետոյ իջեցուր ճրագը դէպի  
սեմը և կը տեսնես որ բոցը հակառակ ուղղութիւն կ'առ-  
նէ, այսինքն դէպի տաք, սենեակը կը հակի. — կը  
նշանակէ թէ ցուրտ սենեակին պաղ օդը ներս հոսելով՝  
նոյն ուղղութիւնը տուաւ բոցին: բռնէ՛ ճրագը դրան  
մէջտեղը և ուղիղ կացութեան մէջ կը տեսնես անոր  
բոցը: — Երբ այս ու այն կողմ տարութերի, կը նշանա-  
կէ թէ պաղ ու տաք օդի հոսանքը հաւասար զօրու-  
թեամբ հանդիպելով՝ կ'արգիլեն իրարու յառաջխա-  
ղացութիւնը: Հոյն ուրիշ բան յէ երէ ոյ օդի հոսանք: Ինչ  
որ տեսանք սենեակին մէջ, նոյնը կը պատահի եւ  
երկրիս երեսը: տաք աշխարհներէ օդը կ'ուղղուի դէպի  
ի ցուրտ երկիրներ: իսկ ցուրտ երկիրներէն դէպի ի տաք

երկիրներ և այսպէս յառաջ կուգայ հողմը կամ հովը ։ Հողմը այլ և այլ փոփոխութիւններ կը կրէ լեռներու, անտառներու և ջուրին ներգործութենէն, որովհետեւ անոնք կը զովացնեն օդը։ Ծովեղերքներու վրայ երկու տեսակ օդի հոսանք կը լայ. ցերեկը ծովէն դէպի ցամաք կը փչէ հովը, իսկ գիշերը՝ ցամաքէն դէպի ծով։ — Ինչո՞ւ. — Ցերեկը հովը ջուրէն աւելի շուտ կը տաքնայ և հետեւաբար ցամաքին օդը ծաւալելով դէպի վեր կ'ելլէ. այն ժամանակ ծովուն ցրտագոյն օդը կը դիմէ անոր տեղը լեցնելու. գիշերը, ընդհակառակն, ջուրը՝ իբրեւ վատ հաղորդիչ, երկար ժամանակ իր մէջ կը պահէ ցերեկուրնէ ստացած ճերմութիւնը, մինչդեռ ցամաքը արդէն իսկ ցրտացած է, և այդ պատճառաւ իր ցուրտ օդը դէպի ծով կը դիմէ։ Ծովեղերեայ երկիրներ սովորաբար ձմեռը սաստիկ ցուրտ չըլլար, ոչ աւ ամառը սաստիկ տաք, հապա բարեխառն եղանակ։

Ջուրին և օդին ջերմութեան աստիճանը իմանալու համար մտածեցին չափել զայն սնդիկի միջոցով։ Այս նպատակաւ սնդիկը կը լեցնեն հաւասարաչափ լայնութիւն ունեցող ապակեայ բարակ խողովակի մը մէջ, որուն մէկ ծայրը բաց է, իսկ միւս ծայրը գնտածեւ և դոց։ Օդը դուրս մղելու և խողովակը պարպելու համար քիչ քիչ կը տաքցնեն զայն, որով օդը տաքէն տարածուելով կը բարձրանայ և մասամբ խողովակին դուրս կը հօսի. Նոյն միջոցին անոր բաց կողմը կը ընկղմեն սնդիկի մէջ որ կը գրաւէ օդէն պարպուած տեղը։ Այսպէս խողովակին գնտակը կը լեցնեն սնդիկով։ Առանց տաքցընելու՝ կարելի չէ սնդիկ լեցնել խողովակին մէջ որովհետեւ օդը արգելք կ'ըլլայ, Խողովակին գնտածեւ մասը սնդիկով լեցնելէ յետոյ, զայն դարձեալ կը տաք-

ցընեն փոքր առ փոքր մինչեւ որ բարձրանալով բոլոր օդը խողովակին դուրս մղուի, այն ժամանակ բաց ծայրը խոկոյն սաստկապէս տաքցնելով կը դոցն։ Ապահովութեան համար այդ ապակեայ խողովակը տախտակի վրայ կը հաստատեն, Յետոյ ամբողջ գործիքը կը դնեն հալած ձիւնի մէջ և ուր որ սընթիկը կանգնի, այնտեղ գիծ մը կը քաշեն և կը դնեն 0 նշանը. Այդ կէտը կը կոչուի հալման կամ սառման կէտ։ Յետոյ կը վերցնեն գործիքը և կը դնեն եռացեալ ջուրի մէջ. տաքութենէ սնդիկը կը բարձրանայ և հօն՝ ուր կը գագրի բարձրանալէ՝ գիծ մը կը քաշեն և կը նշանակեն 80. Այս կէտ կը կոչուի եռացման կէտ։ Այնուհետեւ 0 ին և 80 ին մէջտեղը կը բաժնեն 80 հաւասար մասերու և կը նշանակեն թիւերով։ Նոյնպէս կը նշանակեն նաեւ 0 էն վար, և այդ բաժանումները կը կոչուին ատիճաններ, իսկ ամբողջ գործիքը կը կոչուի ջերմաչափ։ 0 էն բարձր աստիճանները տափութեան չափը ցոյց կուտան, իսկ 0 էն վարինները՝ ցրտութեան չափը։ Դրելու ժամանակ տաքութեան համար կը գործածեն յաւելման նշան (+), իսկ պաղութեան համար բարձման նշան (—)։ Հալման և եռացման կէտերուն համեմատ առարկաներու կամ նիւթերու բարեխառնութիւնը (բարեխառնութիւնը կը կոչուի առարկաներու ջերմութեան որքանութիւնը) որոշելով, կը նանք զոր օրինակ ըսել թէ ամառնային տաք օրերը կը նանք զոր օրինակ ըսել թէ ամառնային տաք օրերը մեր երկիրներուն մէջ 20—30 աստիճան բարեխառնութիւն կ'ըլլայ ( +20°. կամ +30°.), թէ սենեակի մէջ

15 աստիճանէ (+15°.) աւելի ջերմութիւն վնասակար է, թէ մեր արիւնը 30 աստիճան ջերմութիւն (+30°.) ունի, թէ Սառուցեալ Ովկիանոսներու մօտ ցուրտը երբեմ ձիւնի աստիճանէն (-30°.) աւելի կ'ըլլայ, բայց սնդիկը 30° էն աւելի ցրտութիւն չէ կարող ցուցնել, որովհետեւ այնքան ցրտութեան մէջ ան ալ կը սառի: Մեր նկարագրած ջերմաշափ հնարեց Ռէօմիւր անունով երեւելի բնագէտ մը: Ուրիշ ջերմաշափ մըն ալ կը գործած են, զոր կելսիոս անունով բնագէտ հնարած է: Կելսիոս եռացման և սառուցման կէտերուն միջոցը փոխանակ ութուն աստիճանի՝ բաժնեց հարիւր մասերու, որով այս ջերմաշափին աստիճաններ աւելի մանր են քան Ռէօմիւրի ջերմաշափինները: Կելսեան ջերմաշափին 5° հաւասար է Ռէօմիւրեան 4° ին: Այս պատճառով ջերմութիւնը նշանակելու ժամանակ աստիճաններուն առջեւ կը դնեն Ռ. կամ Կ. տառը՝ գիտնալու համար թէ ո՞ր ջերմաշափով չափուած է:

## Զ Ո Ւ Ր

Երբ կաթուային մէջի ջուրը եռալ սկսի, շոգի կամ գոլորշի կը նշարենք և գիտենք որ այդ շոգին միեւնոյն եռացեալ ջուրն է: Ամէնքդ ալ տեսած էք օճառի պղպջակները: Շոգին ալ միեւնոյն տեսակէ ջրային պղպջակ մըն է մէջը օդով լեցուն: բայց այդ պղպջակները այնքան մանր, մաքուր, փայլուն են, որ զանոնք հասարակ աչքով կարելի չէ միշտ նշարել: Ահա գոլորշին կաթուային վրայէն կը բարձրանայ և կ'աներեւութանայ: Բայց ո՞ւր կը կորսուի: Անոր պղպջակները օ-

դին մէջ կը ցնդին և անտեսանելի կ'ըլլան: Ըսել է թէ՝ միայն այն ժամանակ կը տեսնուին, երբ շատ պղպջակներ միասին ժողվուին, զոր օրինակ կաթուային վրայ բաղնիքներու մէջ: Մենք կը չնշենք և մեր բերնէն ինչ-պէս և մեր ամբողջ մարմինէն գոլորշի գուրս կ'ելլէ օդին հետ: Այս բանը կրնաք տեսնել երբ տաք սենեակէն դուրս ելլէք դէպի ի պաղը: Ուրեմն այն սենեակէն ներուն մէջ, ուր մարդիկ կը բնակին, շոգի կը կազմուի: Շոգին ամէնէն աւելի կը գոյանայ տաքցած ջուրերէ, կերակուրներէ, թէեւ մենք միշտ չենք տեսներ զայն: Փորձի համար՝ ձմրան ցուրտ օր մը տաք սենեակին դուռը բա՛ց, և ահա՛ թանձր շոգի կը նշարես սենեադին մէջ: Ուրեմն անոր պղպջակները, որ առաջ ցրուած էին օդին մէջ, նոյն միջոցին ցուրտին ներդործութենէն սեղմուելով՝ միացած, թանձրացած և նշարելի եղած են: Եւ այսպէս շոգին կը գոյանայ ջուրէն: Արդեօք կարելի չէ՝ զայն նորէն ջուր գարձնել.

— Եթէ պաղ գաւաթմ մը կամ պաղ ջրով լի բաժակ մը բերես սենեակին մէջ, իսկոյն թէ՝ գաւաթմին և թէ՝ բաժակին վրայ կաթիլներ կը նշարես: կը նշանակէ այդ թէ սենեակին մէջ գտնուած անտեսանելի շոգին՝ պաղ ամաններու գպչելով՝ ո՛չ միայն թանձրացած, այլ և ջուր գարձած է և անկէ կաթիլներ գոյացած են: Միեւնոյն բանը կը պատահի նաեւ պատուհանի ապակիներուն վրայ, Երբ մարդ ցուրտ օդի մէջ է, քթէն ու բերնէն դուրս ելած շոգին ո՛չ միայն կը նշարուի, այլ և ջուրի նման կը հոսի անոր ընչացքէն ու մօրուքէն և մինչեւ անդամ ձիւն ու սառ կը գառնայ: Այդ կը նշանակէ թէ շոգիէն կարելի է միշտ անձրեւ (ջուր) յառաջ բերել: Բայց ի՞նչ կը կարծէք, միթէ շոգիացը՝ յառաջ բերել:

նելու համար ջուրը անպատճառ եռացնե՞լ հարկ է։ Գիտէք թէ թաց լաթը դուրսը բաց օդին և ցուրտէն կը չորնայ, մանաւանդ երբ հով ըլլայ, որովհետեւ հովը կը հեռացնէ անոր վրայէն ջուրի պղպջակները և այնպէս կ'օգնէ անոր շուտ չորնալուն։ Զգեստը թաց հագնիլը շատ վնասակար է, որովհետեւ ջուրը վրայէն շոգիանալով՝ սաստիկ կը պաղեցնէ մարմինը։ Դարձեալ նոյն խոկ սառոյցը դուրսը ցուրտ օդի մէջ կեցած ժամանակ կը հալի, որովհետեւ անկից ալ մաս մը շոգի կը դառնայ։ Այդ կը նշանակէ թէ ջուրը միշտ շոգիանալու ենթակայ է, բաւական է որ ամենափոքր տաքութիւն մը կենայ, եւ այդշափ տաքութիւն մինչեւ անդամ սառոյցի մէջ կը գտնուի։ Երբ կը տեսնենք որ գետերը սառեցան, օդը ցրտեց, ձիւն եկաւ, և մեր մորթն զգաց արտաքին օդին փոփոխումը, «ցուրտ է» կ'ըսենք, բայց աւելի ուղիղ կ'ըլլար եթէ ըսէինք թէ շատ քիչ տաքութիւն կայ։ Երբ ջերմաշափը  $-10^{\circ}$  ցրտութենէ մինչեւ  $-5^{\circ}$  ելլէ,  $5^{\circ}$  որ կ'ըսենք թէ եղանակը քիչ մը մեղմացաւ, օդը քիչ մը տաքցաւ, և շատ ուղիղ է, որովհետեւ այն ժամանակ եւս տաքութիւն կայ։

Այսպէս ուրեմն ջուրը ամէն ժամանակ կը շոգիանայ, թէ՝ ամառ թէ՛ ձմեռ, միայն թէ ամառը աւելի և ձմեռը քիչ։ Այսպէս ալ ամառը շոգիացումը աւելի առատ է՝ տաք քան թէ զով եղանակին, ցերեկը քան թէ գիշերը։ Սակայն տօթագին օրը կ'անցնի և մենք գիշերը միայն կը նշանակնք շոգին։ բայց այդ չը նշանակէր թէ ան գիշերը կը գոյանայ, այլ որովհետեւ ցերեկը ջերմութիւնը սաստիկ էր, գոլորշիները այնչափ տարածուած և մէկզմէկէ հեռացած էին որ անկարելի էր նշանակել, խոկ գիշերը՝ իրարու մօտենալով խտացած

են։ Արեգակը կը տաքցնէ զանոնք և վերստին տարածուելով կ'անյայտանան։ Երբ տաք եղանակէն յետոյ յանկարծ ցուրտ հով մը փշէ, օդը մառախուղով կը լեցուի, և այս կը նշանակէ թէ երկիրը ա'յնքան տաք է որ առատ գոլորշի կը գոյանայ, բայց արտաքին օդը յանկարծակի ա'յնպէս ցրտեց որ այդ գոլորշիները սեղմեց, թանձրացուց նոյն խոկ գոյացած պահուն, առանց թոյլ տալու որ երկրէս բարձրանան։ Գարնան և աշնան միջոցին յաճախ մէգ կը պատահի, որովհետեւ այդ եղանակներու մէջ օդն ընդհանրապէս խառնակ է և փոփոխական։ Երբ նոյն գոլորշին աննշմարելի կերպով բարձրանայ գէպի այնպիսի տեղեր ուր շարունակ ցուրտ կ'ըլլայ, այն ժամանակ մէգը մեզ մօտ չը կազմուիր, այլ երկնքի բարձրութեան մէջ և մենք զայն ամսկ կ'անուանենք։ Եթէ հեռուէն գիտես բաղնիքէն բարձրացող գոլորշին, այն ալ ամպ կը կարծես։ Ամպերը այլ և այլ բարձրութիւններու մէջ կը գտնուին, մէկ հազարամէթրէ սկսեալ մինչեւ 6—7 և աւելի։ Կան այնպիսի լեռներ որ ամպերէն բարձր են, անոնց վրայ մշտատեւ ձիւնն ու սառոյցն անպակաս կ'ըլլան, անոնցմէ սրբնթաց առուակներ կարկաջելով վար կ'իջնեն թաւալգըլըր։ Լերան ստորոտէն կը տեսնես որ ամպերը մէշտեղէն կը կտրեն զայն, կ'ելլես գէպի վեր և միայն թանձր մառախուղ շուրջդ կը նշանակես։ կը շարունակես ընթացքդ աւելի գէպի վեր, ամպերը քեզմէ շատ վար կը մնան, վարը ոտքերուդ տակ շատ անգամ անձրեւ կուգայ, կ'որոտայ, խոկ քեզմէ վեր գլխուդ վրայ պայծառ երկինք կը տարածուի։

Երբ օդին մէջ գոլորշիներ ժողվուին, ամպերը կը թանձրանան և անձրեւ կուգայ, այսինքն՝ այդ խառ-

նուածքէն յառաջացած կաթիլները իրենց յենարան եղող օդէն աւելի ծանրանալով՝ վար կը թափին։ Շատ անգամ կը պատահի որ ամպերը վար իջնելով ջերմ օդի կը հանդիպին, որով նորէն կը ցրուին և կ'անհետանան առանց անձրեւ տալու. այդ կը նշանակէ որ նոյն քիչ մը սեղմուած և թանձրացած փամփուշտներն իրենց իրարու խառնուելէն առաջ և դեռ կաթիլներ չը կազմած, ցրուեցան։ Ընդհակառակը՝ կը պատահի որ ամենապարզ բաց օդի մէջ անձրեւ կուգայ երբ յանկարծ պաղ հով մը փէց։ Հարկաւ անտեսանելի ջրային գոլորշիներ պաղ հովին ներգործութենէն արագութեամբ իրարու հետ ձուլուելով՝ կաթիլներ կը գոյացընեն, մինչդեռ մենք ո՛չ ամպ կը տեսնենք երկինքի վրայ և ո՛չ մէգ, տեսածնիս ալ շատ աննշան։

Երբ օդին բարեխառնութեան աստիճանը 0 էն վարէ, այն ժամանակ ջրային գոլորշիները որոշ բարձրութեան մը հասնելով և քիչ մը թանձրանալով՝ գտնուած տեղերնին կը սառին և զանազան ձեւեր կազմելով, աստղաձեւ, փետրաձեւ՝ վար կը թափին։ Ահա այդ սառած գոլորշիները ձիւն կը կոչուին։ Զիւնը մեղ մօտ երկրի վրայ ալ կարող է գոյանալ։ Գարնային կամ աշնային ցուրտ գիշերները՝ ցերեկը գոյացած և դեռ բաւական չբարձրացած գոլորշիներ, պաղած առարկաներու՝ այսինքն քարերու, խոտերու, ծառերու, տաշեղներու քսուելով, իրենք ալ կը սառին և անոնց վրայ կը նստին։ Այս տեսակ ձիւնը եղեամ կը կոչուի, թերեւս կարծէք թէ կարկուաը ալ ձմեռը գայ, բայց այդ կարծիքը ուղիղ չէ։ Կարկուաը ամառը կուգայ, վասն զի ամենաբարձր ամպերու մէջ կը գոյանայ, ուր մշտըն-ջենական ցուրտ կը տիրէ։ Յրտութենէ գոլորշիներն ի

մի ձուլուելով՝ կը գոյացնեն խոշոր կաթիլներ որ թէ՛ այդ բարձրութեան մէջ և թէ՛ ճամբան պաղելով կը պնդանան իրերեւ սառոյցի կտորներ և երկինքէն վար կը թափին։ Բայց ուրկէ՞ կը գոյանայ ցողը այդ մասին դեռ բան մը չըսինք։ Յողը ամառը կը գոյանայ, այն ալ պարզ գիշերները ջերմ ցերեկուընէ յետոյ։ Գուցէ դիտած էք թէ պարզկայ գիշերները աւելի զով կ'ըլլայ քան թէ մթին գիշերները. ասոր պատճառը այն է որ ջերմութիւնը, տաքցած երկրիս վրայէն բարձրանալով, պարզ գիշերուան մէջ ազատօրէն կը ցրուի և օդին մէջ կը կորսուի, իսկ մթին գիշերները՝ խաւարը արգելք կ'ըլլայ ջերմութեան բարձրանալուն և ետ կը մղէ զայն։ Այսպէս կ'ըլլայ նաեւ ձմեռ ատեն։ պարզ և անամպ օրերն աւելի սաստիկ ցուրտ կ'ըլլայ քան ամպոտ օրերը։ Այժմ հասկնալու է թէ ինչո՞ւ ամառուան պարզ գիշերները՝ ջրային փամփուշտները, որ իրիկուան դէմ կը բարձրանան երկրիս երեսէն, չեն կըրնար հեռու երթալ, և իսկոյն կաթիլներ կազմելով կը նստին պաղած առարկաներու վրայ։ Ո՛ր և է ծածկոցի կամ ծառի ներքեւ գրեթէ ցող չըլլար, որովհետեւ գետնի ջերմութիւնն ուղիղ գծով գէպի վեր բարձրանալով՝ կը զարնուի ծածկոցին կամ ծառի տերեւներուն և կ'անդրադառնայ։ Պարզկայ գիշերները՝ բացօդեայ տեղ մը՝ մէկ հարթ և մէկ ալ անհարթ տախտակ դի՛ր, միեւնոյն ժամանակ դի՛ր բուրդ, միանդամայն սեւ ու սպիտակ տախտակներ։ Առտուն կը տեսնես որ հարթ տախտակին վրայ աւելի քիչ կ'ըլլայ շաղը քան անհարթին, սեւ տախտակին վրայ շատ՝ քան թէ սպիտակին, իսկ բրդին վրայ կամ բնաւ չըլլար, կամ եթէ ըլլայ, գրեթէ աննշարելի։ Ինչո՞ւ. — որովհետեւ սեւ ու խորտ

ու բորտ առարկաները շուտ կը հաղորդեն ջերմութիւնը, շուտով կը տաքնան և շուտով ալ կը պաղին, հետեւաբար գիշերը անոնք աւելի շուտ կը սառին և անոնց շուրջն եղած գորշին անոնց քսուելով աւելի շուտ կը թանձրանայ, իսկ սպիտակ և հարթ առարկաներն՝ ընդհակառակն։ Բուրդը իբրեւ վատ հաղորդիչ տաքութեան, գրեթէ բոլոր ցերեկուան տաքութիւնը իր մէջ կը պահէ, ուստի և չ'ընդունիր ցող։ Հասկցա՞ք ուրեմն թէ ինչո՞ւ սպիտակ հագուստի մէջ ամառը աւելի զովութիւն կը զգանք քան սեւ հագուստի մէջ։ ինչո՞ւ նոր պղնձէ փայլուն ամանի կամ կաժսայի մէջ շուրը գժուարութեամբ և ուշ կը տաքնայ քան անփայլ ամանի մէջ, վասն զի փայլուն ամանը հարթ է և կոկ, իսկ անփայլը մուրով ու աղտով շրջապատուած։

Զուրը ուրիշ շատ իրեր կը լուծէ իր մէջ, աղ, շաքար, կիր, կենդանիներու և բոյսերու մասցորդներ, եւայլն։ Եւ որովհետեւ ջուրը գետերու և լիճերու մէջ հոսելով, հողի տակ մտնելով, ջրհորները լեցնելով, այլ և այլ առարկաներու հետ շարունակ շփումի մէջ է, այդ պատճառով բնութեան մէջ մաքուր ջուր չկայ։ ամենէն մաքուրը անձրեւի կամ ձիւնի ջուրն է։ Զուրը՝ եթէ իր մէջ կրային նիւթեր բովանդակէ, կը կոչուի կրային ջուր, և այն ատեն օճառը շատ գժուարութեամբ կը լուծուի անոր մէջ։ Ծովու ջուրը գառնահամ է, որովհետեւ այլ և այլ աղեր լուծուած են անոր մէջ։ Քանի մը տեսակ գետերու և լիճերու ջուրը լի է գործարանաւոր մարմիններու մասցորդներով, որով շուտ կը նեխի և վնասակար է խմելու համար։ Բայց ըստ ինքեան ո՛չ թէ ջուրը կը հոտի, այլ այն գործա-

րանաւոր մարմիններն որ անոր մէջ լուծուած են։ մաքուր և զուտ ջուրը միշտ միեւնոյնն է և երբէք չ'ապականիր։ Հանքային աղբիւրներու ջուրը ո՛ր հանքին մէջն որ անցնի, այն հանքին հոտը և շատ անգամ գոյնն իսկ կ'առնէ։ Եթէ ջուրը մաքրենք արտաքին խառնուրդներէն, շատ յստակ թափանցիկ կ'ըլլայ։ ո՛չ որոշ գոյն, ո՛չ հոտ և ո՛չ իսկ համ կ'ունենայ։

## ՄԱԳՆԻՍ

Ահաւասիկ երկաթէ փոքրիկ շերտ մը, որ ըստ երեւութիւն բնաւ առանձին յատկութիւն մը չունի և կարծես թէ ամենահասարակ երկաթի կտոր մըն է, բայց մէջը ծածկուած ունի առանձին հրաշալի զօրութիւն մը որ իսկոյն կը յայտնուի, եթէ այդ երկաթէ շերտը մօտեցնենք ասեղի մը կամ ո՛ր և իցէ երկաթէ կամ պողպատէ փոքրիկ առարկայի մը։ գեռ մենք ասեղին չի գպած՝ ան կը վազէ, կը փակչի երկաթի կտորին։ Առնենք ասեղը, միենք փոքրիկ խցանի մը մէջ, ամանի մը մէջ ալ ջուր դնենք և այդ խցանը վրան ձգենք որ լողայ, բայց այնպէս որ ասեղը ջուրի մակերեւոյթին հետ հորիզոնական գիրք ունենայ։ Լողացող ասեղը հեռուէն իսկ կը սկսի զգալ կախարդական շերտին մօտենալը, նփենք ասեղը մեր երկաթի շերտով՝ մէջտեղէն սկսելով և մինչեւ ծայրերը տանելով, բայց այնպէս որ ասեղին կէսը երկաթին մէկ ծայրով շփած ըլլանք, իսկ միւս ծայրովը միւս կէսը։ Այս ընելէ յետոյ՝ շերտին վրայ նշանակենք թէ անոր ո՞ր ծայրով շփեցինք ասեղին սուր կողմը և որո՞վ բութ կողմը։ ըսենք թէ այն

ծայրը . որով շփեցինք ասեղին սուր կողմը , նշանակե՞նք  
չ տառով , իսկ այն ծայրը՝ որով շփուած է բութ կողմը ,  
նշանակե՞նք չ' ով . այն ժամանակ հրաշալի երեւ-  
ոյթ մը կը տեսնենք : Երբոր չ' ծայրը մօտեցնենք ա-  
սեղին սուր կողմին , կը նկատենք որ ետ կը փախչի կամ  
իր բութ կողմը դէպի ան կը դարձնէ , իսկ եթէ չ նը .  
շանակուած ծայրը մօտեցնենք , ասեղը իր սուր կողմով  
կը մօտենայ շերտին : Յետոյ երբոր մօտեցնենք չ ծայրն  
ասեղին բութ կողմին — ան ետ կը փախչի . իսկ երբ  
մօտեցնենք չ' ծայրը — կը մօտենայ : Ասով դեռ կա-  
տարելապէս չի հասկցուիր մեր շերտին և անով շփուած  
ասեղին հրաշալիքը : Հեռացուցէ՛ք այդ երկաթի կտորը ,  
որովհետեւ ասեղը անկից ա՛յնպիսի զօրութիւն մը ստա-  
ցաւ , որ առաջ չունէր . նայեցէ՛ք թէ ի՞նչպէս անոր  
մէկ ծայրը միշտ միեւնոյն կողմը կը ձգտի , իսկ միւսը՝  
միշտ անոր հակառակ կողմը . դարձուցէ՛ք զայն ի՞նչ-  
պէս կ'ուզէք , ան նորէն անպատճառ իր ուղղութիւնը  
կը ստանայ : Ուշագրութամբ նայեցէ՛ք և կը տեսնէք  
որ ասեղին մէկ ծայրը միշտ դէպի հիւսիս կը նայի , իսկ  
միւսը՝ դէպի հարաւ , և ամենեւին չէք կրնար հար-  
կագրել որ դէպ արեւելք կամ արեւմուտք նային : Ան-  
կէ զատ , կը նկատէք նաեւ որ եթէ ասեղին սուր ծայ-  
րը դէպի հիւսիս կը նայի և բութը դէպի հարաւ , ոչ  
մէկ կերպով չէք կարող ստիպել զանոնք որ իրենց տե-  
ղերը փոխեն :

Ի՞նչ զօրութիւն է որ ասեղը դէպի այդ երկաթէ  
շերտը կը ձգէ , ի՞նչ է որ զայն ետ կը մղէ , ի՞նչ է որ  
զայն կը հարկագրէ իր մէկ որոշ ծայրն անպատճառ  
դէպի հիւսիս ուղղել և միւս ծայրը դէպի հարաւ . ոչ  
ոք դիտէ հաստատապէս : Սակայն մենք թէեւ այս ե-

րեւոյթին պատճառը չենք դիտեր , բայց կարող ենք  
մեծամեծ օգուտներ քաղել անկէ : Ըսենք թէ նկատե-  
ցինք որ ասեղին սուր ծայրը միշտ դէպի հիւսիս կը  
նայի , իսկ բութը՝ դէպի հարաւ , և այդ ասեղը ձեռ-  
ուընիս՝ մտանք անտառը որ մեր տան հիւսիսային կող-  
մը կը գտնուի . այն անտառին մէջ , երկար ատեն թա-  
փառելէ ետքը աջ ու ձախ , ենթագրե՞նք թէ ճանբան  
կորուսինք և վարանած մնացինք թէ ո՛ր կողմէն դուրս  
պիտի ելլենք : Գիտենք որ մեր տունը անտառին հա-  
րաւային կողմը կը գտնուի , բայց դժբաղդաբար չենք  
գիտեր թէ ո՞ր կողմն է հարաւը և ո՞ր կողմն է հիւսի-  
սը , որովհետեւ երկինքն ամպամած է և արեգակը  
ծածկուած : Կը յիշենք այն ատեն թէ փրկարար ասեղ  
մը ունինք , որ առանց արեգակի գիտէ թէ ո՛ւր է հիւ-  
սիսը և ո՛ւր է հարաւը : Դնենք զայն փոքրիկ տաշեղի  
մը վրայ և ձգե՞նք դիմացնիս ելած մօրին վրայ . ասե-  
ղին սուր ծայրը իսկոյն դէպի հիւսիս կ'ուզզուի , իսկ  
բութը դէպի հարաւ : Այնուհետեւ դժուար չէ մեզ  
դանել մեր գիտը :

Բայց այդ ի՞նչ շերտ է որ այդպիսի հրաշքներ կը  
գործէ : Սա պարզ պողպատի մը կտոր է և ինքն ալ  
ուրիշ նիւթէ մը ստացած է այն զօրութիւնը զոր կը  
հաղորդէ ասեղին : Դուք արդէն կը ճանչնաք մագնի-  
սաքարը . սա տեսակ մը երկաթահանք է որ մագնիսա-  
կան յատկութիւն ունի : Մագնիսաքարը ոչ միայն ինքն  
ունի այդ յատկութիւնն , այլ և կարող է այդ ոյժը  
հաղորդել պողպատէ կամ երկաթէ շերտերու , այն զա-  
նազանութեամբ միայն որ երկաթին մէջ մագնիսական  
յատկութիւնը կը մնայ քանի որ մագնիսի հետ հաղոր-  
դացկութեան մէջ գտնուի , իսկ ինչ կերպով որ շինե-

ցինք ասեղը՝ նոյն կերպով շփուած կարծր պողպատի  
մէջ շատ աւելի երկարատեւ կը մնայ:

Մագնիսի յատկութիւնը վաղուց յայտնի է, բայց  
Եւրոպայի մէջ դեռ ոչ ոք գիտէր թէ ի՞նչ ծառայու-  
թիւն կրնայ մատուցանել: Միայն ժԴրդ գարուն մէջ  
ձիոյա անուն իտալացի մը մտածեց մագնիսացած ա-  
սեղը նաւարկութեան գործածել: Մինչեւ այդ ժամա-  
նակ նաւորդները արեգակէն, լուսնէն և աստղերէն  
կ'առաջնորդուէին, իսկ ամպոտ կամ մառախլապատ  
օրերը բնաւ չէին գիտեր թէ ո՛ւր կ'երթային: Այս  
պատճառաւ է որ հին ժամանակները նաւարկութիւնը  
յոյժ սահմանափակ վիճակի մէջ էր: Այս նպատակաւ  
կը շինեն փոքրիկ տուփ մը, որուն կեդրոնը ցցուած է  
սուր և բարակ առանցք մը և առանցքին վրայ ան-  
ցուած է մասնաւորապէս ատոր համար շինուած պող-  
պատէ մագնիսացած ուլաք մը, բայց այնպէս որ ան  
կարողանայ աղատ շարժիլ առանցքին վրայ: յետոյ  
տուփին երեսը կը ծածկեն ապակեայ խուփով մը, ո-  
րուն վրայ կը յանդի առանցքին մէկ ծայրը: Ալաքին  
գէպ ի հիւսիս ուղղուած ծայրին գիմաց նշանակուած  
է N տառը Nord—հայերէն Հիւսիս), իսկ հակառակ  
կողմը S (Sud—Հարաւ): Միւս երկու կողմերը նշանա-  
կուած են Արեւելք և Արեւմուտք: Յետոյ այդ գլխա-  
ւոր կողմերու մէջ երկրորդական բաժանումներ նշանա-  
կուած են, ինչպէս Հիւսիսային արեւելք, Հիւսիւսա-  
յին արեւմուտք, Հարաւային արեւելք, Հարաւային  
արեւմուտք, եւայլն: Այս պարզ գործիքին օգնու-  
թեամբ մարդիկ համարձակ կը ճամբորդեն մեծա-  
մեծ ծովերու վրայ: Սա կողմնացոյց կը կոչուի: Աշ-  
խարհագրական նշանաւոր գիւտերուն ամէնն ալ կողմ-

նացոյցին շնորհիւ եղած են և անոր հնարուելէն յետոյ:  
Տեսէք ո՛րչափ շահաւէտ է մեզ բնութեան օրէնքնե-  
րուն ծանօթ ըլլալն, և ո՛րչափ մեծամեծ օգուտներ  
ունի և կարող է ունենալ այդ փոքրիկ սլաքը, բաւա-  
կան է որ կարողանանք ուշադիր գիտող ըլլալ և մեր  
գիտողութիւններն պէտք եղածին պէս արդիւնաւորել:

### ԵԼԵՔՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱԳՆԻՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Գիտէք արդէն թէ տեսակ մը քար կայ, որ մագնիս  
կը կոչուի և երկաթը իրեն կը քաշէ: Ահա այս իրեն  
քաշելու զօրութիւնը կը կոչուի մագնիսականութիւն: Արեգակն իրեն կը քաշէ լուսինն ու երկիրն, և այս քա-  
շողութիւն կը կոչուի ձգողութիւն: Երկիրը գէպ ի իրեն  
կը քաշէ լուրը, քարը, տունը, մարդիկ, կենդանինե-  
րը, մէկ խօսքով երկրիս երեսը գտնուող ամէն առար-  
կաններն: Այս ալ կը կոչուի ծանրութիւն: Երբ կ'ըսենք  
թէ ամէն բան իրեն ծանրութեան պատճառով երկրի  
վրայ կ'իյնայ, կը նշանակէ թէ անոնք ամէնքն ալ ձգո-  
ղութիւն ունին գէպ ի երկիր. մէկ խօսքով միեւնոյն  
զօրութիւնն է և միայն անունները տարբեր են. Մագ-  
նիսին համար այդ ոյժ կը կոչուի մագնիսականութիւն,  
արեգակին համար՝ ձգողութիւն, իսկ երկրի համար՝  
ծանրութիւն: Իսկ երբ այդ միեւնոյն զօրութիւն երե-  
ւի միւս առարկաններու մէջ փոխադարձաբար, այն ժա-  
մանակ կը կոչուի ելեկտրականութիւն:

Ահաւասիկ սա՛ թղթի կտորը զոր գերձանաթելի մը  
ծայրէն կապեր եմ: տեսէք, հազիւ թէ ոսպի մը մե-  
ծութիւն ունի: Արդ, երբոր բոնենք թելին վերի ծայ-

րէն, այնպէս որ թուղթն առկախ օրօրի, և սա սաթի կտորը ըոպէի մը չափ մեր զգեստին քսալէ յետոյ՝ մօտեցնենք թելին, կը տեսնէք ահա թէ թուղթը ցատկեց, սաթին կպաւ:

Այժմ սաթը մէկդի թողում և ձեռքս առնեմ ապակին: Ահա կոտրած գաւաթի մը կտոր. բրդէ բանով մը, զոր օրինակ իմ ասուեղէն գտակովս շփելէ յետոյ թղթին մօտեցնեմ, կը տեսնէք թէ թուղթը դարձեալ ցատկեց ապակիին կպաւ: Այժմ մէկդի թողում ապակին, առնեմ կնքամոմն որով նամակներ կը կնքենք: Շփեմ զայն և մօտեցնեմ թղթին, դարձեալ նոյն երեւոյթ: Կը տեսնէք ահա թէ ամէն նիւթի հետ գրեթէ նոյն բանը կը պատահի. ամէն նիւթ դէպի ի իրեն կը ձգէ մի ուրիշ նիւթ, միայն պէտք է գիտնալ թէ ինչով պէտք է շփել զայն: Նիւթերու այս դէպի ի իրարու ունեցած ձգողական զօրութիւնը կը կոչուի ելեցրականութիւն: Բայց այս զօրութիւն ձգողութենէ զատ ուրիշ յատկութիւն մըն ալ ունի, այն է ետ մղելու յատկութիւն: Առնենք գերձանաթել մը, բայց ոչ թէ քթանէ՝ այլ մետաքսէ, և ծայրէն կախենք թղթի կըտոր մը: Շփենք կնքամոմն և թղթին մօտեցնենք: Կը տեսնէք որ թուղթը թռչելով կպան կնքամոմին: Կը րկնենք այս փորձը, այս անգամ կը տեսնենք որ թուղթը չի մօտենար կնքամոմին, ընդհակառակն կը փախչի և հանդիպակաց կողմը կը հակի. բայց ես կրնամ հաշտեցնել այդ երկու նիւթերը, բաւական է որ մատովս դպչիմ թուղթին: Կը տեսնէք ահա թէ թուղթն իսկոյն վազեց կնքամոմին կպաւ:

Բայց ելեքտրականութիւնը նիւթերն իրեն ձգելէ և ետ մղելէ զատ ուրիշ յատկութիւն մըն ալ ունի, կը

ճայթէ և կայծեր կ'արձակէ: Կայծերն այժմ չեն տեսնուիր՝ որովհետեւ շատ լոյս է, իսկ ճայթիւնը կրնաք լսել: Եթէ մութ սենեակի մը մէջ ըլլայինք, կայծերն ալ կը նշմարէիք: Արդ շփեմ ու տրորեմ կնքամոմն ու ձեզմէ մէկը թող գայ եւ մատը վրան քաէ': Ահաւասիկ թեթեւ ճայթիւն մը կը լսէք և թեթեւ ցնցում մը կը զգաք ձեր մատին վրայ: Եթէ մութ ըլլար, կայծերն ալ կը տեսնէիք: Ահա այս է կայծակն և որոտումն, արդիւնք օդին մէջ հաւաքուած ելեքտրականութեան: Ինչ որ այժմ փոքր շափով մը կը տեսնէք հոս, նոյնը մեծագոյն քանակութեամբ տեղի կ'ունենայ երկնքին մէջ: Երբոր երկնքին մէջ ամպ ամպի պատահի, ճայթիւնն ահագին որոտում կը դառնայ, իսկ աղօտ կայծը՝ սարսափելի շանթ, այնպէս որ մարդիկ ոչ թէ թեթեւ ցնցում մը կը զգան անկէ, այլ անորհարուածէն կը մեռնին, խատի դէզերը կ'այրին, ծառերը կը խորտակին կամ կը ճեղքուին:

Ելեքտրականութիւնը շափազանց կերպով կը ժողվուի չոր և տաք եղանակին մէջ, ինչպէս այժմ: Այս վայրկեանիս մէջ ըրած փորձերս չէի կրնար ընել ձրմբան խոնաւ եղանակին մէջ: Եւ ինչպէս որ այս փորձեր կը յաջողին ամրան չոր եղանակին մէջ, այնպէս ալ ուրոտումը գլխաւորապէս ամառը տեղի կ'ունենայ, և այդ ալ ուրիշ բանէ չկրնար յառաջանալ, եթէ ոչ օդին մէջ ժողվուած ելեքտրականութենէն: Եթէ այս բանի վերահասու ըլլային մարդիկ, չէին կրնար կայծակին արդելք դնել:

Դործիք մը կայ որ շանթարգել կամ շանթաձիգ կը կոչուի: Այն տունը, որու վրայ շանթարգել դրուած է, երբէք չի զարնուիր կայծակէ և չայրիր: Տան վրայ որ-

րածայր երկաթէ ձող մը կը տնկեն։ Այս սուր ծայրը միեւնոյն է երկնային ելեքտրականութեան համար ինչ որ ձեր մատին մէջ գտնուած խաղալիկին համար է կնքամոմը։ Ոնոր վրայէն կը սահի կ'ընթանայ օդին մէջ եղած ելեքտրականութիւնը։ Չողին ստորոտը կապուած է շղթայ մը, որ պատերուն դրսի երեսէն կախուելով՝ միւս ծայրը գացած հողին մէջ մտած է։ Տան վրայ և անոր շրջակաները օդին մէջ գտնուած բոլոր ելեքտրականութիւնը շանթարգելի միջոցաւ շղթային կ'անցնի, հողին մէջ կը մտնէ, որով տանիքներուն վրայ մեծ քանակութեամբ շնար ու երկնային կայծակէն ու որոտումէն չի ճայթիր։

Կը յիշէք որ քիչ մը առաջ ըրած փորձիս մէջ թուղթին կտորը մետաքսաթելի մը ծայրը կապեցի, ի՞նչ էր պատճառը։ Որովհետեւ հասարակ թելի մէջէն ելեքտրականութիւնը դիւրաւ կը հոսէր, իսկ մետաքսէ թելին մէջէն ամենեւին չէր հոսեր երբ կնքամոմը թղթին կը մօտեցնենք, թուղթն ալ կնքամոմէն ելեքտրականութիւն կը ստանայ։ Եթէ ճամբայ գանէ՝ ելեքտրականութիւնը դուրս կը հոսի, անկէ կը մտնէ թելին մէջ, թելէն ձեր մատներուն և մատներէն ալ ամբողջ մարմոյն մէջ, մարմէն ալ հողին մէջ, այնպէս որ թղթին մէջ ամենեւին ելեքտրականութիւն չի մնար։ Այդ պատճառաւ ալ երբ երկրորդ անգամ կը մօտեցնեմ անոր կնքամոմը՝ դարձեալ կը դպչի։ Ընդհակառակն երբ թուղթը մետաքսէ թելէ կախուած է, միանգամ իր մէջ ելեքտրականութիւն ստանալէ յետոյ ճամբայ չունի դուրս հոսելու, որովհետեւ մետաքսը ելեքտրականութիւն շընդունիր։ Այս է պատճառն որ երբ կը կին անգամ կը մօտեցնենք անոր կնքամոմը, ան բա-

ւական ելեքտրականութիւն ունենալով իր մէջ կը փախչի անկից։ Միեւնոյն օրէնքներու վրայ հիմուելով հնարուած է հեռագիրն, այն որ ձողերու վրայէն կը տարածուի դէպ ի հեռաւոր աշխարհներ։ Չողերուն վրայ ձգուած են երկաթի թելեր, որոնց մէջէն ելեքտրականութիւնը դիւրաւ կը հոսի. իսկ եթէ այդ թելերը մետաքսեայ ըլլային, ելեքտրականութիւնը չէր հոսեր անոնց մէջէն, հետեւաբար և մենք չէինք կը ընար մտքերնիս հաղորդել հեռաւոր երկիրներ։

---

# ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Ի՞ՆՉՊԵՍ ՊԷՏՔ Է ՀԱՆԵԼ ՏԵՂԻ ՄԸ ՅԱՏԱԿԱԳԻԾԸ

Տեղի մը յատակագիծն հանելու համար հարկ է նախ չափել անոր երկայնութիւնն ու լայնութիւնը՝ Ենթադրենք, օրինակի համար, թէ սենեակի մը յատակագիծն հանել կ'ուզենք: Ասոր համար պէտք է առնել փոքրիկ գիծ մը, համարենք թէ մէկ կամ կէս բըթաշափ, և կանգունի տեղ ընդունիլ զայն: Եթէ՝ օրինակի համար՝ սենեակին երկայնութիւնն  $9\frac{1}{2}$  կանգուն է, պէտք է թղթի վրայ գծել  $9\frac{1}{2}$  բթաշափ՝ քու ընդունած չափիդ համեմատ: Երկայնութեան գիծը չափեցիր ու նշանակեցիր. ծայրէն ուղղահայեաց գիծ մը կը քաշես, որով ուղիղ անկիւն մը կը կազմուի, և վրան կը նշանակես լայնութիւնը: Համարենք թէ սենեակին լայնութիւնը վեց կանգուն է, դուն ալ այդ գծին վրայ կը նշանակես քու չափով վեց: Վեց բթաշափ նշանակելէդ յետոյ երկայնութեան գծիդ միւս ծայրը լայնութեան գծին զուգահեռական երկրորդ գիծ մը կը քաշես, այդ նոր գիծն ալ վեց բթաշափ երկնցնելէ յետոյ չորրորդ գծով մը երկու լայնութեան գիծերուն բաց ծայրերը կը միացնես, բնականաբար այդ չորրորդ գիծն առաջին գիծին զուգահեռական կ'ըլլայ: Այսպէս կ'ունենաս քառանկիւնի պատկեր մը որ փոքրիկ գիրքով կը ցուցնէ քեզ սենեակին յատակն: Յետոյ այդ պատկերին իւրաքանչիւր գիծն իրեւ հիմ առնելով՝ նոյն կարգաւ կը կանգնես անոր վրայ սենեակին պատերը: Պատերուն վրայ չափելով կը նաև նշանակել թէ ուր են

լուսամուտները, գոները, վառարաններն, եւայլն: Այսպէս շարունակելով՝ կրնաս ամբողջ շինութեան յատակագիծն հանել իր բոլոր սենեակներով, մէն մի սենեակ առանձին չափելով և իրարու կցելով: Երկայն չուան մը իրեւ չափ առնելով, կարող ես մինչեւ անգամ այգին, պարտէզին և ձեր տան շրջականներուն յատակագիծն հանել: Բայց որչափ ընդարձակ տեղի կամ մեծ շինութեան մը յատակագիծն հանելու պէտք ունենաս, նոյնչափ պէտք է փոքրացնես ընդունած չափդ: Այդպիսի յատակագիծներու վրայ սենեակ մը իր ամէն մանրամասնութիւններով կարելի չէ գծել: Այն փոքրիկ գիծը, զոր կ'ընդունիս իբր կանգուն կամ մէթը և կամ մղոն, և որով կը չափես տան մը, գաշտի և կամ ամբողջ նահանգի մը յատակագիծը, կը կոչուի աստիճան: Ահա այս պատճառաւ կ'ըսուի թէ յատակագիծը մեծ կամ փոքր աստիճանով շինուած է:

## ՀԵՌՈՒ ԵՒ ՄՕՏ

Ով որ սուր աչք ունի, կրնայ կանգուն մը հեռաւորութենէ իսկ լաւ կարդալ. բայց եթէ գիրքն հինգ կամ վեց կանգուն հեռացնենք, այն ժամանակ մինչեւ անգամ ամէնէն հեռաւես մարդը միմիայն սեւ գիծ մը կը տեսնէ և առ առաւելն խոշոր գլխատառերն կրնայ որոշել: Թող մէկը ձեռքն առնէ գիրքը, ձեր կրնայ որոշել: Թող մէկը ձեռքն առնէ գիրքը, ձեր առջեւ բռնէ անոր բաց երեսն և շարունակ հեռանայ ձեզմէ, 14—15 կանգուն հեռաւորութենէն տողերը կ'անհետանան, հարիւր քայլ հեռաւորութենէն ամբողջ կ'անհետանան, հարիւր քայլ հեռաւորութենէն ամբողջ գիրքն սպիտակ կէտի մը նմանութեամբ կ'երևայ, եթէ գիրքն սպիտակ կէտի մը

10—15 կանգուն եւս հեռանայ՝ ոչ միայն անկարելի կ'ըլլայ որոշել թէ ի՞նչ է ձեռքը բռնածն, այլ մինչեւ անդամ հեռացողին դէմքը ճանչնալ դժուար կ'ըլլայ։ Հինգ վեց մղոն հեռաւորութենէ մարդ մը ինքնին հա զիւ տեսանելի կէտ մը կը դառնայ, մինչեւ իսկ անշարժ կէտ մը, թէեւ ամենայն արագութեամբ քալէ։ Քանի մը կանգուն եւս հեռանալով՝ այդ անշարժ կէտն ալ կ'անյայտանայ։

Դուցէ տեսած էք թէ ի՞նչպէս արծիւը կամ անդղը ծառի կամ ժայռի վրայէն թռչելով արագապէս կը բարձրանան։ Նախ շատ որոշ կը նշմարէք անոնց լայն թեւերը, պոչն և գլուխը, բայց վայրկեան մը յետոյ արագաթուիչ թեւաւըն իրբեւ սեւ ու անշարժ բիծ մը կ'երեւի ձեզ, թէեւ արագութեամբ շարունակէ թըռչիլ։ Մէկ երկու վայրկեանէն բիծը կէտ մը կը դառնայ յետոյ նոյն իսկ կէտը կ'աներեւութանայ կապոյտ երկնակամարին վրայ։

Բոլոր առարկաները, որքան ալ մեծ ըլլան, տներ, եկեղեցիներ, հսկայաձեւ սօսիներ, ահագին սարեր, ամէնն ալ կը փոքրանան մեր աչքերուն առջեւ, և այնչափ՝ ո՛րչափ հեռանանք անոնցմէ, և եթէ ըսեն ձեզ թէ այն գիծը, զոր դուք կը նշմարէք հորիզոնին վրայ, ձեզնէ տասը մղոն հեռու է, դուք գիտնալով որ առարկաները կը փոքրնան հեռաւորութեամբ, ի հարկէ վեր ի վերոյ կրնաք ըմբռնել թէ ձեզ երեւցածին չափ փոքր չէ։ Իսկ եթէ հորիզոնին վրայ 50—60 մղոն հեռաւորութեամբ առարկայ մը տեսնէք, անկասկած կը մտածէք թէ ան մեծ լեռ մը պէտք է ըլլայ։

Բայց ի՞նչ կը մտածէք, եթէ ըսեմ ձեղ թէ լուսինն, որ սկուտեղի մը չափ կ'երեւայ ձեզ, գրեթէ 400 հա-

զար մղոն մեզմէ հեռու կը գտնուի։ Այնուհետև դուք ի հարկէ կը հաւատաք որ լուսինն իսկապէս մեծ մարմին մըն է։ ան 49 անգամ միայն փոքր է այն երկրէն որու վրայ կ'ապրինք։ Իսկ արեգակն, որ լուսինէն քիչ մը փոքրագոյն կ'երեւայ, մեզմէ շատ աւելի հեռու է քան թէ լուսինը։ Կրնաք երեւակայել ուրեմն թէ որքան ահագին պէտք է ըլլայ ան, երբ 150 միլիոն մղոն հեռաւորութենէ գեռ այդ մեծութեամբ կ'երեւայ մեզ (արեգակն ուրեմն չորս հարիւր անգամ աւելի հեռու է քան թէ լուսինը)։ Կան շատ աստղեր, որ արեգակէն շատ աւելի հեռու են, ուրեմն ո՛րքան մեծ պէտք է ըլլան անոնք, քանի որ այնչափ հեռաւորութենէ կը տեսնենք զանոնք։

## Ե Ր Կ Ւ Ր

Այսպէս աստղերն, որ մեզ կ'երեւան իբրեւ փայլուն առկայծեալ կէտեր, մեծամեծ աշխարհներ են և անոնց վրայ միլիոնաւոր մարդիկ կրնան արձակ համարձակ տեղաւորուիլ։ Արդեօք անոնց վրայ մարդիկ կը բնակի՞ն թէ ոչ. մենք չենք գիտեր։ Գիտենք միայն որ եթէ այդ աստղերէն մէկին վրայէն կարենային գիտել մեր երկիրը, սա կամ բոլորովին պիտի շտեմնուեր, կամ միւս աստղերուն նման փոքր ու փայլուն կէտ մը պիտի երեւար։ Եթէ սակայն այդ կէտին վրայ հազարաւոր միլիոն մարդիկ կան, անոնց քաղաքներուն և գիւղերուն, այդիներուն, դաշտերուն և անտառներուն համար ամբաւ տեղ կայ։ Անոր վրայ դեռ շատ անմարդաբնակ անապատներ կան, թէեւ  $\frac{2}{3}$  մասն ալ ծած-

կուած է ջրով, ովկիանոսներով ու ծովերով, թողունք լիճերն ու գետերը:

Նատ բնական է որ մարդ գիտնայ թէ ի՞նչ ձեւ ունի այն երկիրը որու վրայ ինք կը բնակի: Բայց ի՞նչպէս: Մենք գիտենք որ մարդս առարկաներու ձեւը տեսանելիքի և շօշափելիքի միջնորդութեամբ կ'ըմբռնէ, և երբ կ'ուզենք խնձորին ձեւն ի միտ առնել, ձեռքերնիս կ'առնենք զայն և ամէն կողմէ ուշի ուշով կը զննենք: Բայց այդպէս կարելի չէ շօշափել երկիրն: Երեւակայեցէ՛ք թէ եկեղեցիի մը ահագին գմբէթին վրայ փոքրիկ մրջիւն մը կը քալէ և կը ցանկայ ըմբռնել անոր ձեւն: Ի հարկէ շատ դժուար է գաղափար մը ունենալ անոր ձեւի մասին: Մարդս համեմատելով երկրի հետ՝ աւելի փոքր է քան ամէնէն փոքր մրջիւնը բաղդատամամբ գմբէթի հետ: Բայց և այնպէս մարդս շրջելով, ճանապարհորդելով երկրի վրայ, կարողացաւ վերջապէս հասկնալ թէ Աստուած մեծ գունէտի մը ձեւ տըւած է երկրիս:


Երբ մարդ պատահմամբ կը ճանապարհորդէր ծովերու կամ լայնատարած դաշտերու վրայ, և երբ անտառներ կամ լեռներ չէին խափաներ անոր տեսութիւնն, այն ժամանակ կը տեսնէր որ երկիրն իրբեւ թէ կը կցուէր երկինքին: Պէտք չէ զարմանալ թէ մարդիկ երկրիս գնտածեւ ըլլալը գուշակելէ առաջ՝ տափակ և բոլորածեւ մարմին մը կը համարէին զայն: բայց եղան խելացի մարդիկ որոնք գուշակեցին թէ այդպէս չէ և երկիրը ծայր չունի, ինչպէս չունի գունտը: Բայց սակաւաթիւ էին այնպիսի մարդիկ և անոնց գրեթէ չէին հաւատար միւսները: Վերջապէս մարդիկ սորվեցան հաստակառոյց նաւեր շինել, որոնցմով սկսան նաւարկել

ծովերու վրայ. այսպէս շարունակ գէպ առաջ գացին, բայց երբէք երկրիս ծայրը չը գտան: Հուսկ ուրեմն գտնուեցան այնպիսի համարձակ անձեր որ առաջ երթալով՝ հակառակ կողմէն հասան այն տեղն ուսկից որ մեկնած էին: Ճանքան բնաւ անդունդի չի պատահեցան, և միշտ կը կարծէին թէ հարթ մակերեւոյթի վրայ կ'ընթանային: Միեւնոյնը պիտի պատահէր միջատի մը՝ եթէ ան ուղղակի պտըտէր գմբէթի մը շուրջն առանց ետ դառնալու, այսինքն միւս կողմէն անպատճառ պիտի հասնէր այն տեղն ուսկից ճամբայ ելած էր:

**ԵՐԿՐԻ ԱՌԱՆՑՔ, ԲԵՒԵՌՆԵՐ, ՀԱՍԱՐԱԿԱԾ  
ԵՒ ԵՐԿՐԻ ԳՈՏԻՆԵՐ**

Առէ՛ք կլոր դրամ մը և մաքուր սեղանի մը վրայ շոնչանի նման իր վրայ գարձուցէ՛ք, կը տեսնէք որ ընդհանրապէս միեւնոյն տեղը կը դառնայ: Մօտէն ուշադրութեամբ նայեցէ՛ք և կը տեսնէք նաեւ որ այդ դրամն սաստիկ արագութեամբ դարձած ժամանակ՝ կէս թափանցիկ գունտի մը պէս կը թուի ձեզ և մէջտեղը սեւ գիծ մը կ'երեւայ: Կեցուցէ՛ք այդ դրամն և այն ժամանակ գիծ չէք գտներ անոր վրայ: Ի՞նչ գիծ էր այն զոր տեսանք դրամին դարձած ժամանակ: Այդ գիծ դրամին մէջտեղի այն երեւակայական գիծն է որ իր տեղը չի փոխեր և որու վրայ դրամն արագութեամբ դառնալով կէս թափանցիկ գունտի մը ձեւով կ'երեւայ մեզ: Միւսնոյն դրամը ձեր երկու մատներուն մէջ այնպէս բռնեցէ՛ք որ եթէ անոր մէկ կողմին միւս մատով զարնէք՝ ան սկսի դառնալ. դարձեալ կը

տեսնէք որ անոր կէտերը կը շարժին, բաց ի այն երկու կէտերն որ ձեր մատներով բռնուած են. Դրամբ ձեր մատներուն մէջ դարձած ժամանակ ալ նոյն երեւոյթը կը տեսնուի, այսինքն երկու անշարժ կէտերու մէջ թխագոյն գիծ մը կը նշմարուի: Միեւնոյն երեւոյթը կը տեսնէք եթէ՝ փոխանակ դրամի՝ ընկոյզ մը կամ խնձոր մը նոյն ձեւով դարձնէք, սա տարբերութեամբ միայն որ թխագոյն գիծը չ'երեւար, զի խնձորին մէջ ծածկուած կը մնայ:



Որովհետեւ երկիրն ալ ինքն իր վրայ դարձող գունտ մըն է, այդ պատճառաւ անոր մէջ եւս պէտք է երկու այնպիսի կէտեր գտնուին, որ այդ պահուն իրենց տեղերը չի փոխեն: Երկրագնտիս վրայ այդ երկու կէտերը բեւեռ կը կոչուին, մին հիւսիսային, միւսը հարաւային: Իսկ այն գիծն, որ այդ երկու բեւեռները կը միացնէ, կը կոչուի առանցք: Առանցքն հիւսիսային և հարաւային բեւեռները միացնելով՝ ուղղակի երկ-

րիս մէջտեղէն և կեդրոնէն կ'անցնի: Եթէ հնար ըլլար երկրագունտը մէջտեղէն երկու մասի ճեղքել, ինչպէս կը ճեղքենք խնձորը, ի հարկէ առանցք չէլնք տեսներ հոն, բայց ուրիշ շատ հետաքրքրական երեւոյթի մը կը հանդիպէինք. կը տեսնէինք որ երկրիս մակերեւոյթը միայն պինդ կեղեւով ծածկուած է, մինչդեռ անոր մէջի մեծագոյն մասը պինդ կեղեւէն աստիճանաբար հեռանալով, տաքցած և ջերմութեան սաստկութենէն հալած է և վերջապէս երկրիս մէջ տեղ հեղուկ բաղադրութիւն մը կը ներկայացնէ:

Եթէ գուք վերոյիշեալ կերպով դարձող դրամին վրայի երկու անշարժ կէտերէն զանազան հեռաւորութեամբ գիծեր քաշէիք, հետեւեալ երեւոյթը կը տեսնէիք. ձեր նշանակած գիծն ո'րչափ հեռու ըլլար անշարժ կէտէն, նոյնշափ անոր կազմած շրջանակն ալ համեմատաբար մեծ պիտի ըլլար միւսներէն: Կը տեսնէիք նմանապէս որ միատեսակ մեծութեամբ շրջանակ կազմող կէտերն երկու հատ են, մին դրամին մէկ երեսին մօտ դարձող, իսկ երկրորդը՝ միւսին. վերջապէս կը տեսնէիք թէ այն միջին կէտն, որ երկու անշարժ կէտերէն հաւասարապէս հեռի կը գտնուի, մեծագոյն շրջանակը կը կազմէ: Միեւնոյն բանը կ'ըլլայ երկրագնտիս վրայ. ուրեմն անոր զանազան կէտերն այլեւայլ մեծութեամբ շրջանակներ կը կազմեն երկրիս դարձած ժամանակ: Ամէնէն մեծ շրջանը կը կազմէ այն կէտն որ երկու բեւեռներէն հաւասար հեռաւորութիւն ունի: Երկու բեւեռներէն հաւասար հեռաւորութիւն ունեցող ամենամեծ շրջան կազմող կէտերը միաքով իրարու հետ միացնելով յառաջ կուգայ շրջանակ մը որ գոտիի նման երկրագնտին մէջքին կը կապուի և


զայն երկու հաւասար մասի կը բաժնէ, հիւսիսային և հարաւային: Իսկ այդ շրջանակը կը կոչուի հասարակած: Արուեստական երկրագունդերու վրայ կը գտնէք այդ գիծն: Իսկ բուն երկրիս վրայ՝ ի հարկէ այդպիսի գիծ չկայ. ուրեմն ան ալ առանցքին նման ենթադրուած գիծ մըն է: Ըսինք թէ հասարակածը երկիրս երկու հաւասար մասի կը բաժնէ. մին կը կոչուի հիւսիսային կիսագունդ, իսկ միւսն հարաւային: Միեւնոյն ձեւով ուրիշ վերացական գիծ մը կ'անցնի հիւսիսային բեւեռէն գէպի հարաւային բեւեռ որով երկիրն իր երկայնութեամբ երկու հաւասար մասի կը բաժնուի, արեւելեան և արեւմտեան: Այդ գիծ կը կոչուի միջօրէական: Քիչ մը խորհելով կարող էք ճիշդ ըմբըռնել որ միջօրէականն երկու տեղէն կը կտրէ հասարակածը. նոյնպէս դժուար չէ հասկնալ որ երկրագնուին վրայ մէկ հասարակած միայն կարելի է քաշել, մինչդեռ միջօրէականներն, որ անհամար կ'ըլլան, ամէնն ալ բեւեռային կէտերէն կ'անցնին և հաւասար երկայնութիւն կ'ունենան: Արհեստական երկրագնուին վրայ դուք այնպիսի միջօրէականներ շատ կը տեսնէք, որոնց մին, որ մէրը կղզիին մօտէն կ'անցնի և երկիրն երկու կիսագունդի կը բաժնէ, կը կոչուի զլիսաւոր միջօրէական:

Մարդիկ գիտեն որ հասարակածին երկու կողմը տաք կ'ըլլայ միշտ և որքան գէպի ի հիւսիս կամ գէպի հարաւ երթանք, այնքան եղանակը կը ցրտանայ ու կը մեղմանայ. իսկ բեւեռներուն մօտ ցուրտն այնքան կը սաստկանայ որ ճամբորդութիւնն անգամ կը դժուարանայ: Այս գիտողութեամբ մարդիկ երկիրը քանի մը գօտիներու են բաժնած: Հասարակածին երկու

կողմերն, ուր մշտնջենական ամառ կը տիրէ, այրեցեալ գօտի անուաներ են, որովհետեւ իրաւ ալ այդ անդուանք արեգական ճառագայթները սովորականէն աւելի կիզիչ են: Այրեցեալ գօտիէն գէպի ի հիւսիս և գէպի ի հարաւ՝ այն տեղուանքը, ուր եղանակը կը բարեխառնի, ուր մշտնջենական հեղձուցիչ ամառուան տեղ տարւոյն չորս եղանակներն իրարու կը յաջորդեն, կը կոչուին բարեխառն գօտիներ, հիւսիսային և հարաւային: Բարեխառն գօտիներէն գէպի ի հիւսիս և գէպի ի հարաւ մինչեւ նոյն իսկ բեւեռներն, ուր յաւիտենական սառոյց կը տիրէ, կը կոչուի սառուցեալ գօտի որ նոյնպէս երկու է, հիւսիսային և հարաւային: Այս գօտիներէն որուն մէջ որ գտնուի երկիր մը, անոր համապատասխանող կլիմայ կ'ունենայ: Ափրիկէի ներքին անապատներն, ինչպէս նաեւ հասարակածին շատ մօտ գտնուած երկիրները, բնաւ բոյս չեն արտադրեր այդ կիզիչ ջերմութեան պատճառով. լայնատարած երկիրներ աւազով միայն ծածկուած են: Նոյնպէս Հիւսիսային Սառուցեալ Ովկիանոսի ափերուն վրայ ցուրտին սաստկութենէն բուսաբերութիւն յառաջ չի գար և երկիրը մշտնջենաւոր ձիւնի ներքեւ թաղուած է: Միայն բարեխառն երկիրներու մէջ Աստուծոյ տուրքն առատապէս կը բաշխի և հոն առաւելապէս իր ամէն ճոխութեամբ կը պճնի բնութիւնը:

### ԵՐԿՐԱԳՈՒՆՏ

Տան, պարտէզի եւ վրջականերու յատակագիծը նկարելու ժամանակ փոքրիկ բայց որոշ յափի մը գոր-



ծածեցինք: Այսմ եթէ ուղենք գծագրել մեծ տարածութիւն մը, ի հարկէ չենք կրնար գործածել այն շափը զոր գործածեցինք սենեակը չափելու համար: Հոն նկարեցինք սենեակը, իսկ հոս պիտի նկարենք մեծամեծ քաղաքներ, գիւղեր, աւաններ, գետեր, լիճեր, եւայլն: ուրեմն այսպիսի մեծ տարածութիւն մը գծագրելու համար պէտք է նոյն չափը մլոնի տեղ առնել: Բայց եթէ ուղենք ամբողջ երկիր մը չափել իր նահանգներով գաւառներով, լիճերով, գետերով և լեռներով, այն ժամանակ նոյն չափը չենք կրնար գործածել մղոնի մը տեղ և պէտք կ'ըլլայ քանի մը մղոնի տեղ առնել զայն: Երբ սենեակին պատկերը գծեցինք՝ յատակագիծ կոչեցինք զայն: իսկ ամբողջ նահանգի մը կամ աշխարհի պատկերը, *fwartsēn* (աշխարհացոյց) կը կոչուի: Դիւրաւ կը հասկցուի թէ գետն, որ 2—300 հազարամէթր երկայնութիւն ունի, մեր քարտէսին վրայ բարակ գիծի մը կը վերածուի, որ հազիւ քանի մը սանթիմէթր երկայնութիւն կ'ունենայ: Մեծ քաղաքը կէտի մը տարածութիւն կը բռնէ, իսկ բարձրաբերք լեռներն հազիւ նշմարելի բարձրութիւն մը կ'ու-

նենան, մինչդեռ տուները, եկեղեցիները ամենևին չեն երեւար, որովհետեւ մեծամեծ լեռներն այնպէս մանր նկարելէ յետոյ, միւսներն համեմատաբար այնչափ կը փոքրանան, որ կարելի չէ նկարել: Կրնաք երեւակայելութէ ուրեմն թէ ո՞րչափ պէտք է պղտիկցնել առարկաները՝ երբ ամբողջ աշխարհիս քարտէսը նկարել ուզգենք: Հազարաւոր մղոն երկայնութիւն ունեցող գետերը մատնաչափ երկայնութեամբ գիծեր կ'ըլլան: Բայց ի՞նչպէս նկարենք երկրի քարտէսն երբ ան գնտածեւ է և մեր թուղթը հարթ: Իրաւ, շատ գժուար է: բայց միջոցը կայ: Ասոր համար կը շինեն փայտեղէն գունտ մը և վրան թուղթ կը փակցնեն: այն թուղթին վրայ կանխաւ նկարուած են ովկիանները, ծովերը, ցամաքներն իրենց լիճերով, գետերով, լեռներով, ինչպէս որ կը գտնուին երկրագունտի վրայ: Այդ գունտն՝ երբեք երկրիս պատկերը՝ կը կոչուի երկրագունտ (*globe*): իսկ եթէ ուղեն հարթ թուղթի վրայ գծագրել երկրագունտն, այն ժամանակ սովորաբար կը նկարեն երկու քարտէսի վրայ, որ կը կոչուին կիսագունտ: Կիսագունտերէն մէկուն վրայ կը նկարեն երկրագունտին մէկ երեսն, իսկ միւսին վրայ միւս երեսն:

### ՀԱՄԱՊՈՏԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ ԿԻՍԱԳՈՒՆՏԵՐՈՒԻՆ ՎՐԱՅ

Հայեացք մը նետելով երկրի երկու կիսագունտերուն վրայ, գժուար չէ որոշել թէ ո՞րն է ջուրն և ո՞րն է ցամաքը: Ջուրը կապուտակ նկարուած է, իսկ ցամաքը գոյնզգոյն: Զուրը կը ծածկէ երկրագունտին  $\frac{2}{3}$  մասն և կը կոչուի Ովկիան, որ քանի մը գլխաւոր մասը կը բաժնուի: Ովկիաններուն այն մասերն, որ

ցամաքներու մէջ կը մտնեն, կը կոչուին Ծով։ Ցամաքն երկրիս մակերեւոյթին մնացած  $\frac{1}{3}$  մասը գրաւած է և ովկիաններուն մէջ զետեղուած է իրեւ մեծամեծ կըզ-զիներ, որոնք կը կոչուին Մայր ցամաքներ։ Ցամաքներուն վրայ կը տեսնենք մեծ ու փոքր լիճեր և օձապը-տոյտ գետեր, իսկ ծովուն և ովկիաններուն մէջ՝ կըզ-զիներ, թերակզիներ, հրուանդաններ, պարանոցներ, նեղուցներ, ծոցեր, եւայլն։

Ուշադրութեամբ դիտելով կիսագունտերը՝ կը տես-նէք որ մէկուն վրայ ցամաքն աւելի շատ է քան թէ միւսին վրայ։ Այս կիսագունտն, որու ջուրը շատ է, նոր աշխարհ կը կոչուի, իսկ միւսն՝ Հիմ աշխարհ։ Նոր աշխարհը կը տեսնուի իբր երկարածիգ մայր ցամաք մը, որ կազմուած է երկու որոշ մասերէ. այդ մասերը ի-րարու հետ միացած են պարանոցով մը, որ կը կոչուի Փանամա։ Նոր աշխարհ կ'անուանուի այն պատճառաւ, որ մարդիկ առաջ երկար ժամանակ անոր գոյութեան վրայ բնաւ տեղեկութիւն չունէին։ Այս ընդհանուր բաժանումէն, այսինքն հին և նոր աշխարհներէն զատ, երկիրս կը բաժնուի հինգ գլխաւոր մասերու, որ կը կոչուին աշխարհի մասերը, ասոնց երկուքը նոր աշ-խարհի մէջն են, Ամերիկա և Ովկիանիա, իսկ մնացած երեքը հին աշխարհի մէջ, Եւրոպա, Ասիա և Աֆրիկէ։ Բաց ի ասոնցմէ կայ և վեցերորդ մը որ կը գտնուի հարաւային բեւեռին մօտ և կը կոչուի Հարաւային մայր ցամաք. սա վաղուց ի վեր քննուած չէ, որովհետեւ չիւնով և մշտնջենական սառուցով ծածկուած է և վը-րան բնակութիւն չկայ։ Հին և նոր աշխարհներու մէջ դէպ ի արեւելք կը գտնուի Ատլանտեան Ովկիանն, իսկ դէպ ի արեւմուտք՝ Մեծ կամ Խաղաղական Ովկիանը։

Երկրագունտին հարաւային կողմը տարածուած մեծ ջուրը կը կոչուի Հարաւային Սառուցեալ Ովկիան, իսկ հիւսիսային կողմի ջուրն Հիւսիսային Սառուցեալ Ով-կիան։ Ասիոյ հարաւային կողմը կը գտնուի հինգերորդ Հնդկաց Ովկիանն։ Այս բոլոր Ովկիաններն, ինչպէս դուք ալ կը տեսնէք, մեծ ջուրին մասերն են, որու մէջ-տեղերը գրուած են մայր ցամաքներն ու կղզիները։

Ինչպէս որ տեսանք, Հին աշխարհի մէջ կը գտնուին երեք մասեր. ամենամեծն (Ասիան) կցուած էր Աֆրի-կէի հետ Սուէզի պարանոցով, բայց ամենափոքր մա-սին բնակիչներն՝ Եւրոպացիները, որոնք լուսաւորու-թիւն և կրթութիւն կը տարածեն աշխարհի ամէն կող-մերը, կտրեցին այդ պարանոցն, և նաւարկելի ջրանց-քով մը կարմիր ծովը Միջերկրական ծովուն հետ միա-ցուցին։ Միջերկրական ծովն Ատլանտեան Ովկիանէն յա-ռաջ եկած ծոց մըն է, որ իր ահագին մեծութեան պատճառով ծով կը կոչուի, Ներկայ ժամանակս գրեթէ ամբողջ Եւրոպայի մէջ լուսաւորեալ ժողովուրդներ կը բնակին, միջդեռ աշխարհիս միւս մասերուն մէջ վայ-րենի ժողովուրդներ գեռ շատ կան։ Բայց մեզմէ 2,000 տարի առաջ՝ գրեթէ ամբողջ Եւրոպա եւս անկիրթ ժո-ղովուրդներէ բնակուած էր. լուսաւորուած կամ քա-ղաքակրթուած ազգերն այն ժամանակ կը բնակէին Միջերկրական ծովուն Եւրոպական և Ասիական ափուն-քը. Միջերկրական ծովուն արեւելեան կողմն, Ասիա-կան ափերուն վրայ, հին ատենները կը բնակէին Փիւ-նիկեցիները, որոնք թէեւ բազմաթիւ չէին, բայց նշա-նաւոր էին իրենց վաճառականութեամբ։ Փիւնիկեցի-ները կը համարուին առաջին ազգն որ սկսաւ նաւեր շինել և նաւարկութեամբ պարապիլ։ Հին ժամանակ-շինել և նաւարկութեամբ պարապիլ։

Ներու հետ բաղդատմամբ՝ անոնց առեւտրական յարաբերութիւնները շատ ընդարձակութիւն ստացան։ Անոնք հին ժամանակի բոլոր ազգերուն հետ, ինչպէս են Յոյները, Հռովմայեցիները, Հայերը, Եգիպտացիները, եւայլն, հաղորդակցութիւն ունէին։ Կ'ըսեն մինչեւ անգամ թէ Փիւնիկեցիները Եգիպտացի թագաւորներէն մէկուն յանձնարարութեամբ նաւով պտըտեցան Ափրիկէի շուրջն։ Այն ժամանակի գիտութեան նայելով՝ ամենայանդուգն ձեռնարկ մըն էր այս, և արդարեւ անոնցմէ ետքը և ոչ մէկ ազգ համարձակեցաւ հետեւիլ անոնց օրինակին։ Ափրիկէի ափունքն, այն տեղն ուր Նեղոս գետը կը հոսի, կը բնակէր Եգիպտական ցեղն որ նոյնպէս շատ խելացի ազգ մըն էր, նաւարկութիւնը չէր սիրեր։ Եգիպտոսէն դէպի արեւմուտք, Ափրիկէի ափունքը, կը բնակէին Կարթագինեցիները կամ Կարգեղոնացիները, որոնց նախահայրերը Փիւնիկէն գաղթած են։ Ասոնք իրենց նախորդներուն նման յանդուգն և վաճառականութեամբ պարապող ժողովուրդ մըն էին և այն ժամանակի բոլոր ծանօթ աշխարհներու հետ հաղորդակցութիւն ունէին։ Մինչկ իսկ Անգղիա հասան, որու բնակիչները այն ատեն վայրենի էին։ Հայերը հաղորդակցութիւն ունէին թէ՛ Փիւնիկեցիներու և թէ՛ այն ժամանակի ծանօթ ազգերուն հետ։ Անոնց վաճառականութիւնն աւելի ցամաքային կերպարանք ունէր, կարաւաններով կը հաղորդակցէին Պարսկաստանի, Փիւնիկէի և մինչեւ անգամ Հնդկաստանի հետ, իսկ Ասորոց և Բաբելացոց հետ Եփրատ և Տիգրիս գետերու միջնորդութեամբ ջրային հաղորդակցութիւն ունէին։ Հայերը այլեւայլ ապրանքներ իրենց երկրէն, Պարսկաստանէն և Միջագետքէն ծախու կը

տանէին մինչեւ Եգիպտոս և Կարթագինեցիներու երկիրը։

Միջերկրականի Եւրոպական ծովափերու վրայ գըտնուող այն թերակղզիներու մէջ, որոնց մէկը այժմ Պալքանեան թերակղզի կը կոչուի, իսկ միւսն Ապէնեան կամ Իտալական, կը բնակէին այն ժամանակի երկու լուսաւորեալ ազգերն՝ Յոյները և Հռովմայեցիները։ Ասոնք շատ խելացի էին, կը սիրէին գիտութիւն և արուեստ, և վաճառականութեամբ կը պարապէին, բայց հեռաւոր նաւարկութեան չէին գիմագրաւեր։ Լաւ նաւեր չունենալով և կողմնացոյցի գործածութեան ալ ծանօթ չըլլալով, գլխաւորապէս Միջերկրական ծովու վրայ կը նաւարկէին և անտի գուրս ելլալ և ձիպրալ-թարի նեղուցէն անցնիլը մեծ քաջութիւն կամ յանդընութիւն կը համարէին։ Ասկէ կրնանք եզրակացնել թէ Յոյները և Հռովմայեցիները աշխարհիս մէկ փոքր մասը միայն կը ճանչնային։ Ասիայի միւս լուսաւորեալ երկիրներէն ցամաքի ճամբով Հնդկաստան և Զինաստան երթալու համար հարկ էր անցնիլ ահագին անմարդաբնակ անապատներէ, ուր կէս-վայրենի ցեղեր միայն կը թափառէին։ Երբեմն Հնդկաստանէն Եւրոպա կը բերէին ոսկի, փղոսկր, թանկագին կերպասներ, այլեւայլ հազուագիւտ իրեղէններ, մանաւանդ բուսական թագաւորութեան տեսակներէն, ինչպէս լեզակ, պղպեղ, եւայլն։ Հնդկաստանի հարստութեան շափ ու սահման չըլլալուն համբաւը կը տարածուէր։ այս պատճառով շատ Եւրոպացիներ կը մտածէին ծովային յարմար ճամբայ մը գտնել դէպի ի այդ երկիրները, բայց չէին կրնար։

Ըսինք թէ հին ժամանակի իմաստուն մարդոցմէն

մէկ քանին գուշակեցին որ երկիրս տափարակ չէր՝ այլ գնտածեւ, բայց ոչ ոք մտարերած էր թէ Եւրոպայէն դէպի արեւմուտք ուղեւորելով և միշտ դէպի առաջ դիմելով՝ առանց ետ դառնալու կարելի էր հասնիլ Հնդկաստան, որ արեւելեան կողմը կը գտնուի. Եթէ մտարերէին իսկ, շատ դժուար էր իրագործել, որովհետեւ դիւրին չէր ձիպրալթարի նեղուցէն անցնիլ և մտնել ընդարձակ ծովու մը մէջ, որու սահմանն ոչ մէկուն ծանօթ էր.

Նատ և շատ տարիներ անցան: Հոռվիմայեցիները այնքան զօրացան որ նուածեցին կարթագինեցիները, Յոյները և Եգիպտացիները. բայց այդ մեծ տէրութիւն փոքր առ փոքր թուլցաւ: Շուայլութիւնն ու փառամիրութիւնը չափէն աւելի զարգացան իր մէջ, որով անոր ներքին բարոյական և զինուորական ուժը բոլորովին նուազեցաւ: Այն ժամանակ հիւսիսային երկիրներու կիսավայրենի գերմանական ցեղերն արշաւեցին Հոռվիմ, քայքայեցին Հոռվիմայեցիներու ամբողջութիւնն և նուածեցին: Հին առեւտրական ազգերու շատերը կորան և անոնց աւերակներուն վրայ հիմնեցան նոր տէրութիւններ, որոնց մէջ առաջին տեղը կը գրաւէին Վենետիկ. Սպանիա և Փորթուգալ: Այդ երկիրներու վաճառականներէն ոմանք աշխատեցան և կրցին ցամաքային ճամբով հասնիլ Հնդկաստան և մինչեւ անդամ Զինաստան, բայց դարձեալ մէկը չէր համարձակէր ձիպրալթարի նեղուցէն անցնիլ և տեսնել թէ ի՞նչ կար այդ կողմը. Վերջապէս երեւան ելաւ մարդ մը որու կը պատկանէր անյայտութեան դարաւոր քողը բառնալ: Սա էր Քրիստոնափոր կոլոմբոս որ այդպիսի մեծ դործի մը ձեռնամուխ ըլլալու համար բաւական խելք և արիութիւն ունէր և որու վրայ պիտի խօսինք քիչ մը ետքը:

### ԿԼԻՄԱՆԵՐՈՒ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Ա.ՍԻԱՑԻ ԿԼԻՄԱՆ, ԼԵՌՆԵՐԸ, ԳԵՏԵՐԸ ԵՒ ԼԻՃԵՐԸ

Կլիմա. — Եթէ այլեւայլ երկիրներու կլիման մի միայն այս կամ այն գօտիին ներքեւ գտնուելէն կամ հասարակածին և բեւեռներու աւելի կամ նուազ հեռաւորութենէն կախում ունենար, երկրիս վրայ կլիմաներու այնքան զանազանութիւն չէր տեսնուեր. հասարակածէն կամ բեւեռներէն միեւնոյն հեռաւորութեան տակ գտնուղ երկիրներ միեւնոյն կլիման կ'ունենային: Բայց իրօք այնպէս չէ: Օրինակի համար՝ առնենք Փոքր-Ասիան և Խտալիան, որոնց մեծ մասը դրեթէ հասարակածէն միեւնոյն հեռաւորութեան տակ կը գտնուի՝ թէեւ Խտալիա աւելի դէպի ի հիւսիսէ. և իր հարաւային ծայրը կը վերջանայ կամ հասնի այն աստիճանին վրայ ուրկէ կը սկսի Փոքր-Ասիոյ հիւսիսային մասը: Դիրքին նայելով՝ ուրեմն Փոքր-Ասիա պէտք էր որ ունենար աւելի ջերմ ամառ և բարեխառն ձմեռ քան Խտալիա. բայց, ընդհակառակն, Խտալիոյ կլիման աւելի բարեխառն կը գտնենք քան թէ Ասիոյ, ուր երբեմն ամենախիստ ձմեռ կը տիրէ: Համառօտ մը բացարենք ասոր գլխաւոր պատճառները: Առաջին պատճառը ծովու մերձաւորութիւնն է: Բեւեռային ծովերն ամառ ձմեռ սառնապատ կ'ըլլան, մինչդեռ միւս երկիրներու ծովերը կամ բնաւ չեն սառիր, կամ դուն ուրեք կը սառին, և այն ալ միայն եղերքները: Այն ծովս, որ բնաւ չի սառիր, ամառ ժամանակ կը զովացնէ օդը՝ անոր աւելորդ տաքութիւնն իրեն քաշելով. իսկ ձմեռն, ընդհակառակն, երբ շրջակայ ցա-

մաքի օդն աւելի ցրտանայ, ծովս իր աւելորդ ջերմութիւնը ցամաքային օդին կուտայ. ուստի ծովեղերեայ երկիրները ձմեռը սաստիկ ցուրտ չեն ըլլար, ոչ ալ ամառը սաստիկ տաք: Ստորին հտալիա, որու կլիման աւելի բարեխառն է քան Փոքր-Ասիոյ, Միջերկրական ծովուն մէջ կը յառաջանայ և երեք կողմէն ջրով շրջապատուած է:

Երկրորդ պատճառը հովս է: Գիտէք որ հովս օդի հոսանք մըն է և ջերմութեան ներգործութենէն յառաջ կուգայ: Դժուար չէ հասկնալ թէ ջերմ երկիրներուն օդը տաքնալով կը բարձրանայ և ցուրտ երկիրներուն օդի հոսանքին տեղի տալով, բարձրէն դէպի պաղ երկիրները կ'ուղեւորի, և եթէ ճանբան բարձր լեռնաշղթայներ իրեն արգելք չըլլան, աւելի ցուրտ երկիրներ հասնելով՝ կը բարեխառնէ անոնց կլիման: Իտալիա հարաւային կողմէն չունի բարձր լեռնաշղթայներ. եղածներն ալ այնքան բարձր չեն որ հարաւային ջերմ հովերու հոսանքին կարենան արգելք ըլլալ, մինչդեռ Ասիոյ հարաւային կողմերը կը տարածուին կորդուաց և Տաւրոս լեռները:

Երրորդ պատճառն է երկին բարձրաւանդ ակ դիրքըն: Ենթադրենք թէ սենեակ մը նստած ըլլանք որ լուսամուտի ապակիներուն մէջէն ներս թափանցող ճառագայթներով տաքնայ: Եթէ ձեռքերնիս դպցունենք արեգական ճառագայթներուն ենթարկուած կարասիներուն, կը զգանք որ առաքեր են. իսկ եթէ ձեռքերնիս դպցունենք լուսամուտին այն ապակիին ուրկէ ներս թափանցած են այդ առարկայները տաքցնող ճառագայթները, կը զգանք որ ան համեմատաբար աւելի պաղ է: Ասոր պատճառն այն է որ թափանցիկ առար-

կաները շատ դժուարութեամբ կը տաքնան. անոնք միայն միջնորդի դեր կը կատարեն, այսինքն արեգական ջերմ ճառագայթները կ'ընդունին ուրիշի հաղորդելու համար: Օդն ապակիէն անհամեմատ աւելի թափանցիկ է, հետեւաբար հարկ չի կայ որ աւելի տաքնայ արեգական ճառագայթներէն. ան միայն կ'ընդունի այդ ճառագայթները կամ աւելի ուղիղ ըսելով՝ ճամբայ կուտայ որ տաքցնեն երկրիս վրայի պինդ կամ թանձր մարմիններն: Այս վերջինները, տաքնալէն յետոյ, իրենց աւելորդ տաքութիւնը կ'արձակեն օդին մէջ, որով աս կը սկսի տաքնալ, Որքան թանձր ըլլայ օդն, այնքան աւելի կը տաքնայ. իսկ ո'րքան անօսր ըլլայ, այնքան քիչ: Արդ գիտենք թէ երկրիս երեսին վրայի օդն աւելի թանձր է, ուստի և աւելի կը տաքնայ: Այս սկզբունքով բարձր լեռնոտ երկիրները, թէեւ աւելի դէպի ի հարաւ կը գտնուին, աւելի ցուրտ կլիմայ մը կ'ունենան: Այս երեւոյթ կը տեսնուի նոյն իսկ երկու արեւագարձներու մէջ գտնուող երկիրներու մէջ, ուր հսկայածեւ լեռներ կը բարձրանան: Լեռան ստորոտն արեգակը կ'այրէ, մարդիկ ցերեկուան տօթէն ազատելու համար շէնքերու հովանիին ներքեւ կը պատապարուին: Լեռան կողերուն վրայ ընդհակառակն միեւնոյն ժամանակ հրաշալի գարուն կը տիրէ, իսկ գագաթն յաւիտենական ձմեռ: Փոքր-Ասիա բազմաթիւ լեռներով ու գոտիներով ծածկուած է, ունի շատ բարձրաւանդակներ, ուստի և անոր կլիման համեմատաբար աւելի ցուրտ է և այլազան:

Լեռներ. — Փոքր-Ասիոյ գլխաւոր լեռն է Կովկաս որ կը տարածուի արեւելեան հիւսիսային ուղղութեամբ, Սեւ ծովէն մինչեւ կասպից ծովը: Այս և ու-

ըիշ շատ լեռներ, որ արգելք ըլլալով հիւսիսային պաղ հովերու հոսանքին, կը բարեխառնեն Ասիոյ կլիման, զանազան ուղղութեամբ կտրելով մեր երկիրը, բազմադիմի տեսարաններ կ'ընծայեն, տափարակ դաշտ, հովիտ, եւայլն. լեռներու մէջ շատ անդամ կը տարածուին հարուստ ու բերբի դաշտեր որ մշակութեան շատ ընդունակ են:


Ըսինք թէ երկիրս ունի հինգ գլխաւոր գօտի և թէ Փոքր-Ասիա բարեխառն գօտիի ներքեւ կը գտնուի: Բայց դուք հասկցաք նաեւ որ Ասիոյ դիրքը շատ անհաւասար է. ունի ընդարձակ դաշտեր, մեծամեծ սարահարթեր, բարձրաբերձ լեռներ, և այդ պատճառով անոր կլիման ու բերքերն բազմատեսակ են: Երկրագունդին այն մասերն, որ իրենց դիրքով և օդի բարեխառնութեամբ կ'արտադրեն ցորեն և գիւղատնտեսական այլ բերքեր, առանձին գիծերով միացած գօտի մը կը կազմեն որ հացային կը կոչուի: Ասիա ամբողջապէս այդ գօտիին ներքեւ կը գտնուի. այդ պատճառով գիւղական մշակութիւնն ու երկրագործութիւնը գիւղացին գլխաւոր զբաղումն է. երկիրն ալ առատապէս կը վարձատրէ աշխատաւորն. Ասիոյ շատ կողմերն երկիրն սեւ հողով ծածկուած է: Սեւ հողը գոյացած է ամենահին ժամանակներէ ի վեր խոտերու և ուրիշ բոյսերու փոտութենէն: Այդ տեսակ հող ամէն բոյսերու արմատին մօտ կը գտնէք, միայն թէ վարուցանի հողերու մէջ ատոնք աւելի մաքուր են և թանձր: Ատոնց թանձրութիւնն 2—5 ոտնաշափ կ'ըլլայ և երբեմն ալ աւելի: Փտած ածխային նիւթեր խառնուած են անոր մէջ մաքուր աւազի կամ կաւի հետ, որ և բաւական փխրուն է. ջուրը դիւրաւ կը ծծուի, երկար

ատեն կը պահպանուի անոր մանրիկ մասերուն մէջ. այդ է պատճառը անոր այնպէս բարեբեր ըլլալուն: Գիտէք թէ հողը կը հերկեն մի միայն անոր կոշտերը փշրելու և մանրելու համար. իսկ սեւ հողն, երբ վերէն չորնայ, ո՛չ թէ կաւի պէս կը ծանրանայ, այլ կը փշրի և փոշի կը դառնայ: Այս ալ պէտք է գիտնալ որ ամէն սեւ բան աւելի կը տաքնայ քան պարզ ու փայլուն նիւթ, ինչպէս որ հին ու մրոտ կաթսայի մէջ ջուրը աւելի շուտ կը տաքնայ քան նոր ու փայլուն կաթսայի մէջ: Այնպէս ալ սեւ հողն ամառը արեւին ճառագայթներն աւելի շուտ կ'ընդունին քան միւս հողերն: Արմտիք, ընդեղէններ և բազմատեսակ խոտեր հիանալի կերպով կ'աճին անոր վրայ. իսկ ծառերն այնքան հիւթեղ հող չեն սիրեր, անոնց հարկաւոր է աւելի շատ աւաղ կամ կաւ: Գետնախնձորն խոնաւութենէ կը փոփի: Հարկ է զայն շուտ ցամքող աւազախառն հողի մէջ տնկել:

Ինչպէս երկիրը, նոյնպէս ալ անոր բնակիչներն: Երկիրն և անոր կլիման մեծ ազգեցութիւն ունին մարդուս կեանքին և բնաւորութեան վրայ. ինչպէս որ Փոքր-Ասիոյ դիրքը բազմազան է, այնպէս ալ անոր բընակիչներուն զբաղումն և բնաւորութիւնը կը զանազանի: Գեղացին, եթէ կը բնակի լեռնային բայց երկրագործութեան և անասնապահութեան յարմար երկրի մէջ, աշխատասէր է, իր գործին պարապող և տոկուն. մինչդեռ քաղաքացին արհեստով կամ առեւտուրով միայն կը պարապի և աւելի փափկակազմ կ'ըլլայ: Փոքր Ասիոյ գեղացին կրնայ երկրագործի նախատիպն համարուիլ: ամբողջ տարին գրեթէ հանգիստ չունի: Գարնան կը սկսի վարել երկիրն, այնուհետեւ կը սկսի ցե-

լուլ իր արտերն աշնանացանի համար. դեռ այդ գործը չի վերջացուցած, հասունցած խոտերը քաղելու ժամանակը կը հասնի. անխոնջ երկրագործն՝ իր նահապետական երգն երգելով՝ փայլուն գերանդին ուսը, դաշտ կ'ելլէ: Սեպտեմբերին անոր արտերը կը հասունան, հունձը կը սկսի եռալ և ահա կը տեսնէք զայն մանդաղը կամ գերանդին ձեռքը իր աշխատանքին պառուղը ժողվելու ելած: Հունձքը վերջացուց, շեղից, այժմ պէտք է որ սկսի կրել, կասել և ամբարել: Աշունը վերջացաւ, գեղացին իր վաստակին կէն հարկ է որ ծախու հանէ: Իր նահապետական փոքրիկ սայլերը կը լծէ և ցորենը կամ ալիւրը դէպ ի մօտակայ քաղաքները կը կրէ: Գեղացին՝ բաց ի երկրագործութենէ՝ անասնապահութեամբ ալ կը պարապի: Ամբողջ տարին զբաղած է, ժամանակ չունի ուրիշ բանի վրայ մըտածելու, անդորր ու խաղաղ կ'անցնի անոր կեանքն, և երջանիկ է, անոր վաստակն օրհնուած է: Իր պարապմունքներուն համեմատ՝ գեղացին հանդարտ, շափաւոր և խաղաղ բնաւորութեան տէր է: Աէր և խաղաղութիւն կը թագաւորեն անոր տան մէջ, և ընտանիքին բոլոր անդամները կը հնազանդին տան նահապետին բոլոր ակնարկութիւններուն: Բայց բոլորովին հակապատկեր մը կը ներկայացունէ մեզ քաղաքի բնակիչը: Ան առեւտուրով կը զբաղի միայն և հարկէն ստիպուած կը ճանապարհորդէ դրամ շահելու համար, ամէն կողմ կը թափառի և շատ անդամ ալ կը յաջողի, ամէն տեղ ալ իր ընդունակութիւնը ցոյց տալով այդ կոչման: Միայն ցաւալի է որ այդ ճիւղով (առեւտուրով) զբաղող դասուն մէջ ընկերական ոգի չի տիրել լով՝ կը սիրեն իրարմէ անկախ և առանձին գործելու ուստի

և շատ անդամ ստիպուած են մանրավաճառութեամբ բաւանալ, վասն զի առեւտրական մեծամեծ և շահաւէտ ձեռնարկութիւններու համար մեծ դրամագլուխ պէտք է զոր մասնաւոր անհատ մը դժուարաւ կրնայ ունենալ: Արհեստները քիչ յառաջացած են գաւառացիներու մէջ և այս գժրագդութիւն մըն է: Վաճառականսւթիւնը մասնաւորներու ու ժողովրդեան փոքրագոյն մասին միայն զբաղմունք կրնայ ըլլալ, մինչդեռ ժողովրդեան ստորին դասը, ազգայնութեան բազմաթիւ տարրն, արուեստագիտութեամբ միայն կարող է ապահովել իր կացութիւնը և իր կեանքը:



## ԱՐԴԱԼՈՅԱ

Վարդեր ու վարդեր  
Թերթ ի թերթ փըթթեր,  
Ի կապոյտ եթեր  
Զիւնափայլ ամպեր՝  
Քայլերուդ առջեւ  
Սըփուելով թեթեւ,  
Քեզ ըընութեան հետ՝  
Յ'այս ժամ հեղաւէտ՝  
Մընան մեծայոյս,  
Ո'վ քաղցր Արշալոյս: —

Ահա շողի շող  
Շուշանացի քող,  
Իր ոսկենընյլ  
Վարսեր հոյլի հոյլ  
Ծուփի ծուփի սփիւռ  
Թողլովի զեփիւռ,  
Եւ մարդըրտայեռ  
Պարզելով թեւեր՝  
Նազի Արշալոյս,  
Երկնքի այն կոյս :

Ահա վառի վառ  
Ճակատին գոհար  
Եւ բըբերն անուշ  
Քըթթելով քընքուշ,  
Զերկին և զերկիր  
Գըրկէ սիրալիր,  
Նըթներուն իր վարդ  
Ի ժմիտ զըւարթ՝  
Մաղկանց թոյրի թոյր  
Հեշտից ցողէ բոյր :

Ահա սոյլի սոյլ  
Թըռչնեկացըն բոյլ  
Ճըռուողեն ընդ բոյս,  
Ո'զնոյն Արշալոյս,  
Ո'զնոյն որ զմուայլ  
Փոխարկեսի փայլ  
Ու զտխուր երկիր  
Գործես ցնծալիր,  
Ո'հ, յէից ողջոյն:  
Արշալոյս, ողջոյն:

Քեզ ամէն ոք տայ  
Իր ձօն նախընծայ,  
Քեզ՝ ըզսրբագոյն  
Քեզ՝ ըզփափկագոյն,  
Քեզ՝ ամպ, սիւք, վըտակ,  
Ծաղկունք և սոխակ,  
Ամէնք տան քեզ գով,  
Հալին քո սիրով,  
Ո'վ երկնային կոյս,  
Սիրուն Արշալոյս:

Ո'հ, գու որ այսպէս  
Մեր սիրտն ըզմայլես,  
Մեր բըբերն աղօտ  
Մի' թողուր կարօտ,  
Երբ գերեզմանին  
Յաղամուղջ փակուին . . .  
Այլ զանուշ քո լոյս  
Եւ աշաց ոգւոյս  
Շողշողա՛ ի յոյս,  
Կուսա՛ն Արշալոյս:

---

# ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԺԱՊԻԹԻՒԽԻՆ

## ՔՐԻՍՏԱՓՈՐ ԿՈԼՈՄՈՊՈՍ

Քրիստովոր կոլոմպոս ձենովացի վաճառականի մը ողդին էր. Ծնաւ 1436 թուականին. Իր մանկութեան ժամանակ ջանասիրութեամբ շատ բան սովորեցաւ, աշ-



խարհագրութեան և աստղաբաշխութեան պարապեցաւ և քանի մը ծովային ճամբորդութիւններ ըրաւ. և ահա այն ժամանակ իր միտքին մէջ յղացաւ Հնդկաս-

տանի ծովային ճանապարհը գտնել. Երկար խորհեցաւ այս խնդիրին վրայ և վերջապէս որոշեց գործադրել, Բայց հարկ էր նաւախումբ մը ունենալ: Կոլոմպոս դիմեց ձենովայի, Փորթուկալի և Անգլիոյ կառավարութեանց, բայց ոչ ոք հաւառք կ'ընծայէր այնպիսի ցնորամիտ նպատակի մը, ինչպէս կը կարծուէր այն ժամանակ, և չի հածեցան նաւախումբ մը յանձնել անոր: Երկար և ապարդիւն փորձերէ յետոյ, վերջապէս յաջողեցաւ Սպանիոյ Փերտինանտ թագաւորէն և Իզապէլ թագուհիէն օգնութիւն ստանալ: Թագաւորն երեք նաւ տուաւ անոր 120 մարդով:

Կոլոմպոսի փոքրիկ նաւախումբն 1492 օգոստոս 3ին մեկնեցաւ Սպանիայէն, և տասն օրուան մէջ ձիպրալթարի նեղուցէն անցնելով՝ Քանարեան կղզիներն հասաւ: Կոլոմպոսի ուղեկիցներն յանդուգն ու գործունեայ մարդիկ էին, բայց երբ մտան ընդարձակ և անծանօթ ծովս, սկսան երկմտիլ. միայն կոլոմպոս հաստատապէս համոզուած էր իր ձեռնարկին յաջողութեան վրայ. Մինչդեռ Հին-Աշխարհը կը կորսուէր նաւորդներու ետեւն, առաջնին կը տարածուէր անսահման և անծանօթ ովկիանն: Այսպէս երեք օր անդադար երթալով, երկինքէն և ծովէն զատ բան մը չը տեսան. վերջապէս հինգերորդ օրն երեւցան թուչուններ, սպիտակ գանգրաւոր աւագիլն և սպիտակ խաղաղիկը: Նաւորդներն ուրախացան կարծելով թէ այդ թուչունները ցամաքին մօտ կը թոշին: Քանի մը օր ալ առաջ ընթանալէն յետոյ նաւորդներուն յոյսն սկսաւ քիչ քիչ նըւազիլ: Հովը միշտ յաջողակ էր, որովհետեւ այն տեղ, ուր Սպանիացիները կ'ընթանային, աշնան պաստեան հովեր կը փչեն, բայց նոյն իսկ հովին այդ միակերպ

փշելը կը վախցնէր կոլոմպոսի մարդիկը։ «Ի՞նչ պիտի ըլլայ մեր վերջն՝ եթէ հովը շարունակ մէկ կողմէն փըշէ, կ'ըսէին։ ճշմարիտ է որ կը հեռանանք Եւրոպայէն, բայց ի՞նչպէս պիտի վերադառնանք։»

Երբոր այս յաջողակ հովով կը յառաջանային, ծովուն երեսին վրայ խոտեր երեւցան, որ ո՛րշափ իրենք առաջ կ'երթային, ա՛յնքան կը շատնային, այնպէս որ վերջապէս ծովը կանանչ դաշտի մը կերպարանք առաւ։ Խոտերէն ոմանք բուն իսկ ծովեզերեայ բոյսեր էին, միւսներն այնքան նոր ու կանաչ էին որ կարծես թէ ցամաքէն նոր բաժնուած էին։ Շատ անգամ նաւերուն մօտ թռչուններ կ'երեւային, իսկ ձկներն ընդուս կը ճախրէին ծովու մակերեւոյթին վրայ։ Բայց կոլոմպոսի ճամբայ ելլալէն 'ի վեր 50 օր անցած էր և այդ բոլոր երեւոյթներով հանդերձ դեռ ծովեզը չէր երեւար։ Կոլոմպոսի թերահաւատ ուղեկիցները կասկածեցան թէ մի՛ գուցէ չարաբաստիկ ոգիներ դիտմամբ այս երկիրներու մի գուցէ չարաբաստիկ ոգիներ դիտմամբ այդ թռչունները կուգային, մէկ կողմ թողլով անցած ըլլան, և աւելի կը տրտնջային կոլոմպոսի յամառութեան վրայ, որ նաւերն ո՛չ դէպ ի հիւսիս կը դարձնէր և ո՛չ դէպ ի հարաւ, այլ շարունակ դէպ ի արեւմուտք կ'ուղղէր։ Մովապետին բախտէն երկու օրէն դարձեալ թռչուններ երեւցան և ցամաքի մերձաւորութեան նշաններն այնքան բազմացան որ նաւաստիններու յոյսը նորէն արձարծեցաւ։

Թանի մը օր ալ անցաւ և ծովային խոտերու քանակութիւնն ա՛յնքան շատցաւ որ Սպանիացիները սկըսան վախնալ թէ մի՛ գուցէ ջրասոյզ ժայռերու զարնուին։ Այս երկիւղը ցրուելու համար ծովապետն հրամայեց խարիսխ ձգել. ձգեցին, բայց յատակին չասաւ։ Կոլոմպոսի ստորակարգեանները շարունակեցին արտունջ բարձրացնել և ցաւել որ իրենց կեանքը յանձնեցին այնպիսի յամառ մարդու մը որ մի միայն իր փառքն հոչակելու մտադիր էր։ Կոլոմպոս լաւ կը հասկընար այդ դժողովութեան վտանգաւոր հետեւանքը,

բայց ուրախ կը ձեւանար, մէկ քանին քաղցր խօսքերով կը հանդարտնեցնէր, ուրիշներու մօտալուտ հարըստութիւններ կը խոստանար, իսկ յամառները խստիւ կը պատժէր։ Ոմենէն առաջ ցամաքը տեսնողին մեծ պարգեւ խոստացած էր, բայց ինքն ալ անհա իբերութեամբ արեւմուտք կը նայէր և օրերով չ'էր հեռանար նաւուն կամուրջէն։

Կոլոմպոսի հաշուին նայելով՝ իր նաւախումբն 700 ծովային մղոն ճամբայ ըրած էր և այնքան հեռանալէն յետոյ՝ ոչ միայն ցամաք չի գտաւ. այլ և սեպտեմբերի 20ին խոտերն ու թռչուններն ալ անհետացան։ Նաւաստինները կը կարձէին թէ գուցէ այն երկիրներն, ուսկից այդ թռչունները կուգային, մէկ կողմ թողլով անցած ըլլան, և աւելի կը տրտնջային կոլոմպոսի յամառութեան վրայ, որ նաւերն ո՛չ դէպ ի հիւսիս կը դարձնէր և ո՛չ դէպ ի հարաւ, այլ շարունակ դէպ ի արեւմուտք կ'ուղղէր։ Մովապետին բախտէն երկու օրէն դարձեալ թռչուններ երեւցան և ցամաքի մերձաւորութեան նշաններն այնքան բազմացան որ նաւաստիններու յոյսը նորէն արձարծեցաւ։

Եւ սակայն անցան դարձեալ քանի մը օրեր և եղեք չերեւցաւ։ ճանապարհորդներու համբերութիւնն սկսաւ հատնիլ և երբ վերջապէս 70րդ օրն արեգակը ծածկուեցաւ անսահման ովկիանին տակ առանց լուսաւորելու փափաքելի եղերքը, խռովութիւններ ծագեցան. ամէնն ալ կը պահանջէին որ կոլոմպոս նաւերու գլուխն ետ դարձնէ, բայց ան դարձեալ ընդդիմացաւ։ Բարեբաղդաբար հետեւեալ օրը ցամաքի նըշաններն այնչափ շատցան որ անհաւատներն իսկ սկսան հաւատալ։ Մովուն վրայ ծառի ոստ մը տեսնուեցաւ

այնչափ թարմ պտուղներով, որ կարծես թէ ծառէն նոր կտրուած էր. վերջապէս փայտ մը երեցաւ, որու վրայի նշաններն յայտնի կ'ընէին մարդկային ձեռագործ ըլլալը. Նորէն ամէնքը մէկէն սկսան նայիլ դէպ ի առաջ և իւրաքանչիւր ոք կ'ուզէր որ նախ ինքը տեսնէ ցամաքը:

Կոլոմպոս գիշերը նաւուն կամուրջին վրայ կ'անցունէր և աչքն արեւմուտքէն չէր հեռացնէր: Կը զգար որ եթէ օր մը եւս իրենց յոյսն ի գերեւ ելլար: շատ դժուար պիտի ըլլար հնազանդութեան մէջ պահել իր նաւաստիները. օր մըն ալ և իր բովանդակ կեանքին ծրագիրը մշտնջենապէս պիտի եղծանէր: Իրիկուան դէմժամը տասնին կոլոմպոս հեռուէն կրակի աղօտ լրյո մը նշմարեց: Վախնալով թէ մի՛ գուցէ սնոտի յոյս մը արծարծէ նաւաստիներու սրտին մէջ, կանչեց իր ուղեկիցներէն մէկն և ան ալ հաստատեց իր տեսածը: Սակայն երկուքն ալ լուռ կեցած էին, որովհետեւ կը-րակի լոյսը մերժ կ'երեւար և մերժ կ'աներեւութանար, երկիւղի և յոյսի մէջ վարանեալ՝ ծովապետը կը դիտէր առկայծեալ կրակը մինչեւ առաւօտեան ժամ երկուքն, երբ վերջապէս նաւերուն մէկէն արձակուած թնդանօթի ձայնը յայտնեց ցամաքին երեւալը, և այս անգամ իսկապէս, վասն զի քիչ մը յետոյ ցամաքն որոշ երեցաւ:

Այսպէս իրագործեց Կոլոմպոս իր մեծ ձեռնարկն և ցըուեց այն գաղտնիքն ու թանձր քօղը զոր Ովկիանը երկար ժամանակ դրած էր Հին Աշխարհի բնակիչներուն առջեւ:

1491 հոկտ. 12ի առաջուն Կոլոմպոս տեսաւ Նոր Աշխարհն: Սպանիացիներուն առջեւ կը տարածուէր

գեղեցիկ մեծ կղզի մը, այն աստիճան թարմ, կանաչ և ծառաշարդ որ ընդարձակ այդիի մը կը նմանէր: Այս վայրենի փառազարդութենէ զատ, կային նաեւ մարդիկ, որոնք դէպ ի ծովեզը դիմելով, անբացատրելի զարմացումով և վախով կը դիտէին մօտեցող նաւերը: Կոլոմպոս հրամայեց խոնարհեցնել առագաստներն, իջեցնել մակոյկներն և թագաւորական դրօշը ձեռքը, ծիրանեգոյն զգեստ հագած, իր սպառագինուած ընկերներով նստաւ մակուկի մը մէջ: Եզերքին մօտենալով, Սպանիացիները կը զուարձանային այն ահագին անտառներու տեսքով, որ անսովոր փառահեղութեամբ կ'աճին տաք երկիրներու մէջ: Ծառերու վրայ կային յոյժ գեղեցիկ և Սպանիացիներուն անծանօթ ծաղիկներ ու պտուղներ: Ասոնց հետ միանալով մաքուր և հեղաշունչ օդը, տարօրինակ կերպով յստակ և թափանցիկ ծովը, այնպիսի հիասքանչ պատկեր մը կ'ընծայէին որ Կոլոմպոսի զգայուն միրտը սաստկապէս կը յուզուէր: Ցամաքն ելելուն պէս ծնկան վրայ եկաւ, համբուրեց հողն և արտասուալից աշերով գոհացաւ Աստուծմէ: Ուղեկիցներն ալ անոր օրինակին հետեւեցան: Կոլոմպոս ոտքի վրայ ելաւ, բարձրացուց արքայական դրօշն, հանդիսաւոր կերպով կղզին Սպանիոյ թագաւորին իշխանութեան ներքեւ դրաւ և անուանեց Սան-Սալվատոր, որ կը թարգմանուի Սուրբ Փրկիչ:

Կղզիին ընակիչներն, որ աղօտ արշալոյսի լուսով մը նշմարած էին նաւերն, առաջ կարծեցին թէ ծովուն անդունդէն գիշերով դուրս բղխած հրէներ էին: Նաւերուն արագ ընթացքն՝ առանց տեսանելի չանքերու՝ և թուշուններու թեւերու նման առագաստներն խիստ

շատ կը զարմացնէին վայրենիները։ Բայց երբ տեսան որ նաւերէն տեսակ մը սպիտակամորթ մարդիկ գուրս կ'ելլային փայլուն հանդերձներով, սկսան փախչիլ դէպի անտառը։ Սակայն քանի մը վայրկեանէ յետոյ քաջալերուեցան և քիչ քիչ սկսան մօտենալ Սպանիացիներուն՝ ամենախորին յարդանքի ցոյցերով։ Մունր կը դնէին և իրենց ձեռքը կը տարածէին դէպի ինորեկները, կարծելով թէ երկինքէն իշած աստուածներ էին։

Վայրենիներու արտաքին տեսքն ո՛չ հարստութիւն և ո՛չ կրթութիւն կ'արտայայտէր։ Մերկ էին և իրենց մարմինը փայլուն ներկերով նկարած էին, մորթերնին պղնձագոյն էր, իսկ մօրուք ամենեւին չ'ունէին, գըլխու մազերնին ողորկ էր և երկար, գծագրութիւնին բաւական գրաւիչ։ Կոլոմպոս կարծելով թէ Հնդկաց կղզիներէն մին հասած է, Հնդիկ կոչեց զանոնք։ Այս անունը մինչև ցարդ մնացած է բնիկ Ամերիկացիներուն վրայ, և այն կղզիները, զոր կոլոմպոս գտաւ, մինչեւ այսօր կը կոչուին Արեւմտեան Հնդկաստան և այդ անուամբ կ'որոշուին Արեւելեան Հնդկաստանէն որ Ամերիկայէն շատ հեռու է։ Վայրենիները զինուած էին տէգերով, որոնց ծայրերը՝ փոխանակ երկաթի՝ քարեր, կենդանիներու ակռաներ կամ ձկան ոսկորներ ագուցած էին։ Ինչպէս կ'երեւար, երկաթ տեսած չէին և նորեկներու փայլուն սուրերը անզգուշութեամբ վերցընելով՝ իրենց ձեռքերը կը կտրէին։

Կոլոմպոս ջուր առնելով յառաջ գնաց և անցաւ բազմաթիւ գեղեցիկ կղզիներու մէջէ, որոնց և ոչ մէկն ուղեց այցելել, յոյս ունենալով մեծագոյն գիւտի մը։ Վերջապէս նոյեմբեր 28ին մօտեցաւ մեծ Քուբա կղզին և գեղեցիկ գետաբերանի մը մօտ խարիսխ ձգեց։ Նա-

ւերը մօտենալուն պէս՝ բնակիչները թողուցին իրենց խրճիթներն ու փախան։

Այնուհետեւ կոլոմպոս գտաւ քանի մը կղզիներ ալ որոնց մէկուն վրայ, որ Սպանիոլա (Փոքրիկ Սպանիա) կը կոչուի, ամրոց մը շինեց և հիմնեց Սպանիական առաջին գաղթականութիւնն։ Ուղեկիցներէն 30 հոգի թողլով այդ ամրոցին մէջ, կոլոմպոս ուղեւորեցաւ դէպի Սպանիա։ Ճամբան ահագին փոթորիկի մը հանդիպելով, պահ մը յուսակտուր եղաւ ազատելէ, բայց վերջապէս հասաւ Պալոսի նաւահանգիստն։ Սպանիոյ



թագաւորն ու թագուհին Ապանիոյ Աւագի աստիճան չնորհեցին անոր և նորագիւտ երկիրներուն փոխարքայ անուանեցին զինքը։

Կոլոմպոսի մնացած կեանքը մանրամասնութեամբ

չենք պատմեր. կ'աւելցնենք միայն որ այնուհետեւ դարձեալ քանի մը անգամ ճանապարհորդեց դէպ ի Նոր-Աշխարհն, Արեւելեան Հնդկաստանի ճանապարհը գտնելու նպատակով, բայց չի յաջողեցաւ. Այս մեծ մարդն իր մնացած կեանքին մէջ մարդկային նախանձի և ապերախտութեան զոհ ըլլալով շատ զրկանքներ և անպատուութիւններ կրեց. Նոյն իսկ թագաւորը չարախօսներու հաւատալով, նոր փոխարքայ մը նշանակեց Կոլոմպոսի տեղ, Պապատիլլա անուն չար մարդ մը, որ Սպանիոլա համելուն պէս շղթայի զարկաւ կոլոմպոսը ու անոր երկու եղբայրներն և զրկեց Սպանիա: Կոլոմպոս արդարացաւ, բայց երբէք չի կրցաւ մոռնալ այս սարսափելի անպատուութիւնն և մեռած ժամանակ կտակեց որ իր հետ գերեզման դնեն այն շըշմարդներն որով կապեցին զինքն իբրեւ վարձ իր այնքան ծանրակշիռ վաստակներուն:

Կոլոմպոս մեռաւ 1506 թուականի մարտ 15ին, չըքաւորութեան մէջ, հալածուած մարդկային չարանենգութենէ և ապերախտութենէ. կտակին համաձայն մարմինը փոխադրեցին Սէն-Դոմինիկոյ կղզին. բայց յետոյ, երբ այդ երկիրը Թրանսացիներուն ձեռքն անցաւ, կոլոմպոսի ոսկրները Քուբա կղզին տարուեցան:



### ՎԱՍՔՈՅ ՏԷ ԳԱՄԱ

Ինչպէս որ տեսանք, կոլոմպոս ուղեւորեցաւ Արեւելեան Հնդկաստանի ճանապարհը գտնելու դիտմամբ,

բայց անոր փոխարէն նոր-Աշխարհն՝ Ամերիկան գտաւ. նոյն ժամանակները Փորթուգալցիներն ալ, որոնք վաճառական և գործունեայ նաւորդ էին, ուրիշ ճամրով, այսինքն Ափրիկէի շուրջը նաւելով կ'աշխատէին Հընդկաստան մտնել: Եզերքէն երթալով՝ Փորթուգալցիները յաջողեր էին Ափրիկէի հարաւային մասերն հասնիլ, բայց ոչ ոք համարձակած էր ի գլուխ հանել այդ ձեռնարկը: Վերջապէս Փորթուգալի Մեծն իմանուէլ թագաւորը չորս նաւ պատրաստել տուաւ և յանձնեց զանոնք փորձառու. և խելացի նաւապետի մը, որու անունն էր Վասքոյ տէ Գամա:

1497 յունիս 9ին Վասքոյ տէ Գամա իր չորս նաւերով լիբրոնի նաւահանգիստէն մեկնեցաւ դէպ ի հարաւ: Հակառակ հովը այնքան արգելք եղաւ որ նոյեմ. 20ին հազիւ նաւերն անցան Ափրիկէի հարաւային ծայրի Բարեյուսոյ հրուանդանն, ուսկից դարձան դէպ ի հիւսիսային արեւելք: Շատ անգամ Վասքոյ տէ Գամայի նաւաստիներն ալ կոլումպոսի նաւաստիներուն նման կը արտնչէին, մինչեւ անգամ խռովութիւն կը հանէին անոր դէմ, բայց ան ալ միշտ իր հեռատեսութեամբ և հաստատամութեամբ կը հանդարտեցնէր և կը հնազանդեցնէր զանոնք: Յաջողակ հովը վերջապէս հասցուց Վասքոն այն տեղն որ հիմա կը կոչուի Սոֆալ: 1498 մարտի սկիզբները, Փորթուգալցիները հասան Զանզիպարի եզերքն: Այն տեղ նոր վտանգ մը կը սպասէր անոնց: Մաւրիտանացիները, որոնք հոն կը բնակէին ու վաճառականութիւն կ'ընէին, իմացան որ նորեկներն այն ազգէն էին որ այնքան կամակորութեամբ և քաջութեամբ Ափրիկէի հիւսիսային եզերքներն իրենց հետ կը պատերազմէր: Ուստի վախնալով


թէ մի' գուցէ Հնդկաց հարուստ վաճառականութիւնն եւրոպացիներու ձեռքն անցնի, պատրաստուեցան դէմ դնել նորեկներուն:

Հնդկաստանի վաճառականութիւնն ամբողջապէս անոնց ձեռքն էր այն ժամանակ, այնպէս որ Սպանիացիները, Փորթուգալցիները և Իտալիոյ վաճառաշահքաղաքներու բնակիչները, Վենետիկցիները և ձենովացիները, անոնց միջնորդութեամբ միայն Հնդկաստանի հետ վաճառականութիւն կ'ընէին: Մեծ խելք և արիութիւն ունենալ կը պարտէր Փորթուգալցի ծովապետն այն ամէն խոչընդուներն ու վտանգներն հեռացընելու համար, զոր Մաւրիտանացիները կը պատրաստէին իրենց դէմ: Այդ արգելքներուն դէմ մաքատելով՝ մայիսի 20ին հասաւ Վասքոյ տէ Գամա Կալկաթա որ Հնդկաստանի ամենածաղկեալ քաղաքն է Մալապարի ափանց վրայ: Հնդկաստանի, Արաբիոյ և Ափրիկէի արեւելեան ծովեզրերու բովանդակ վաճառականութիւնն հոն կեդրոնացած էր: Մաւրիտանացիները այս տեղ եւս կը ջանային արգելքներ յարուցանել Փորթուգալցիներու դէմ, բայց ծովապետը կարողացաւ այդ երկրի թագաւորին համակրութիւնը գրաւել:

Դոհ իր նոր գիւտով՝ Վասքոյ տէ Գամա վերադարձաւ 1499 սեպտեմբերի մէջ Լիզբոն, ուր թագաւորը մեծամեծ պարգեւներով վարձատրեց զայն: Վասքոյ տէ Գամա երկրորդ անգամ ճամբորդելով՝ երկու նոր գաղթականութիւն հաստատեց Ափրիկէի ծովեզրերուն վրայ, Մոզամբիկ և Սոֆալ, որ կը մասն մինչեւ այսօր: Զինու զօրութեամբ պատժեց այն Մաւրիտանացիներն որոնք անհանգիստ էին ըրած զինքն, և բարեկամական յարաբերութիւններ հաստատեց շատ մը Հնդիկ թա-

գառորներու հետ։ Ամենակարճ միջոցի մէջ այս ամէնն իրագործելէ յետոյ, Վասքոյ տէ Գամա 1503 դեկտեմբերի մէջ Լիզբոն վերադարձաւ 30 նաւով, ամէնն ալ հարստութիւններով բեռնաւորուած։

Վասքոյ տէ Գամա փոխարքայ կարգուեցաւ Ասիոյ Փորթուկալեան երկիրներուն և մեռաւ Հնդկաստանի մէջ, ուրկէ մարմինը Լիզբոն փոխադրուեցաւ և փառաւոր հանդէսով թաղուեցաւ հոն։



## ՄԱՃԷԼԼԱՆ

Կոլոմպոս և Վասքոյ տէ Գամա մեծ գիւտեր ըրին, բայց անոնցմէ ոչ մէկը Երկրագունտիս շուրջը պտտեցաւ։ Այս փառք վիճակուած էր Սպանիայի Փերտինանտ Մաճէլլան նաւապետին։ Փորթուկալցի ծննդեամբ, Մաճէլլան Կոլոմպոսի թերի թողածը մտածեց իրագործել, այսինքն Սպանիայէն դէպ ի արեւմուտք ուղեւորիլ և Ամերիկայի հարաւային ծայրէն անցնելով Արեւելեան Հնդկաստան անցնիլ։

Մաճէլլան իր ծրագիրը բացատրեց Սպանիոյ Կարոլոս Ե. թագաւորին որ ամէն միջոց ընձեռեց անոր այդ նպատակին հասնելու համար։

1515 Սեպտեմբեր 20ին՝ Մաճէլլան իր հինգ նաւերով մեկնեցաւ Սպանիոյ ափունքէն և բռնեց նախ այն ուղին զոր ընտրած էր Կոլոմպոս, բայց Ամերիկա հասնելուն պէս դէպ ի հարաւ խոտորեցաւ և նաւարկեց անոր հարաւային ափերուն ուղղութեամբ, երբեմն մեծ գետերու բերանները մտնելով։ Հովը յաջողակ էր, այսու հանդերձ հազիւ յաջորդ տարուան գեկտեմբե-

րին Մաճէլլանի նաւախումբը կրցաւ հասնիլ Ամերիկայի հարաւային ծայրն՝ 1000 մղոն ճամբայ ընելէ ետքը։ Նոյն ամսոյ վերջերը մտաւ այն նեղուցն որ Ամերիկայի ցամաքը կը բաժնէ Հռոյ երկիր կոչուած կղզիէն։ Նեղուցին երկու կողմը կանգնած էին բարձր լեռնաժայռեր, բայց նաւելու արգելք չի կար և Սպանիացիները շուտով մը անցնելով մտան այն մեծ Ովկիանն, որ, ինչպէս քարտէսի մը վրայ կրնաք տեսնել, կը տարածուի Ամերիկայի միւս կողմը՝ գրաւելով ամբողջ երկրագունտիս կէսէն աւելին և կը հասնի մինչեւ Հին-Աշխարհի եզերքը։ Զորս ամիս շարունակ նաւարկեց Մաճէլլան այդ անհուն Ովկիանի մէջ, և օդն ու ծով այն չափ խաղաղ էին որ Մաճէլլան Խաղաղական Ովկիանոս անուանեց այդ ահագին ջրակոյտը։ Իսկ այն նեղուցն, ուրկէ Սպանիացիները անցան և մտան Խաղաղական Ովկիանոս, անուանեցաւ նեղուց Մաճէլլանի, ի յիշատակ այն յանդուգն նաւորդին որու անունն արժանի էր անմահացման։ Այժմ, ճշմարիտ է, շատ շուտ և շատ գիւրաւ կը նաւեն Խաղաղական Ովկիանի վրայ, որովհետեւ ամէն նաւաստի գիտէ թէ ինչ պիտի ելլէ իր առջեւ։ Իսկ այն ժամանակ ո՛չ նաւապետն և ո՛չ նաւաստիները գիտէին այդ և անոնցմէ շատեր մինչեւ անդամ կը կարծէին թէ վերջապէս աշխարհի ծայրը պիտի հասնէին և անկէ անծանօթ և անյատակ անդունդի մը մէջ պիտի գահավիժէին։ Արգարեւ մեծ քաջութիւն պէտք է ունենայ մարդ չորս ամիս անդադար նաւելու համար, չգիտնուով թէ ո՛ւր կը դիմէ, և առանց ցամաք տեսնելու միշտ ընթանայ դէպ ի առաջ։

Առաջին երկիրն, ուր հասաւ այդ փոքրիկ նաւախումբ, Խաղաղական Ովկիանի վրայ կղզիներու խումբ

մըն էր, որու բնակիչները վայրենիներ էին, և մեծ փափաք ու ճարպիկութիւն ունէին ուրիշներու ստացուածքը կապտելու. այս պատճառով Մաճէլլան այդ կղզիներն Աւազակներու կղզիներ անուանեց : Աւազակներու կղզիներէն յանդուգն ծովապետը դարձեալ դէպի արեւմուտք նաւեց և հասաւ ուրիշ խումբ մը կղզիներ, զոր Փիլիպեան անուանեց : Փիլիպեան կղզիներուն վայրենիներուն թագաւորը մեծ քաղցրութեամբ ընդունեց զինքն և իր մերձակայ թշնամի թագաւորին դէմ պատերազմելու համար օդնութիւն խնդրեց իրմէն, և այս օգնութեան փոխարէն խոստացաւ քրիստոնէութիւնն ընդունիլ և միանգամայն Սպանիոյ թագաւորութեան գերիշխանութիւնը ճանչնալ :

Մաճէլլան համաձայնեցաւ և իր նաւաստիներու մէկ մասին հետ մօտեցաւ այն կղզին, որու թագաւորին դէմ կուուիլ խոստացեր էր : Բայց հազիւ Սպանիացիները թշնամի հողին վրայ ոտք դրին, պաշարուեցան անթիւ վայրենիներէ, որոնք համարձակ դիմագրեցին իրենց քարերով, նետերով և մահակներով : Սպանիացիները նախորդ ճամբորդներէ լսած ըլլալով թէ վայրենիները վառօդի գործածութեան սովորած չըլլալով չափազանց կը վախնային հրազէններէ, համարձակ առաջ դիմեցին : Բայց այս անգամ վայրենիները չի վախցան և այնպիսի քաջութեամբ պաշտպանեցին իրենց երկիրն, որ Սպանիացիները իրենց ուղմամթերքին ըսպառիլը տեսնելով ետ քաշուիլ սկսան : Այս տեսնելով վայրենիներն աւելի կատաղութեամբ յարձակիլ սկսան : Սպանիացիները փութով իրենց նաւերը դիմեցին, որովհետեւ նաւային թնդանօթները միայն կարող էին վախցնել վայրենիները, բայց դժբաղդաբար նաւերը

ծովեղերքէն շատ հեռու կեցած էին : Անվեհերն Մաճէլլան հանդարտութեամբ կը նահանջէր՝ առիւծաբար պաշտպանելով ինքինք : Վայրենիները գուշակեցին որ Մաճէլլան էր առաջնորդն, և սկսան անոր վրայ քարեր ու նետեր տեղալ կարկուտինման : Վերջապէս մահակի սաստիկ հարուած մը ընդունելով ոտքին վրայ, Մաճէլլան ինկաւ մեռաւ . իսկ թագաւորն, որու համար Մաճէլլան կորսնցուց իր կեանքը, վայրենաբար վարուեցաւ, մոռնալով իր խոստումներն, և դաւաճանութեամբ կոտորեց այն Սպանիացիներն որոնք իր կը զգին վերադարձան :

Նաւերուն մէջ մացող Սպանիացիները երբ իմացան իրենց նաւապետին և ընկերներու տխուր վախճանը, որոշեցին այրել նաւերէն մէկն և փախչիլ, որովհետեւ իրենք սակաւաթիւ էին երեք նաւերը կառավարելու համար : Շուտով հասան Մալուկեան կղզիներն որոնց թագաւորը քաղցրութեամբ ընդունեց զիրենք : Հոն նաւերը բաժնուեցան իրարմէ : Անոնցմէ մէկը փորձեց Ամերիկայի ճամբով Եւրոպա վերադառնալ, բայց թշնամի Փորթուկալցիներու ձեռքն ինկաւ . իսկ միւսը Բարեյուտոյ Գլխուն մօտէն անցնելով վերադառնալ, Սպանիա 1522 սեպտ 6ին : Այսպէս կատարուեցաւ շրջերկեայ ուղեւորութիւնն, որ հաստատեց թէ երկրիս շուրջը կարելի է պտտիլ առանց անոր ծայրն հասնելու, որովհետեւ ան ծայր չունի, ինչպէս որ նարինջը ծայր չունի : Այն նաւն, որով կատարուեցաւ այս հուշակաւոր ուղեւորութիւն, կ'անուանէր Վիկթորիա (Սպանիերէն՝ յաղթութիւն) : Սպանիացիները ծովեղերքը քաշեցին զայն և մինչեւ այսօր կը պահեն իբրեւ յիշատակ իրենց նախնեաց նշանաւոր քաջագործութեան :

Ներկայիս մէջ շրջերկրեայ ճամբորդութիւնն հազ-  
ուադէպ գործ մը չէ . շատ նաւեր և շոգենաւեր մի-  
այն առեւտրական շահագիտութեամբ անդադար կը  
յածին երկրիս շուրջն : Ամենէն աւելի անդլիական նա-  
ւերը կը կատարեն այդ շրջանը : Իրենց մայր երկրէն  
մեկնելով՝ Բարեյուսոյ հրուանդանին առջեւէն կ'անց-  
նին գէպի անդլիական գաղթականութիւններն , որ կը  
գտնուին Աւստրալիա , իսկ անկէ Խաղաղական Ովկիա-  
նոսի վրայէն նաւելով Մածէլլանի Նեղուցէն կ'անցնին ,  
կը մտնեն Ատլանտեան Ովկիանոսն և անկէ կը գառնան  
Անդլիա :

---

## 80 Դ ԵՒ ԳՈՂԱՐ

«Ի՞նչ ցոլք ունիմ ,  
Գոհարի՛կ .

Ի՞նչ լոյս ունիմ ,  
Գոհարի՛կ .

Դուն ի՞նչ ունիս ,  
Գոհարի՛կ .

Լոյս՝ գոյն ունի՞ս ,  
Գոհարի՛կ :

Լուսագեղ լոյս լուսնին ,  
Կաթիլն եմ արցունքին ,  
Գոհարի՛կ .

Անոյշ ձայնիկ սոխակին  
Առաջին հեղի ի գրախտին ,  
Գոհարի՛կ .

Երբ մարեցաւ ,  
Լուսին լացաւ ,  
Գոհարի՛կ :

Սոխակ լացաւ ու մարեցաւ ,  
Երբ իր սիրուն վարդ թօշնեցաւ ,  
Գոհարի՛կ .

Ես ցողն եմ այն , կեանք այն օրէն  
Լուսնի առի սուրբ արտօսրէն ,  
Գոհարի՛կ .

Իսկ գուն ի՞նչ ես . Հո՞ղ ես թէ քար ,  
Բսէ , ո՞վ ես . ուստի՞ ծնար ,  
Գոհարի՛կ :

Զ'արգահատիմ ի՞նչպէս վըրադ ,  
Երբ մնացեր ես անփառունակ ,  
Գոհարի՛կ .

Պիտի նայիս որ մէկ աստղիկ  
Փայլի վառի վերեւ գլխիդ ,  
Գոհարի՛կ .

Որով մէկ քիչ գու և փալփլիս  
Մութ պսպղուն լուսովդ պարծիս ,  
Գոհարի՛կ .

Կամ պիտի նայիս որ ես  
Վըրադ իջնեմ , լուսիկ տամքեղ ,  
Գոհարի՛կ :

Թագ եմ եղեր արեւ պըստէ  
Ծաղկին՝ խոտին առ հասարակ ,  
Գոհարի՛կ .

ի թարմ տերեւս մարդրտայեռ  
Մանեակ լուսոյ ես. եմ կապեր,  
Գոհարի'կ:

Ո'վ կողջունէ սուրբ արշալոյս,  
Եթէ ոչ նախ իմ միակ լոյս  
Գոհարի'կ.

Ո'վ կ'ողջունէ հիմի արեւ,  
Եթէ ոչ նախ իմ լոյս արեւ,  
Գոհար  
Թըշուառ :

«Ինձ կեանք ու լոյս Տէրն է պուեր  
Ես այս գիտեմ, գոհ եմ յաւետ,  
Գիտեմ և այս թէ քո ողջոյն  
Արեւ չ'առած՝ նա իսկ իսկոյն  
Գո կեանք կ'առնու  
Ո'վ ցօղիկ դու : »

Խօսքը կարեց. արեւն արդէն,  
Որ ծագել էր լերանց գիէն.  
Ցող արեւէն մահ առաւ,  
Իսկ Գոհարիկ լոյս տեսաւ . . .  
Վ. Վ. Տէր ՄինԱՍԽԱՆ



### ԼԻՎԻՆԿՍԹԸԸՆ

Լիվինկսթըն ծնաւ 1815ին Սկովտիոյ Պլանթայր  
գիւղն: Իր ծնողք աղքատ մարդիկ ըլլալով՝ ուզեցին  
որ իրենց զաւակը գործաւոր ըլլայ. Լիվինկսթըն հնա-  
զանդեցաւ իր ծնողքին ձայնին և սակայն գերմարդ-

անոր։ Անկէ գնաց Ա. Բօլ տը Լէօնտայի երկիրը, բայց երկար ժամանակ չի մնաց այն բարբարոս երկիրներուն մէջ։ Զանպէզի եզերքէն Հնդկական Ովկիանու կողմերը, դիմեց, անծանօթ ջրվէժներու, քաղաքներու, լիճերու հանդիպեցաւ, գրեթէ ամէն տեղ բնիկներէն սիրալիր ընդունելութիւն գտաւ, որոնք զայն ողջունելու կամ իրենց համակրանքն իրեն յայտնելու համար կռնակի վրայ կը պառկէին, հողին վրայ կը թաւալէին և իրենց կուրծքը կը ծեծէին։ միանդամայն զանազան ընծաներ նույիրեցին անոր։ Երբ իմացան անոր մեկնիլը, բազմութեամբ ժողվեցան անոր շուրջն և ծունը իջած կ'աղաչէին որ զիրենք ալ միասին Անդլիա տանի։ Լիվինկըսթըն բնիկ սեւամորթ մը առաւ միայն իր հետը, բայց երբ նաւը մեկնեցաւ նաւահանգիստէն, վայրենին այնչափ ահ ու սարսափ զգաց Ովկիանու ահեղ տեսարանէն, որ խելագարելով ինքինքը ծովը նետեց։ Երբ Լիվինկսթըն Անդլիա վերադարձաւ, մեծ պատիւներ եղան իրեն։ ամէն ընկերութեանց մէջ մտաւ, և իր ուղեւորութիւններու պատմութիւնը մեծ աղնուկ հանեց եւրոպայի մէջ, որովհետեւ առաջին ճանապարհորդն էր որ Ափրիկէի խորերը կը մտնէր և անծանօթ երկիրներ կ'այցելէր։

1858ին երկրորդ ուղեւորութեան մը ձեռնարկեց։ Զամպէզի հօվիթը գնաց, Վիքթօուիայի ջրվէժները գտաւ, ինչպէս նաեւ բազմաթիւ լիճեր կեդրոնական Ափրիկէի մէջ։ Նոր տեսարաններու, նոր ժողովուրդներու հանդիպեցաւ, զարմանագեղ կենդանիներ, ջրային հսկայ թռչուններ, երկայնակտուց արագիլներ, յաղթամարմին փիղեր, արագընթաց ճայեր տեսաւ, բնիկները սարսափահար՝ հիացմամբ կը տեսնէին Լի-

կային ճիգերով կրցաւ ամէն խոչնդոտներու դիմադրել իր բաղձանքին կատարման համար։ Լիվինկսթընի կեանդքըն երկու մասի կը բաժնուի։ մէկն գործ աւորութեան նուիրուած, միւսը՝ գիտութեան։ Առաւօտուն գործատուն երթալէ առաջ կը կարդար։ իրիկուան երբ տուն կը վերադառնար, դարձեալ գիրքը կը բանար։ օրն ի բուն գիտական գիրք մը բաց դրած իր առջեւ, անյագաբար աշերով կը լափէր անոր երեսները, մինչ իր ձեռքերն իրենց պաշտօնը կը կատարէին, այսինքն կ'աշխատէր և կը կարդար միանդամայն։ Այս եղանակով կրցաւ ուսանիլ լատիներէն, չափսգիտութիւն, պատմութիւն, բժշկութիւն, աշխարհագրութիւն, գրագիտութիւն և աստուածաբանութիւն։

Տասն և հինգ տարեկան հասակի մէջ ճարտար կը տաւագործ մը եղաւ, և շնորհիւ իր բրած ին այովութեանց ձմեռները կ'երթար կլասքով բժշկական և աստուածաբանական ուսմանց զբաղելու և հելլեն լեզուն ուսանելու, Գրագիտական վարդապետի (սովորէօր) աստիճան ստանալով՝ ուզեց քարոզիչ ըլլալ և երթալ Աւետարանը քարոզել բարբարոս երկիրներու մէջ։

Լիվինկսթընի ամենէն մեծ գործն եղաւ դժուարին ուզեւորութիւն մը ընել Ափրիկէի արեւմտեան կողմէն մինչեւ Ատլանտեանի եզերքն՝ այսինքն անծանօթ և ամայի երկիրներու մէջ 400 մղոն ճամբորդել։ Առաջին այցելած երկիրն եղաւ Պառօցէի երկիրն, որութնակիշները քաղաքավար էին. և իրը նշան բարեկամութեան՝ մոխիրով լի պարկ մը կը բերէին և անով կը շիէին այցելու հիւրին թեւերն ու կուրծքն։ Երկրին մէջ բնիկ Զինթէ թագաւորն ալ սիրալիր ընդունելութիւն մը ըրաւ Լիվինկսթընի և մանեակ մը ընծայեց

վինկսթընի շողենաւն ամէն անդամ որ գետեզրին կը մօտենար : Այս երկրորդ ուղեւորութեան ժամանակ ահագին փոթորկ մը պատահեցաւ , որ շողենաւը ջարդ ու փշուր պիտի ընէր , եթէ անմիջական օդնութիւններ չի հասնէին . գետեզրին բնակիչներն , հակառակ իրենց զգացած երկիւղին , օդնութեան դիմեցին և ալիքներու մոլեգնութենէն ազատեցին Լիվինկսթընը և ուղեկիցները : Լիվինկսթըն իր ուղեւորութիւնն յաջողութեամբ կատարելով՝ Անգլիա վերադարձաւ , բայց անձնական մէկ քանի դժբաղդութիւններ ունեցաւ . իր եղբայրն ու կինն Ափրիկեան կլիմային դաժանութեան զոհ գացին :

1865 ին երրորդ անդամ ուղեւորութիւն մը ըրաւ : Այս անդամնպատակ ունէր Կեդրոնական Ափրիկէի խորերն երթալ , զոր իրմէ առաջ այցելած էին Անգլիացի ուղեւորներ : Այս ուղեւորութեան միջոցին Լիվինկսթըն երկար ժամանակ անծանօթ մնաց Եւրոպայի : Այնպէս կարծուեցաւ թէ մեծանուն ուղեւորը մեռած և կամ վայրենիներու կատաղութեան զոհ գացած էր : Ամբողջ երկու տարի լուր չեկաւ իրմէ : Ամերիկայի Նիւ-Եօրֆ Հէրալտ լրագրին թղթակից Պ. Սթէնլի յատկապէս Ափրիկէ ուղեւորեցաւ Լիվինկսթընի հետքը գտնելու համար և յաջողեցաւ ալ գտնել զայն : Ափրիկէի անծանօթ խորերուն մէջ իրարու հանդիպեցան , անպատում ուրախութեամբ իրար ողջագուրեցին , և Եւրոպա մեծապէս բերկրեցաւ երբ լսեց մեծանուն ուղեւորին կենդանի ըլլալը : Բայց Լիվինկսթըն չի կրցաւ վայելել իր հայրենակիցներու իրեն համար պատրաստած պատիւները : Տեղական տենդէն բռնուեցաւ . ամէն դարման և խնամք անօդուտ եղան , և մեռաւ ան

Ափրիկէի հողին վրայ : Մարմինն յատուկ շողենաւով Անգլիա տարուեցաւ , և այսօր կը հանդչի Ուէսթմինսթէրի Աբբայարանին մէջ : Անգլիայ կառավարութիւնը «Հարաւային Ափրիկէի Քրիստափոր Կոլոմպոս» բարձր տիտղոսը շնորհեց այս մեծ ուղեւորին և պատշաճ թոշակ մը յատկացուց անոր ընտանիքին :

## Ս Թ Է Ն Լ Ի

1869ին , բովանդակ Եւրոպա իր ուշադրութեան առարկայ ըրած էր Լիվինկսթընի անյայտ մնալն : Երկար տարիներ լուր չէր առնուած անկէ : Աշխարհագրական ընկերութիւններն և մանաւանդ Անգլիա խուզարկուներ զրկեցին Ափրիկէ՝ անոր հետքը գտնելու համար : Տարակոյս չէր մնացած թէ մեռած պիտի գըտնէին զանի Ափրիկէի մէկ անծանօթ խորշն : Այս ընդհանուր անստուգութեան միջոցին , Ամերիկեան Նիւ-Եօրֆ-Հէրալտ լրագրին տնօրէն Պ. Պէնէթ , որ հարուստ էր և շատ բան ընելու կարող , հրամայեց իր թղթակիցներէն մէկուն՝ Պ. Սթէնլիի , որ Կեդրոնական Ափրիկէ երթայ և Լիվինկսթընի հետքը գտնէ : «Պիտի երթաք , պիտի գտնէք զանի և յաջող լուրեր պիտի բերէք մեզ» , ըսաւ անոր : Սթէնլի հասկցաւ սոյն լակոնական հրամանին իմաստն : Առանց ո՛ւ և է դիտողութեան՝ հաւանութիւն տուաւ և անմիջապէս մեկնելու պատրաստուեցաւ : 1870 տարւոյն օգոստոս ամսոյն մէջ ճամբայ ելաւ , գնաց Եգիպտոս , անկէ անցաւ Երուսաղէմ , ապա Պոլիս եկաւ և Փոքր Ասիոյ ու Պարսկաստանի մէջէն անցնելով՝ գնաց Հնդկաստան : Անկէ նաւ նստե-

լով վերջապէս հետեւեալ տարին հասաւ Զանզիպար որ  
կեդրոնական Ափրիկէի նաւահանգիստը կը համարուի  
այսօր։ Սթէնլի Զանզիպարէն ճամբայ ելաւ դէպ ի



կեդրոնական Լիճերն ուր կը յուսար գտնել Լիվիկսթը-  
նը կամ անոր հետքը։ Բնիկներն անհիմն տեղեկութիւն-  
ներ կը հաղորդէին իրեն։ կ'ըսէին թէ՛ Լիվիկսթըն


մարդատեաց մը եղած էր, մինչեւ իսկ մարդակեր, և  
զինքը փնտողներէն կը հեռանար։ Սթէնլի հաւատք  
չընծայեց այս յուսահատական լուրերուն և իր խու-  
զարկութիւններն յառաջ մղեց կեդրոնական Ափրիկէի  
խորերը։ Իր ուղեւորութեան միջոցին միանգամայն  
երկրին սովորութիւններն ու բարքերը կ'ուսումնասի-  
րէր։ Այնպիսի ժողովուրդներու հանդիպեցաւ, որոնք  
հարիւր մարդոց օրական աշխատութիւնը 40 կանգուն  
բամպակ կերպասի հետ կը փոխանակէին, իսկ բուրդէ  
կերպասները, արոյրները, թելերն իրը դրամ կը գոր-  
ծածէին։ Սթէնլի երկու ձի և երկու էլգնեց բնիկներէն,  
և 192 մարդոցմէ բաղկացած կարաւանի մը գլուխն  
անցնելով՝ այնպիսի երկիրներու մէջ մտաւ, ուր իրմէ  
առաջ ոչ ոք համարձակած էր ոտք կոխել։

Դալարաւէտ և արդաւանդ դաշտերու մէջէ ան-  
ցաւ, բարեբեր երկիրներէ որոնց կլիմային տօթակէզ  
ջերմութիւնը տարափոխիկ հիւանդութիւններ կը պատ-  
ճառէր։ Հասարակածային ամէն յատկութիւններով օժ-  
տուած այդ տեղերը այնպէս մեծասքանչ և դիւթա-  
կան տեսարաններ կ'ընծայէին, որոնց վրայ գաղափար  
մը ստանալու համար հարկ է ուղեւորութիւն ընել  
կեդրոնական Ափրիկէի մէջ։ Վայրի գաղաններ, վտան-  
գաւոր կենդանիներ, թունաւոր միջատներ և ճիճիներ  
այնքան շատ են այդ երկիրներուն մէջ, որ մարդ կը  
վարժուի ապրիլ անոնց մէջ՝ առանց երկիւղ մը զգալու։  
Տեղական տենդն ամենէն աւելի վտանգաւոր հիւանդու-  
թիւնն է թէ՛ բնիկներուն և թէ՛ օտարականներուն հա-  
մար։ Այդ տենդէն մեռաւ Լիվինկսթըն։ Սթէնլի շատ  
դժուարութիւններու հանդիպեցաւ, աննկարագրելի  
դժուարութիւններ կրեց, բայց ամենուն ալ դիմացաւ

տոկուն կամքով և համբերատար ոգիով։ Այնպէս կը թուեր իրեն թէ ներքին ձայն մը միշտ կ'ըսէր իրեն։ «Ձանա՛ գտնել Լիվինկսթընը։ Եւրոպա լուրերուդ կը սպասէ անհամբեր։» Իրեւ քաջ զինուոր կը մարտնչէր ամէն դժուարութեանց, ամէն արգելքներու հետ։ Մեկնելէն 136 օր յետոյ, նոյմ. 10ին, հասաւ Թանկանիքա լիճին եղերքը գտնուող բարձր լերան վրայ։ Կարաւանն ուրախութեան աղաղակներով ողջունեց այս լիճն։ Սթէնլի հոն կը տեսնէ Լիվինկսթընի հաւատարիմ սպասաւորն որ իրեն կը մօտենար, կ'ողջունէ զայն և սիրով կը հիւրընկալէ իր վրանը։ Կ'իմանայ Լիվինկըսթընի ողջ ըլլալը և կը խնդրէ տեսակցիլ անոր հետ։ Իր խնդիրը կը կատարուի։ Երկու մեծ ուղեւորները իրար կողջունեն Ափրիկէի անծանօթ խորչին մէջ։ Սթէնլի կը յայտնէ Լիվինկսթընի իր ուղեւորութեան նպատակն և երկարօրէն կը պատմէ այն աշխատութիւնները զոր Անգլիոյ Աշխարհագրական Ընկերութիւնն ըրածէր անոր հետքը գտնելու համար։ Նոյն վայրկեանին ամէն խնդիր կը լուծուի։ Սթէնլին Անգլիա պիտի վերադառնար Լիվինկսթընի կենդանութեան աւետիսը տանելու համար։ Թախանձանօք կ'աղաչէ Լիվինկսթընի որ իրեն ընկերանայ, բայց ան յանձն չ'առնէր։ ամէն յորդորանք, ամէն աղաշանք անօդուտ կ'ըլլան։ Ուստի Սթէնլի միայնակ կը վերադառնայ Անգլիա։ Իր ուղեւորութեան յաջող լուրը կը տարածուի ամէն կողմ։ Աշխարհագրական Ընկերութիւնն ոսկի շքադրամ մը կը նուիրէ անոր և Վիթօրիա թագուհին ալ ադամանդաղարդ ծխախոտի տուփ մը։

Սթէնլիի պատմութիւնն և իր յաղթանակն այսանով չի վերջանար, Երկրորդ ուղեւորութիւն մը, ա-

ուաշինէն աւելի մեծ, աւելի նշանաւոր, դարուս ամենէն հոյակապ մարդոցմէն մէկն պիտի ընէր զայն։ Վերջին քանի մը տարիներուն մէջ Սթէնլի պտըտեցաւ Ափրիկէի անծանօթ խորչերն, երկար ամիսներ բնաւ ո՛ւ է լուր չ'առնուեցաւ իրմէ, շարունակեց իր արկածալից խուզարկութիւնները Ափրիկէի խորերն, անծանօթ երկիրներ գտաւ, վայրենի ժողովուրդներ տեսաւ և խնամով ուսումնասիրեց, Էմին փաշայի հանդիպեցաւ, որմէ բնաւ լուր առնուած չէր երկար ժամանակէ ի վեր և այսպէս գեղեցիկ գլուխ մը աւելցուց Ափրիկէի աշխարհագրական պատմութեան մէջ։ միանգամայն ամէն վեհապետներու մեծարանքներուն արժանի եղաւ։ Սթէնլիի անունն այսօր տիեզերական եղած է։



ԵՐԿՆԱԿԱՄԱՐ

Երբ սենեակի մը մէջ կանգուն կենանք, մեր ոտքերուն տակ կըլլայ յատակը, իսկ մեր գլխուն վերև՝ առաստաղը։ Բայց երբ գուրս ելլենք փողոցը, այդին, դաշտը, ան ժամանակ մեր ոտքերուն տակ կըլլայ երկիրը, իսկ վերը երկինքը, ոչ իրեւ ցած առաստաղ, այլ անհուն բարձրութեամբ բիւրեղանման կապոյտ կամար։ Այս բարձր և սքանչելապէս գեղեցիկ կամարին վրայ շատ նշանաւոր երեւոյթներ կը տեսնենք. ցորեկը՝ լուսապայծառ արեգակը, գիշերը՝ ճաճանչագեղ լուսաինը և բիւրաւոր շողշողուն աստղեր. երբեմն կը տեսնենք թափառական գիսաւոր աստղը, որ իր երկար վարսով այնքան երկիւղ կ'ազդէ նանրահաւատ մարդոց։ Ասոնցմէ զատ դրեթէ միշտ երկնքին վրայ կը թափառին բազմաթիւ ամպեր, երբեմն մթագոյն, երբեմն կապտագոյն, իրեւ սպիտակ լեռներ, որոնք յաճախ իրիկուան վերջալուսի կամ առաւտօտեան արշալուսի ճառագայթներէն լուսաւորուելով կը փայլին ոսկիի պէս։ Շատ անգամ ամպերուն մէջ կը տեսնենք հրացայտ կայծակն եւ անձրեւէն յետոյ յաճախ կը զուարճացնէ մեր աչքերը փառահեղ և երփներանգ ծիածանը իրեւ գոյնգոյն նարօտ մը, որ աղեղնաձև կը պատէ տմբողջ երկնակամարը՝ ծայրերը երկրիս վրայ կը թնելով իսկ շուրջը կը տարածուի պայծառ ու կապոյտ երկինքը։

Երբ կանգնինք ընդարձակ դաշտի մը մէջ, մեր անարդել նայուածքին առջև գնտածեւ կ'երեւայ երկնակամարը. իսկ այն եղերագիծն, ուր երկինք երկրիս

հետ կը միանայ, մեզ կը թուի իրը և ահագին շրջանակ մը՝ որու կեդրոնը կը գտնուինք մենք։ Բայց այդ շրջանակ, որ հորիզոն կամ ոլորտ կը կոչուի, կարծես կախարդային է. ո՛ւր որ երթաք, ձեր կեցած տեղէն հազար մղոն հեռու եւս սլանաք, ո՛չ միայն այդ շրջանակն գուրս չեք կրնար ելլել, այլ միշտ նոյն իսկ անոր մէջտեղը կը գտնուիք։ Ուր որ երթայ մարդ, ամէն տեղ կը տեսնէ երկնակամարը իր գլխուն վրայ բարձրացած և ինքն ալ հորիզոնին մէջտեղ կանգնած, կամարին նոյն իսկ ամենաբարձր կէտին տակ, վերջապէս ամբողջ երկրագունածը պտըտելով, հաստատապէս կը համոզուինք թէ ոչ մէկ աեղ երկինքը երկրիս հետ միացած է. ան մեզ երկու կամար կը թուի, բայց իսկապէս ո՛չ թէ կամար է, այլ թափանցիկ օգը որ կը շրջապատէ երկիրը. և իր անհուն բարձրութեան և թանձրութեան պատճառով, ծովու շուրի պէս կապոյտ կ'երեւայ։ Օգը կամ միմուլորտը 60-70 մղոն թանձրութիւն ունի։ Այն կապտագոյն օդին մէջէն կը տեսնենք Արեգակը. Լուսինը ու աստղերը. իսկ ամպերը, ինչպէս յայտնի է ձեզ, ո՛չ թէ երկնքին վրայ այլ օդին մէջ կը լողան. Գալով ծիածանին, ան իր երկու ծայրով չի կրթնիր երկրի վրայ, ինչպէս կը կարծեն շատեր, այլ մի միայն արեւին ճառագայթներուն բեկրեկումնէ։ Արդարեւ եթէ պայծառ օր մը արեւուն ճառագայթներուն ներքեւ ջուր սրսկենք, կրնանք տեսնել թէ ինչպէս վայրկեանին մէջ ջրի կաթիներուն մէջ կը փայլի բազմերանգ ծիածանը։ Ծիածանի երեւոյթը կը յայտնուի նաեւ երբոր շիշ մը ջուր գնէք պատուհանին առջին՝ արեւին գէմ։ Այդ կը նշանակէ թէ ծիածանը, թէկ աղեղնաձև կը թուի մեզ, կամարածեւ է։

## ԵՐԿՐԻՍ ՇԱՐԺՈՒՄԸ

Նոգեկառքը ձիաւորէն տասն անգամ աւելի արագ կ'ընթանայ. եթէ երկրագունդին շուրջը երկաթուղի մը ըլլար, այն ժամանակ շոգեկառքը գիշեր ցերեկ անդադար ընթանալով և վայրկեան մը անգամ հանգիստ չ'առնելով՝ հաղիւ 30 օրուան մէջ կրնար կատարել այդ ճամբան, որովհետեւ երկրագունդին տրամագիծը 12,000 մղոն է, և շրջանակը 37,000. ինչպէս որ կը տեսնէք, ան փոքրիկ գունտ մը չէ: Գիտուններուն հաշուին նայելով, երկրին զանգուածը իր քարերով և մետաղներով երկաթէն աւելի թէեւ թէեթէ է, բայց որձաքարէն ու միւս բոլոր քարերէն աւելի ծանր է. կը ընաք երեւակայել թէ 37,000 մղոն շրջանակ ունեցող այդպիսի գունտի մը ծանրութիւնն ո'րքան մեծ կ'ըլլայ. Ամբողջ երկրագունդը շրջելով մարդիկ չը գտան տեղ մը, որու վրայ այս ծանր մարմինը կրթնի, որով համոզուեցան թէ երկրիս շուրջն ամէն տեղ օդ կը գտնուի և օդէն անդին ահագին դատարկ տարածութիւն:

Տիեզերքի այս անսահման տարածութեան մէջ երկիրս միենոյն տեղն անշարժ չի կենար, այլ իրեւ օդին մէջ նետուած գնտակ մը կամ իբր կառքի անիւ մը կը կատարէ երկու շարժում, թէ՛ առանցքին վրայ թաւալելով և թէ՛ մի և նոյն ժամանակ դէպի ի առաջ ընթանալով. Մեծ արագութեամբ ընթանալով հանդերձ, երկիրս, որու իւրաքանչիւր կէտը մէկ ժամու մը մէջ 1,500 մղոն կ'ընթանայ, ա'յնքան մեծ է, որ արեւին շուրջը պտոյտ մը ընելու համար 365 օրուան և 6 ժամու կը կարօտի: Բայց եթէ երկրիս այդշափ արագութեամբ ոլանալը չենք զգար, պատճառն այն

է որ անոր ընթացքը դատարկ տարածութեան մէջ կատարուելով՝ բանի մը չի հանդիպիր և չի դպչիր: Եթէ այդ արագ ընթացքին մէջ բան մը անոր դպչէր և գէթ վայրկեան մը կասեցնէր, այն ժամանակ սարսափելի ցնցումէն ոչ միայն անոր վրայ բնակող կենդանի արարածները կ'ոչնչանային. այլ նոյն ինքն երկիրը ջարդու փշուր կ'ըլլար: Իսկ երկրիս այդպէս արագ ընթացքին ժամանակ մեր շնչառպառ չըլլալուն պատճառն այն է որ զայն շրջապատող օդը կամ մթնոլորտն ալ միասին կը շարժի, ինչպէս նաեւ այն ամէն առարկաները որ անոր վրայ կը գտնուին:

Մենք կ'ընթանանք, կը պտտինք երկրին և մթնոլորտին հետ, ինչպէս և մեր շուրջը գտնուող բոլոր առարկաները, բայց ամենեւին չենք նշմարեր այդ շարժումը, այլ ընդհակառակն կը կարծենք թէ արեգակն է որ երկրիս շուրջը կը գտնայ և երկիրն անշարժ է: Երբ մէկը նաւակի, շոգենաւի կամ շոգեկառքի մէջ նստած սրարշաւ ընթանայ, այդ պարագաներու մէջ նշմարած է անշուշտ թէ ի'նչպէս կը փախչին ափերը կամ ցամաքը. այլ իսկապէս ոչ թէ ափերը կամ ցամաքն է փախչողն՝ այլ այն շոգենաւն կամ շոգեկառքն որու մէջ նստած ենք: Ատկէ զատ դուք ալ դիտած էք անշուշտ որ եթէ դէպի արեւելք դիմենք, մեզ այնպէս կը թուի թէ առարկաները ընդհակառակն դէպի ի արեւմուտք կը փախչին: Միւնոյն կերպով երկրիս հետ արեւմուտքէն դէպի ի արեւելք ընթանալով՝ մեզ կ'երեւայ թէ արեգակն արեւելքն դէպի արեւմուտք կ'ընթանայ: Բայց նայելով շոգեկառքի անիւներուն թէ ի'նչպէս երկաթուղիին վրայ կը գլորին, այն ատեն դիւրաւ կը համոզուինք որ ոչ թէ ցամաքն եւ առարկա-

Ներն են որ կը փախչին, այլ մենք ենք որ առաջ կը վազենք: Բայց երբ մենք երկրիս վրայ մթնոլորտին հետ միասին կը սլանանք, այն ժամանակ շօշափելի կերպով աչքի զարնող առարկայ մը չի կայ որ դգալի ընէ մեղ անոր անշարժութիւնն, որովհետեւ ինչպէս ըսինք, երկրի վրայ կեցած առարկաներն ալ անոր հետ կ'ընթանան և կը շրջին դատարկութեան մէջ:

Բայց լաւ մտածելով, մեր զարմանքը կը գրաւէ սա կէտը թէ ի՞նչպէս մարդիկ քանի մը հազար տարի երկիրս անշարժ համարած են և արեգակը շարժուն, թէ ի՞նչպէս հասկցան վերջապէս թէ երկիրս է շարժողն և կարողացան շափել անոր մեծութիւնը, կշռել անոր ծանրութիւնը, հաշուել այն արագութիւնն որով կը թաւալի ան իր առանցքին վրայ և արեւին շուրջը կը դառնայ, և մինչեւ անդամ որոշել թէ քանի՛ մզոն է այն ահագին շրջանը զոր կը կատարէ ան արեւին շուրջն: Անշուշտ այս ճշմարտութիւններն յայտնող անձերը մեծ և հանճարեղ մարդիկ եղած են:

### ՊԻՒԹԱԳՈՐԱՍ


Առաջին անձն, որ յղացաւ այն կարծիքը թէ երկիրս կը շարժի: Պիւթագորաս Յոյն իմաստասէրն էր, որ Քրիստոսէ 500 տարի առաջ կ'ապրէր: Իր երիտասարդութեան ժամանակ Պիւթագորաս շատ ճամբորդեց և ամէն տեղ մեծ ջանքով ուսոււ ինչ որ ուրիշ մարդիկ գիտէին, ուշադրութեամբ հետազոտելով ամէն իրեն պատահածները: Վերադառնալով իր հայրենիքը՝ Յունաստան, բազմաթիւ աշակերտներ ժողվեց իր շուրջ-

ջըն և շատ խելացի գազափարներ հաղորդեց անոնց: Ուրիշ շատ բաներու հետ սա ալ կը յայտնէր թէ երկիրս անշարժ կեցած չէ՝ այլ կը չընի, և թէ անկէ առաջ կուգան գիշեր և ցորեկ, թէ երկրագնտին ո և է մասն, երբ գէպ ի արեգակը դառնայ, այն մասին վրայ ցորեկ կ'ըլլայ, իսկ երբ արեւին ճառագայթներուն հանդիպակաց կողմը դառնայ, այն ժամանակ այն տեղ գիշեր կ'ըլլայ: Պիւթագորաս շատ խստակեաց էր, քիչով բաւականացաւ: Թէև կուպաշտ (հեթանոս) էր, բայց կը հաւատար հոգւոյ անմահութեան, Աստուծոյ ամենակարողութեան և բարութեան: Այս պատճառով ալ իր հոգիին անդորրութեան կըսպասէր ապագային մէջ, և անտարբերութեամբ կը կրէր կենսական մանր դժբաղդութիւնները: Ուստի զարմանալի: չէ որ երկար ապրեցաւ, թէև իր ծերութեան ժամանակ շատ զըրկանք կրեց չարաբարոյ մարդոց կողմէ և ինչպէս կ'ըսեն, սարսափելի աղքատութեան մէջ գրեթէ անօթութենէ մեռաւ: Բայց եթէ այս բան ճշմարիտ ալ ըլլայ դարձեալ պէտք է նախանձիլ մեծ իմաստասէրին բաղդին, որովհետեւ իր հանճարեղ զբաղութեան շնորհիւ այնքան ճշմարիտ գոհութեան նիւթ ստացաւ, որքան ամենահարուստ մարդ մը իր բոլոր փարթամութիւնով չի կրնար ստանալ:

### ԿՈՊԵՐՆԻԿՈՍ

Պիւթագորասի վարդապետութիւններուն ուշ չի դնելով, մարդիկ երկար ժամանակ չէին հաւատար թէ երկիրս կը շարժի. անցաւ 2,000 տարի, վերջապէս ե-

բեւցաւ ուրիշ մարդ մը , որ Յոյն իմաստասէրին քարոզած ճշմարտութիւնն սկսաւ հաստատել : Ժ.Զ.Պ. դարուն սկիզբը , կաթոլիկ քահանայ մը , Կոպերնիկոս անունով , ազգով լեհացի , Գերմանական ֆրաուէնպերկ



քաղաքին մէջ սկսաւ հետազօտել արևին և աստղերուն շարժումները , և այն համոզման յանգեցաւ թէ երկիրս , որ անշարժ կերեւայ , անդադար իր առանցքին վրայ կը թաւալի անիւի պէս և միանգամայն արեւուն շուրջը կը դառնայ , ինչպէս իրեն նման քանի մը ուրիշ աստղեր : Այս շարժուն աստղերը , զանազանելու համար այն աստղերէն որ արեւուն շուրջը չեն պտըտիր , կը կոչ-


ուին մողորակներ : Կոպերնիկոս իր դիտողութիւնները առանձին տետրակի մը մէջ բացատրեց , և քիչ մը ետքը իր գաղափարները դեռ չի տարածուած ու չընդարձակուած՝ 1543 թուին վախճանեցաւ : Այն առնը , ուրու մէջ կ'ապրէր Կոպերնիկոս , մինչև հիմա ֆրաուէնպերկ քաղաքին մէջ կը պահուի , և ուղեւորները հետաքրքրութեամբ կը զննեն այն ճեղքը որ բացուած է այդ տան պատին մէջ և ուսկից մեծանուն աստղագէտը կը հետազօտէր երկնային մարմիններուն ընթացքը :

## ԳԱԼԻԼԵ

Կոպերնիկոսի գիւտը , թէև շատ գեղեցիկ , դարձեալ ուշադրութիւն չի գրաւեց , այնպէս որ հարիւր տարի վերջը ուրիշ նշանաւոր աստղաբաշխ մը . Գալիլէ անունով , հարկադրուեցաւ նոյն ճշմարտութիւնը ապացուցանելու աշխատիլ : Գալիլէ ծնաւ իտալիոյ Պիզա քաղաքն և այն աստիճան եռանդով հետեւեցաւ ուսման , որ իր քսան և հինգ տարեկան հասակին մէջ արդէն Պիզայի համալսարանին չափագիտութեանց ուսուցչապետ (Բրօֆէսօր) կարգուած էր : Իր երիտասարդութեան հասակին մէջ կարեւոր գիւտեր ըրաւ և մեծ անուն վաստկեցաւ : Իսանալով որ Տանիմարքացի մը դիտակը հնարած է , որով հեռաւոր առարկաներ կը տեսնուէին և զոր շատեր իբր խաղալիկ կը գործածէին , Գալիլէ սկսաւ աշխատիլ և շատ չ'անցած առաջին հեռադիտակը (Դելեսիօր) չինեց : Թէև շատ անկատար էր տակաւին , ասով հանդերձ շատ օդնեց անոր Կոպերնի-

կոսի գիւտերուն ճշմարտութիւնը ստուգելու և ուրիշ շատ նորանոր գիւտեր ընելու :

Գայիլէ գիւտակի գիւտէն առաջ ալ կը կարծէր թէ աստղերը փաքրիկ կայծեր չէին, այլ մեծամեծ երկիրներ որ կը շարժին անհուն անջրպետին մէջ։ Իսկ հեռադիտակի օժանդակութեամբ համոզուեցաւ որ իր են-



թագրութիւնները ստոյգ էին։ Հեռադիտակով Լուսինին նայելով՝ տեսաւ որ անոր վրայ կային խորունկ ձորեր ու լեռներ և մինչև անգամ այդ լեռներու բարձրութիւնը չափելու հնարը գտաւ։ Արեւին նայելով՝ գտաւ որ անոր վրայ կան բիծեր որ կը շարժին, երբեմն կը ծածկուին, իսկ երբեմն նորէն կը յայտնուին, և հետեւցուց որ արեգակը երկրէս բազմապատիկ մեծ, ա-

հագին գունտ մըն է և այդ գունտը, որ լուսաւոր մըթ նոլորտով մը լրջապատուած է, իր առանցքին վրայ կը թաւալի։ Յետոյ Գալիլէ սկսաւ գիտել երեկոյեան գէմ փողփողող պայծառափայլ մոլորակը որ Արուսեակ կը կոչուի, և տեսաւ որ մեր Լուսինին նման է, Լուսինին նման կը մեծնայ ու կը նուազի, երբեմն ալ բարակ մահիկի մը ձեւը կ'առնէ։ Ուրիշ մոլորակի մը մօտ, որ Երեւակ կը կոչուի, փայլուն թեւերու նման բան մը նկատեց, բայց չի կրցաւ լաւ որոշել թէ թեւեր չէին, այլ մոլորակին չուրջը ձգուած երկու փայլուն օղակներ։ Իր գիտողութիւնները շարունակելով՝ համոզուեցաւ որ Լուսնթագ կոչուած ուրիշ մեծ մոլորակի մը չուրջը կը պարտին չորս հատ գեղեցիկ աստղեր, որ լուսիններ են և տարբեր արագութեամբ անոր չուրջը կը դառնան, ինչպէս որ Լուսինը կը դառնայ մեր երկրի չուրջը։

Դժուար չէ ըմբռնել թէ այս բոլոր գիւտերը Գալիլէ ո՛չ մէկ օրուան և ո՛չ իսկ մէկ տարբուան մէջ կատարեց։ Երիտասարդ գասատուն ծերացաւ մինչև որ կարողացաւ գիտել այս ամէնը զոր մենք հարեւանցի պատմեցինք։ Այս միջոցիս Գալիլէի անունը, որ մարդկութեան համար ուրիշ շատ օգտակար և նշանաւոր գիւտեր ըրած էր, հոչակուեցաւ ամբողջ Եւրոպայի մէջ։ Բայց ուր փառք, հոն և անոր հակառակորդը՝ նախանձ Նախանձորդները և անոնց հետ անկիրթ ու մոլեռանդ մարդիկ բամբասեցին Գալիլէն, պնդելով թէ անոր յայտնութիւնները հակառակ են Ս. Գիրքին, մինչդեռ՝ ընդհակառակն՝ Գալիլէի գիւտերը Արարչին անսահման իմաստութիւնն ու ամենակարողութիւնը կ'ապացուցանէին։ Սակայն Հաւատաքննութեան սար-

սափելի Ատեանը, որ կը կարծէր թէ կեղծ ու բռնաւորական միջոցներ կարող են ընդունելի ըլլալ ամենաբարի Աստուծոյ, գատապարտեց Գալիլէն իր մեզապարտ, և բանտարկեց : Պատուական ծերունին, որ իր բոլոր կեանքը գիտութեամբ անցուցած էր մարդկութեան օգտին համար, բանտարկուեցաւ խոնաւ բանտի մը մէջ, Քանի մը ամիս բանտարկութենէ վերջը՝ խեղճ ծերունին իր սքանչելի գիւտերէն հրապարակաւ հրաժարելու ծանր պայմանով արձակուեցաւ բանտէն Բայց հանդիսաւոր հրաժարականը արտասանելու ժամանակ՝ Գալիլէ չը կրցաւ համբերել և ոտքը գետնին զարնելով բարկութեամբ գոչեց . «Թո՞ղ ձեր բամբը լլայ, ասկայն երկիրս կը շարժի : » Այս խօսքերուն համար նորէն բանտարկեցին Գալիլէն և այս անդամ երկար ատեն : Հուսկ ուրեմն զօրաւոր անձերու միջնորդութեամբ և իր ծերութեան խնայելով՝ արձակեցին զայն բանտէն, բայց պայմանով որ Ֆիորէնցայի մօտ առանձին տեղ մը բնակի եւ բնաւ չի հեռանայ անկէ : Հոն Գալիլէ իր մնացած կեանքն անցուց գիտական պարապմունքներու մէջ, քանի մը բարեկամներէ շրջապատուած, և քանի մը նոր ճշմարտութիւններ ալ նուիրելով մարդկութեան : Այդ անդուլ պարապմունք զըրկեցին զայն իր մէկ աչքին լրյուէն, բայց մինչև վերջին շունչը, որչափ միւս աչքով տեսնելու կարող էր, շարունակեց իր զննութիւնները Կուրութիւն, խլութիւն, տքնութիւն և հիւանդութիւններ, որոնք բանտին խոնաւութեան հետեւանքն էին, թունաւորեցին ծերունիին վերջին օրերը : Վերջապէս 1691 Յունվար 6ին Գալիլէ մշտնչենապէս աղատեցաւ ամէն տեսակ հալածանքէ : Մարմինը կը հանդչի Ֆիորէնցայի Ս. Խաչե-

կեղեցիին մէջ, ուր հոյակապ փառաւոր արձան մը կանգնուած է անոր, գործ մեծանուն Միքէլ Անձէլոյի :



### ՆԵՒՏՈՆ

Ասկէց հարիւր յիսուն տարի առաջ Անգլիոյ մէջ կ'ապրէր հանճարեղ գիտուն մը՝ Խահակ Նեւտոն անունով (ծնած 1542 թուին և մեռած 1727ին) : Յոյժ խելացի էր . շատ անդամ ամենահասարակ առարկաներու վրայ նայելով այնպիսի գիտողութիւններ կ'ընէր, զորս հազարաւոր մարդիկ չէին մտարերած : Անդամ մը Նեւտոն այդիին մէջ զրոսած ժամանակ ինձոր մը տեսաւ, որ ոստէն փրթելով գետին ինկաւ : Ուրիշ անդամներ ալ տեսած էր թէ ի՞նչպէս ինձորը վար կ'իյնար, բայց բնաւ ուշադրութիւն չէր ընծայած : Խակ այս անգամ հարցուց ինքն իրեն . « ինչո՞ւ խնձորը ոստէն փըր-

թելով գետնին վրայ ինկաւ, վեր չելաւ կամ դէպ ի  
մէկ կողմ չնետուեցաւ, Նեւտոն գիտէր որ ամէն երե-  
ւոյթ իր պատճառը ունի, ուստի և հարցուց ինքն ի-  
րեն, թէ ի՞նչ է պատճ ուը որ ամէն մարմին երկրիս  
վրայ կ'ինայ և վեր չընետուիր կամ օդին մէջ չի մնար:  
Լաւ քննելով այս սովորական երեւոյթը, որու վրայ  
մինչև այն ժամանակ ոչ ոք ուշադրութիւն դարձուցած  
էր, Նեւտոն վճռեց թէ երկրիս մէջ ձգողական ոյժ մը  
կայ, որու նմանը մարդիկ վաղուց նկատեր էին մագնիսին  
մէջ, այն զանազանութեամբ միայն որ երկրին այդ մագ-  
նիսական զօրութիւնը դէպ ի իրեն կը ձգէ ամէն մար-  
մին թէ պինդ, թէ՛ հեղուկ, որով չուրը ծովերէն դուրս  
չի հոսիր և օդը այլ այլ կողմեր չը ցնդիր: Նեւտոն  
այս վճիռը տալով միայն գոհ չեղաւ. շարունակեց իր  
զննութիւնները և շուտով տեսաւ որ միայն երկիրը չէ  
որ իրեն կը ձգէ մարմինները, այլ և ամէն մարմին դէպ ի  
իրեն կը ձգէ ուրիշ մարմիններ: Եթէ ջրով լեցուն ա-  
մանի մը խաղաղ մակերեւոյթին վրայ ձգենք մէկ քա-  
նի փոքրիկ թեթեւ մարմիններ, կը նկատենք որ այդ  
մարմինները իրարու մօտ կը համախմբուին կամ քիչ քիչ  
կը մօտենան ամանին եղերքին: Փոքրիկ տաշեղը եթէ  
գետի մէջ ձգէք, միշտ մեծ գերանին կը մօտենայ, իսկ  
տերեւնները և միւս փոքրիկ մարմինները եղերքին կը  
մօտենան: Նոյնպէս Նեւտոն տեսաւ որ բոլոր մարմին-  
ները իրար կը քաշեն, և եթէ քար մը չի մօտենար իր  
մօտ գտնուող քարին, պատճառն է երկրի ձգողական  
ուժն որ շատ մեծ է քարին ձգողական ուժէն, ինչպէս  
որ երկրագունար մեծ է քարէն, այսինքն քանի մը  
միլիոն անգամ: Եթէ մանուկ մը փոքրիկ կառք մը քաշէ  
և ուրիշ մըն ալ կառքին ետեւի կողմէն պինդ բռնէ և

ետ քաշէ, ո'ր կողմի մանուկն որ աւելի ուժով քաշէ,  
կառքը այն կողմը կ'երթայ: Իսկ եթէ նոյն մանուկը կառ-  
քին ետեւէն կախուի, կառաձիգ երիվարները չեն զգար:  
Այսպէս ալ, թէ բոլոր երկրի վրայ եղած մարմինները  
իրար կը քաշեն, բայց անոնց փոխադարձ ձգողական  
ուժը երկրի ուժին հետ համեմատելով՝ աւելի աննշան է  
քան մանուկին ուժը չիու ուժի հետ բազդատմամբ:

Իսկ ի՞նչ բան է մարմինին ծանրութիւնը: Քարը հո-  
ղին վրայէն վերցնելով կը զգանք որ ծանր է, կամ թէ  
ըսենք՝ կըզգանք թէ ո'րքան ուժով կը քաշէ զայն եր-  
կրը: Երկրիս աւելի կամ պակաս քաշելն է որ այս կամ  
այնքան ծանրութիւն կուտայ մարմիններուն: Ու է  
մարմինի մը ծանրութիւնը համեմատելով ծանօթ ծան-  
րութեան մը հետ, կրնանք գտնել այն մարմինին կշիռը  
(քաշը), այսինքն թէ այս ինչ առարկան քանի քաշէ:

Դիտունները, որպէսզի որոշեն առարկաներու ծան-  
րութիւնները կամ ըսենք այն ոյժը որով անոնցմէ իւ-  
րաքանչիւրը երկրէս կը ձգուի, սկսան համեմատել իւ-  
րաքանչիւրը մարմինի ծանրութիւնը ջուրի ծանրութեան  
հետ, և գտան որ բաժակ մը չուրը 13 անգամ թեթև  
է բաժակ մը սնդիկէն, երկաթը 8½ անգամ ծանր  
ջուրէն, ոսկին 19½ անգամ եւայլն: Մարսիններու այս  
ծանրութիւնը՝ մաքուր ջուրին հետ բազդատմամբ՝ կը  
կոչուի յարաբերական կամ տեսակարար կշիռ:

Այժմ փոքր ինչ մտածելէ յետոյ գիւրաւ կը հաս-  
կընաք թէ ինչո՞ւ կապարեայ փոքրիկ գնդակը՝ երբոր  
ջուրի մէջ կը ձգենք, իսկոյն տակը կ'երթայ, իսկ մեծ  
գերանը ջուրի երեսը կը մնայ: առէ՛ք այնչափ ջուր որ-  
քերանը ջուրի երեսը կը մնայ: կը ունի քաշէն գալու թէ  
քան կրնայ զետեղուիլ գերանին մէջ, նկատելով թէ  
քան կրնայ զետեղուիլ գերանին մէջ, նկատելով թէ

այդ քանակութիւնը քանի մը անդամ աւելի ծանր կ'ըլլայ քան թէ նոյն իսկ գերանը։ Գերանը շբնկղմիր այն պատճառով որ փայտին յարաբերական կշիռը կամ ծանրութիւնը շատ պակաս է ջուրի յարաբերական կշիռէն։ Գիտէք արդէն թէ ջուրը սառելով աւելի մեծ տեղ կը բռնէ և կը պայթեցնէ շիշը երբոր լեցուն է ջուրով և ամուր կնքուած։ Գիտէք նաև թէ այդ պատճառով է որ սառոյցը կը լողայ ջուրին երեսը։ Իւզը, ընդհակառակն, երբ սառի՝ կը սեղմուի, ասոր համար սառած իւզի կտորն իսկոյն կը խորասուզի հալած իւզի մէջ, ինչպէս պաղած կապարը հալած կապարի մէջ։

Բայց այս բոլոր զննութիւնները չը գոհացուցին նեւտոնը։ Ան ուշադրութիւնը դարձուց այն երեւոյթին վրայ, որով քար մը կամ գնդակ մը դէպի մէկ կողմ նետուելով, կամ հրացանի գնդակը հրացանէն արձակուելով, քիչ քիչ կը խոնարհի և վերջապէս երկրս վրայ կ'իյնայ։ Նեւտոն այս երեւոյթը բացատրեց հետեւեալ կերպով։ Երկու ուժ դէմառ դէմ կը մըցին։ մէկ ուժը այն է, որով կ'արձակուի քարը, իսկ միւսն է երկրիս ձգողական ուժը որ կը քաշէ քարը։ քարը հեռանալով՝ փոքր առ փոքր կը կորսնցունէ սկզբնական հարուածէն ստացած ուժը, իսկ երկիրը՝ ընդհակառակըն՝ շարունակելով իր զօրութիւնը վերջապէս կը քաշէ զանի դէպի ի իրեն։

Նեւտոն, որ արդէն գիտէր թէ լուսինը երկրիս շուրջը կը պտըտի և երկիրը արեգական, դիւրաւ հասկցաւ թէ ինչո՞ւ լուսինը երկրէս եւ երկիրս արեգակէն չեն հեռանար։ Անշուշտ այն պատճառով որ երկիրս լուսնէն մեծ է և արեգակը երկրէս, որով երկիրը լուսինը իրեն կը քաշէ եւ արեգակն ալ երկիրը։

Իսկ թէ ինչո՞ւ լուսինը վար չիյնար երկրիս վրայ և երկիրը արեգակին վրայ, որովհետեւ լուսինը երկրիս շուրջը, իսկ երկիրը արեգակին շուրջը կը պտըտին սաստիկ ուժով և արագութեամբ։ Երկնային մարմիններուայս փոխադարձ ձգողութիւնը անուանուեցաւ ծանրականութիւն։ Բայց բաւական չէր գտնել մարմիններու փոխադարձ ծանրականութիւնը։ պէտք էր գիտնալ նաև թէ ի՞նչպէս կը ներդորձէ։ Քննելով թէ զանազան ծանրութիւն ունեցող մարմինները ի՞նչպէս կ'իյնան նեւտոն գտաւ թէ՝ մարմինի մը անկման արագութիւնը և թէ՝ այդ արագութեան սաստկութիւնը՝ երբ մարմինը աստիճանաբար երկրիս մօտենայ։ Ան ստուգեց որ եթէ մարմինը իր անկման առաջին վայրկեանին 16 ոտնաշափ ընթանայ, երկրորդ վայրկեանին 16×3=48 ոտնաշափ կ'ընթանայ, երրորդ վայրկեանին՝ 16×5=80, չորրորդ վայրկեանին՝ 16×7=112, հինգերորդին՝ 16×9, ևայլն։

Իր գտած ծանրականութեան օրէնքը լծորդելով երկրի, լուսինի, արեւին և միւս մոլորակներու վրայ ըրած զննութեանց հետ, երկնային լուսեղէններու շարժման օրէնքները գտաւ։ Զափազանց ճշդութեամբ հաշուեց անոնց հեռաւորութիւնը երկրէս, անոնց շարժման արագութիւնը, անոնց մեծութիւնն ու ծանրութիւնը և անոնց արեւին շուրջը կատարած շրջանին ընդարձակութիւնը, մէկ խօսքով աստղաբաշխութիւն կոչուած այդ մեծ գիտութեան հիմերը գրաւ։

Նեւտոն աշխարհիս ամենամեծ մարդոց մէկը ըլլալով հանդերձ, քրիստոնէական անկեղծ հաւատք եւ երկիւղածութիւն ունէր։ Զափազանց հեղէր, ամենուն ետ քաղցրաբարոյ, ամէն բանի մէջ ճշմարտասէր,

պարզ վարմունքի տէր, և ամենեւին մոքէն չէր անցներ թէ իր մեծ հանճարին վրայ միլիոնաւոր մարդիկ կը հիանան և պիտի հիանան յաւիտեան։ Անհամար աստղերու շարժումները չափազանց ճշգութեամբ հաշուելէ յետոյ, այդ ահագին մարմիններու ծանրութիւնը կը շռաելէ յետոյ, լուսնի շարժման արագութիւնը չափելէ յետոյ, ինքզինք կը համարէր « իրրեւ մանուկ մի որ մանր բարերով կը խաղայ սիեզերի անսահման ովկիանոսին եզերի»։ Ամէն գործերու մէջ ունեցած յաջորդութիւնը Արարչին օգնութեան կ'ընծայէր, որ աղբիւրն է բոլոր ճշմարտութիւններու։

Խորին ծերութեան մէջ, երբ ծերմակ մազեր իր մեծահանճար գլուխը կը պսակէին, նեւտոն խելքի և զգացումներու թարմութեան կողմէ առոյգ երիտասարդի մը կը նմանէր։ Կարծես ժամանակը անգամ չէր համարձակեր գպչիլ պատկառելի ծերունիին։ Սակայն հասաւ վերջապէս ժամը և այս մեծ մարդն ալ կոչուեցաւ Անոր քով, որու անունը յաճախ կը կրկնէր խորին ջերմեռանդութեամբ։ Նեւտոն մեռաւ 1727 թուին, 84 տարեկան հասակին մէջ։

## Տ Ը Ն Ի Բ Ա Բ Է Ն

ԵՒ

ՇՈԳԻՆՇԱՐԺ ՄԵՐԵՆԱՍՆԵՐՈՒ ԳՐԱՑԲ

Սի՞րելի տղաքս, կը տեսնէք այսօր ձեր աչքերուն առջեւ անթիւ շոգենաւեր, շոգեկառքեր և արուեստագործական մեքենաներ, որոնք միլիոնաւոր գործառներու կատարելիք գործերը աւելի արագութեամբ,

ճշգութեամբ և գեղեցկապէս կը կատարեն։ Անշուշտ հետաքրքրութեամբ կը դիտէք զանոնք և դոնէ անգամ մը մտքերնուդ կ'անցնէք թէ ո՞վ հնարած է այդ հրաշալի գործիները և ի՞նչպէս շինուած են։

Այս անգամ շոգեշարժ մեքենաներու գիւտին պատմութիւնը պիտի ընեմ համառօտ մը։ Միանգամայն պիտի տեսնէք թէ այս մեծամեծ գիւտերը ընողները ո՞րչափ գժուարութեանց հանդիպեր են և ո՞րքան յարատեւ աշխատութիւններու պտուղ են այդ հրաշալիքները որոնց վրայ կը սքանչանանք ամէն օր։

Քրիստոսէ 120 տարի առաջ Հերոն Աղեքսանդրացի անուն գիտուն մը չոգիին զօրութեան վրայ գրուածներ ունէր եւ անոր կարողութիւնը բացատրած էր։ Հետզիետէ բազմաթիւ ճարտար արուեստագէտներ և գիտուններ շոգիին զօրութեան վրայ խուզարկութիւններ ըրին, գլխաւորապէս ձիան Պաթիսթա, Տէլլա Բոռթա, Պրանքա և Սալօմօն տը Ֆօս։

Ուզուսէսթըրի մարքիզը որ իբր մատնիչ ամբաստանուելով՝ Լոնտրայի աշտարակին մէջ բանտարկուեցաւ, անխոնջ յարատեւութեամբ աշխատեցաւ հոն շոգիին կարողութեան վրայ, և երբ բանտէն արձակուեցաւ, շոգեշարժ մեքենայ մը հնարեց, որ Թայմլ գետէն չուր հանելու կը գործածուէր։ Այս մեքենան իր մէկ քանի թերութեանց պատճառաւ անգործածելի եղաւ, բայց երեսուն տարի յետոյ նշանաւոր աքսորեալ մը, Ֆրանսացի բողոքական մը, Տոքթէօր Տընի Բարէն, բազմաթիւ գրութիւններով և փորձերով լուսաբանեց շոգիին զօրութիւնը։

Տընի Բարէն ֆրանսայի Պրուա քաղաքը ծնած էր։ Երկար ժամանակ Փարիզի մէջ յաջորդութեամբ բժշկու-

թիւն ընելէ յետոյ, բնագիտութեամբ և մեքենականութեամբ զբաղիլ սկսաւ։ 1681 ին Թրանսպայի մէջ բողոքականներու դէմ կրօնական հալածանք ելլելով, Բարէն Անգլիա ապաստանեցաւ։ Անգլիացի գիտնականները մեծ պատուով ընդունեցին զինքը և Արքայական ընկերութեան թոշակաւոր վերակացու կարգեցին։ Տընի Բարէն իր փորձերը շարունակեց Անգլիոյ մէջ։ 1687 ին Գերմանիոյ Մարպուրկ համարանին շափագիտութեան դասատու ընտրուելով, Գերմանիա գնաց։

Բարէն Անգլիա գտնուած ժամանակ Թայմզ գետին վրայ Թօպէրթ իշխանին շինած մէկ նաւը քալեցուցին, որուն անիւները ձիեր կը գարձունէին։ 1698ին Բարէն այցելութեամբ Լոնտոն երթալով՝ Պ. Սէվրիի շինած մէկ ուրիշ նաւը տեսաւ, որուն անիւները մարդիկ կը գարձընէին։ Այն ժամանակ Բարէն խորհեցաւ ձիերու և մարդոց ուժին տեղ շոգիին ուժը գործածել նաւերուն անիւները գարձնելու, որով հով չ'եղած ատեն ալ կրնային առանց առագաստի նաւարկել։

Տասն և հինգ տարի շարունակ աշխատելէ յետոյ՝ Բարէն յաջողեցաւ վերջապէս նաւու մը համար մեքենայ մը շինել և կրցաւ այն նաւը մեքենայով շարժել։ Բարէն մեծ գժուարութեամբ հրաման ստացաւ իր շինած նաւը Վէզէր գետին վրայ տանելու, սակայն նաւը հոն չի հասած՝ նաւավարները չարդ ու կտոր ըրին զայն, բայց մեքենան բարեբաղդաբար ազատելով Քասէլ զրկուեցաւ, սակայն հոն ալ քաղաքը պաշարող Թրանսպական զօրքերուն ձեռքով ջախջախուեցաւ 1706 ին։ Մեքենային միայն գլանը ազատեցաւ, որ մինչև այսօր խնամով կը պահուի Քասէլ բնակող Հէնշէլ ընտանիքին քով։ Այս գժաղդութենէն տարի մը ետքը, Բարէն

նամակ մը գրեց Լոնտոնի Արքայական Ընկերութեան և աղաչեց որ իրեն գրամ զրկեն նոր մեքենայ մը շինելու համար, որ կարող պիտի ըլլար նալեցնելու։

Ընկերութիւնը մերժեց Բարէնի առաջարկն եւ չի զրկեց խնդրուած գրամը։ Այս մերժում ծանր հարուած մը եղաւ Բարէնի։ տխրութենէն և յուսահատութենէն տկարացած՝ երկու տարի յետոյ մեռաւ ուրիշներու թողլով իր մեծ գաղափարին իրագործումը։ Ինչպէս որ տեսաք, թէպէտ և շոգեշարժ մեքենաներու առաջին հնարիչը Տընի Բարէն եղած է, բայց կատարելագործողը և այսօրուան վիճակին մէջ դնողը Յակոբ Ուաթ եղած է, երախտապարտ թողլով իրեն մարդկութիւնը, որովհետեւ շոգեշարժ մեքենաները անհուն ծառայութիւն կը մատուցանեն մեզ։

## Ս Թ Է Ֆ Է Ն Ս Ը Ն


ԵՒ

ՇՈԳԵԿԱՍ. ՈՒ.Ց

Անգլիոյ Թայն գետին եզրը Ուիլլմ անուն գիւղաքաղաք մը կայ. հոն ծնած է 1781 ին Ճօրճ Սթէփէնսլն, Հայրը գործաւոր էր ածխահանքի մը մէջ, շաբաթը տասնը հինգ ֆրանք կը շահէր և հազիւ կրնար իր ընտանեաց ապրուստը ճարել։

Ճօրճ իրեն հասակակից տղոց հետ խաղալով և իր կրտսեր եղբայրներուն վրայ հսկելով կ'անցունէր իր մանկութեան օրերը։ Իրենց բնակած խրճթին առջեւէն կ'անցնէր այն փայտէ ուղին, որու վրայէն ձիերը քա-

շելով կը տանէին հանքածուխի կառքերը։ Այս տեսարանը ձօրճի հանճարեղ մտքին ուշագրութիւնը կը գրաւէր միշտ։



ձօրճ՝ տասնը հինգ տարեկան եղած ժամանակ, քաջաշխատասէր պատանի մըն էր, և ապագային մէջ լաւ մեքենագործ մը ըլլալու նշաններ ցոյց կուտար, երբ իր շաբաթական թոշակը տասնը հինգ ֆրանքի բարձրացաւ, յաղթական ձպյով դոչեց։ «Ոհա, հիմա կեանքի համար ստեղծուած մտրդ մըն եմ։»

Սթէֆէնսըն տասնեսութ տարեկան էր, ո՛չ կարդալ գիտէր և ո՛չ գրել, թէև ճարտար մեքենագործ մըն էր։ բայց բնաւ ամօթ չհամարեցաւ ճանճալ իր տգիտութիւնն և երթալ վարժարան այբենարան ուսանիլ։ Ուկիլինկիթընի նաւահանգիստը լեցուն էր չոգենաւերով, որոնք ածուխ առնելու կուգային։ Շոգեշարժ մեքենայ մը զետեղուած էր մօտակայ ըլլակին վրայ, հանքածուխով լեցուն կառախումբը քաշելու և ըլլակին գագաթը հանելու համար։ Սթէֆէնսըն այն մեքենան կառավարելու պաշտօնն ստացած էր։ Օր մը, իր տան ծխնելոյզը քիչ մնաց որ բռնէր, դրացիները վաղեցին և ահագին քանակութեամբ ջուր թափեցին ծխնելուզին մէջ։ Սթէֆէնսընի կարասիներն աղտոտեցան, և սրահի մեծ ժամացոյցը դադրեցաւ բանելէ։ Սթէֆէնսըն շակեց զայն և սլաքն իննին վրայ բերաւ։ Այսպէս շրջակայ գիւղերուն ճարտար ժամագործներէն մին եղաւ։

1803 ին արու զաւակ մը ունեցաւ և անունը Ուոպէրթ դրաւ։ Նատ տարիներ Սկովտիոյ մէջ մնաց չոգեշարժ մեքենաներ վարելու պաշտօնով։ միանգամայն երկրաշափութիւն և թուաբանութիւն ուսաւ, և իր Ուոպէրթ որդին Նիւքեասլի մէջ վարժարան մը դրաւ։ Որդին աշխատասէր ըլլալով՝ սկսաւ յառաջ երթալ գիտութեանց մէջ, և ամէն իրիկուն հայր և որդի միասին կ'աշխատէին։ ծրագիրներ կը գծէին և մեքենաներ կը նորոգէին։ բայց ձօրճի գլխաւոր փափաքն շոգեշարժ կառքեր հնարել և զանոնք երկաթէ ուղիներու վրայ քալեցնել էր։ Երկար ժամանակ առանձնացաւ Քիլինկվոստ իր ամենասիրելի բաղձանքն իրագործելու աշխատելով։ Լօրտ Ուալէնչվոստ օգնեց անոր և մեծա-

գումար դրամագլուխ մը դրաւ անոր տրամադրութեան տակ՝ առաջին շոգեշարժ կառքը շինելու համար։ 1815 ին շինած կառաշարժ մեքենան կատարեալ չէր, աւելի զօրութիւն ու արագութիւն տալ հարկ էր մեքենային։ ուստի աւելցուց կրակին քանակը, մեծցուց կատային ծաւալն և շոգին օձապտոյտ խողովակներու մէջ պարտցուց։ 1823ին նիւքեասլի մէջ շոգեկառքի յատուկ գործարան մը հիմնեց, որուն արտադրութիւնները քանի մը տարուան մէջ ծաւալեցան բովանդակ աշխարհի վրայ։

Սթէֆէնսըն Լիվրուլի և Մանչսթէրի միջև երկաթուղիի գիծ մը հաստատեց, որ մեծ համբաւ շահեցուց իրեն։ Բայց և միանգամայն մեծամեծ դժուարութեանց հանգիպեցաւ։ Երկրին բնակիչները սաստիկ թշնամի եղան այս օգտակար ձեռնարկին, քարի և բրչի հարուածներով կը հալածէին խեղճ գործաւորներն։ Հարկ եղաւ այլ և այլ հնարիմաց միջոցներ գործ դնել անոնց դէմ։ Լրագիրներն ալ խստիւ կը քննադատէին Սթէֆէնսընը։ Կ'ըսէին թէ երկաթուղիին պատճառով կովերն չպիտի կրնային դաշտերուն մէջ արածիլ և հաւերն ալ չի պիտի ածէին։ Շոգին պիտի սպաննէր օգին մէջ սլացող թռչուններն, տուները պիտի այրէր, կառածիդ երիվարներն անգործ պիտի մնային։ Վարսակն ու գարին ալ չի պիտի ուտուէր և պանդոկապետները անօթի պիտի մնային։

Սթէֆէնսըն և իր ընկերները երկու տարի շարունակ հարկադրեցան պաշտպանել իրենց ձեռնարկութիւնը։ Երկամեայ վիճարանութիւններէ և խոռվութիւններէ ետքը, Լորտերու ժողովը միաձայնութեամբ հաւանութիւն տուաւ երկաթուղիներու հաստատման։ Չորս մեքենաներ մրցեցան, և Սթէֆէնսընի մեքենան յաղթող

հանդիսացաւ։ Ուօպէրթ Լոնտոնէ Պիրմինկէմ երկաթուղիի գիծ մը շինեց, որ անոր գեղեցիկ փառքերէն մինեղաւ։ Եւրոպական ազգերը մեծաշուք պատիւներ ընծայեցին ձօրճի և Ուօպէրթի, և վեհապետները արքայական պարգեւներով վարձատրեցին զանոնք։ 1845 ին, ձօրճ իր գիւղական տունը քաշուեցաւ և հոն սկսաւ երկրագործութեամբ պարապիլ, պանծալով իր պարտէին ընտիր բերքերուն վրայ, որոնց չէին կրնար բնաւ հաւասարիլ ուրիշ պարտէզներու բերքերը։ 1848 Օգոստոս 12 ին ձօրճ Սթէֆէնսըն մեռաւ, Անթիւ գործաւորները յուղարկաւոր գացին անոր գագաղին ետեւէն և Զէսթէրֆիլտի բնակիչները անոր մահուան օրը փակեցին իրենց կրպակներն։ Անգլիա երկու հսկայ կոթող կանգնած է անոր, Լիվրուլի և նիւքեասլի մէջ։

Ուօպէրթ Սթէֆէնսըն շարունակեց իր հօր փառաւոր ասպարէզը։ 1850 ին Լոնտոնի երկրաչափական Ընկերութեան նախագահ ընտրուեցաւ և Նօրվէկիա երկար ուղեւորութիւննէ մը ետքը, մեռաւ 1859 ին և իր մարմինը այսօր կը հանգչի Ուէսթմինսթէրի Արբայրանին մէջ։

Ճօրճ յաճախ սա խօսքը կը կրկնէր իր բարեկամներուն։ «Ծրէ'f, ինչ որ ես ըրհ։» Մենք ալ ընենք ինչ որ ան ըրաւ, այսինքն չը վհատինք կեանքին բազմադիմի դժուարութիւններէն։ Անշուշտ ամէնքս ալ չենք կրնար փառքի և հարստութեան հասնիլ, բայց կրնանք պատուար և օգտակար ասպարէզ մը ընտրել։



ԿԻՒԹԷՄԹԷՐԿ

ԵՒ

ՏՊՄ.ԳՐՈՒԹԵՍԱՆ.ԳԻՒՏԸ

Առաջին անգամ գիր հնարողն եղան Եգիպտացիները։ Երբ Եւրոպա տակաւին բարբարոս վիճակի մէջ էր, Եգիպտասի քաղաքները լեցուն էին կոթողներով, որոնց վրայ զանազան ձեւերով պատկերներ քանդակուած էին։ Այն պատկերներէն իւրաքանչիւրը գաղափար մը կամ խորհուրդ մը կը ներկայացնէր։ Հին Եգիպտացոց շինած բուրգերն ու կոթողները կը մնան դեռ, Եգիպտական նշանագրութեան վրայ ծանօթութիւն մը ստանալու համար պէտք է գիտնալ թէ ձեռքին մէջ գաւազան բունած մարդը պետ կամ իշխան կը նշանակէր, առիւծի գլուխը՝ քաջութիւն, երկու ոտներ՝ քալել,

Հորիզոնական գիծի մը վրայ երկու աչերն՝ տեսնել, ձեռքերը դէպ ի երկինք ամբարձած եւ ծունր իջած մարդ մը՝ աղօթել, ուռած առագաստը՝ հով, եւայլն։

Եգիպտացիները նախ քարէ, սոկրէ, արծաթէ եւ կապարէ թերթերու վրայ կը փորագրէին, Երբ մելանը հնարուեցաւ, սկսան ոչխարի կամ այծի մորթերու վրայ գրել, մանաւանդ պապիւրոս կոչուած ծառին տերեւներուն վրայ, որ նեղոս գետին եղերքը կ'ածի։ Պապիւրոսի տերեւները թերթերու կը վերածէին, փայտէ գլաններու վրայ կը փաթթէին և գարակներու մէջ կը պահէին։ Գրքին նախնական ձեւն այսպէս էր։ Եգիպտացիներէն յետոյ Զինացիները գիւտեր ըրին գիրին վրայ, ասոնց գիրերն ալ տեսակ տեսակ էին, բարակ կամ հստակ Փիւնիկեցիները, Յոյները և Հռովմայեցիները աւելի կատարելագործեցին հետզհետէ գրելու արուեստը։ Տպագրութեան գիւտէն առաջ, մարդիկ ձեռքով կը գրէին փայտէ կամ եղէդէ գրիչներու միջոցաւ։ Վանքերու մէջ զարմանալի համբերութեամբ ձեռագիրներ կը պատրաստուէին կամ կ'օրինակուէին, այս պատճառով գիրքերն շատ թանկագին էին։ Աստուածաշունչ մը գրելու համար գիրքին ծանրութեան չափ ոսկի տալ հարկ էր։ Իսկ այսօր չնչին գնով մը կլնանք ամենաընտիր գրքերն ստանալ և մեր ուսման փափագը գոհացնել։ Այս գիւրութիւնը մեզ պարգեւողն եղած է կիւթէմպէրկ Գերմանացին, տպագրութեան գիւտին հեղինակն։

Կիւթէմպէրկ ծնաւ 1400 ին, Հէս-Տարմշթատի Մայանս քաղքին մէջ, Հրէնոս գետին եղերքներուն վրայ։ Ընտանիքն աղնուական տոհմէ էր, իսկ ծնողքը՝ ո՛չ այնքան հարուստ։ Տղայ հասակին մէջ կորսնցուց իր հայրն

և աննշան վիճակի մէջ ընկաւ։ Սակայն ի բնէ ուսումնասէր ըլլալով, իր ծննդավայր քաղաքին վարժարաններն յաճախեց և անխոնջ աշխատութեամբ ժամանակին ամենէն գիտուն մարդերէն մին եղաւ։ Հոլանտագնաց և կրկնապատկեց իր ուսումնասիրութիւններն ու զննութիւններն այլ և այլ արուեստներու վրայ, և այս առիթով մեծ խորհուրդ մը յղացաւ իր մտքին մէջ, այն էր տպագրութեան միջոցով գիրք ընդօրինակել։ Արդէն կիւթէմպէրկէն առաջ, մարդիկ փայտէ գիրեր շինելու արուեստը գիտէին։ փայտէ գաւազանիկներու վրայ զմելինով կը փորագրէին այբբենարանի գիրերը, մելանի մէջ կը թաթխէին և ճնշող գործիքներու տակ դնելով շարունակ գիրերը կը դրոշմէին սպիտակ թուղթի վրայ։ Բայց չափազանց գժուար գործ մըն էր այս, հարկ էր աւելի գիւրին եղանակ մը գտնել։ 1437 ին կիւթէմպէրկ Սթրավուրկ քաղաքը կը բնակէր։ Հոն տանը մէջ առանձնացած, գիրքի երեսներ կը փորագրէր տախտակներու վրայ եւ զատ զատ կը տպէր զանոնք։ Բայց այս եղանակն ալ մեծամեծ գժուարութեանց կը հանդիպէր։ հարիւր երեսներէ բաղկացած գիրք մը տպելու համար հարիւր տախտակ ունենալ հարկ էր, ամէնն ալ զատ զատ փորագրուած։ կիւթէմպէրկ մտածեց փոխանակ միևնոյն տախտակի վրայ բառի մը կամ խօսքի մը ամէն տառելը փորագրելու, մետաղի կամ փայտի կտորներու վրայ շինել տառերը, յետոյ իրարու քով բերելով շարել, երեսներ կապել և մամուլին յանձնել։ Այն ժամանակ բաւական կ'ըլլար այբբենարանի տառերուն ամբողջ հաւաքածոն ունենալ մասնաւոր տուփերու մէջ, և այն շարժուն մետաղէ տառերով ամէն տեսակ գրութիւն տպել։ Ի՞նչ գե-

զեցիկ և ի՞նչ հանճարեղ մտածութիւն։

Կիւթէմպէրկ աղքատ էր, չ'ունէր դրամ տպարան մը հիմնելու։ Բարեկամներ իրենց աշակցութիւնը նուիրեցին անոր, բաւական մեծ գումար մը գնելով իր տրամադրութեան տակ, որպէսզի կարենար գործադրել իր վսեմ խորհուրդը։ Կիւթէմպէրկ պայման դրած էր որ երբ իր գիւտը յաջողութիւն գտնէր, գոյանալիք շահը պիտի բաժնէ իր ընկերներուն հետ։ Ոթրազպուրկ քաղաքին մօտ հինօրեայ վանք մը կար լքուած և գրեթէ կիսաւեր վիճակի մէջ։ Կիւթէմպէրկ այն ամայի շէնքին մէջ հաստատեց իր գործարանը։ Առաջին անգամ հոն տեսնուեցան մամուլները, տպագրական գործիները, պապիւրոսն, թուղթի ծրարներն և մետաղեայ տառերն։ Գործաւորները թուով չորս հոգի էին եւ գաղտնի կ'աշխատէին։ Կիւթէմպէրկ և իր ընկերները ամենամեծ խնամով կը ծածկէին տպագրութեան գաղտնիքը, վախնալով որ եթէ ուրիշներ ծանօթանային այդնորահնար արուեստին, իրենց յուսացած մեծամեծ շահերն, ինչպէս նաև գիւտին փառքը կը խլէին իրենցմէ։

Ոչխատութիւնն արդիւնաւոր եղաւ։ Կիւթէմպէրկ անլիատ համբերատարութեամբ և յամառ աշխատութեամբ, ինչպէս նաև ամենամեծ զոհողութեամբ յաջողեցաւ գտնել տպագրական տառերուն բաղադրութիւնը։ Հալած կապարը մասնաւոր կաղապարներու մէջ հոսեցնելով, տառեր ձուլեց և լատիներէն Աստուածաշունչը տպագրել սկսաւ։ Բայց կիւթէմպէրկ դրամական կարողութիւն չունէր այսպիսի մեծ գործեր գլուխ հանելու համար, Մայանսի մէջ բնակող հարուստ մարդ մը, ֆառուս անուն, իր աշակցութիւնը նուիրեց իրեն, և Պետրոս Շէֆֆէր անուն կրօնաւոր մըն ալ ա-

սոնց հետ միանալով՝ երեքը միասին սկսան անդուլ աշխատիլ:

Տպագրուած գրքերը մեծ քանակութեամբ կը ծախսուին. հնարիչն և իր ընկերները մեծագումար դրամ կը շահէին և ժողովուրդը գոհութեամբ կը վարձատորէր կիւթէմպէրկը: Բայց ֆառաւստ նախանձէն և ազահութենէ դրդուած՝ չուզեց գոհանալ իր շահու բաժինով: Գժտութիւն մը հանեց, բաժնուեցաւ կիւթէմպէրկէն, և գատ բանալով գրաւեց ամէն գործիները, մամուլները և տպագրուած գիրքերը: Ո՛քան դըժբաղդ պիտի ըլլար կիւթէմպէրկ եթէ ազնիւ մարդ մը օգնութեան չհասնէր իրեն: Այդ պատուական մարդը բժիշկ մըն էր, որ իր տունն հրաւիրելով տարաբաղդ հնարիչն՝ ըստ անոր. «Ես քեզ դրամ փոխ կուտամ. երբ կարող ըլլաս՝ վճարէ՛ ինձ: Ուստի գործարան մը վարձէ՛, մամուլներ և գործիներ գնէ՛ և աշխատէ՛»:

Կիւթէմպէրկ շնորհակալութեամբ ընդունեց այս վեհանձնական առաջարկն, երրորդ անդամ ըլլալով գործարան մը հիմնեց և բազմաթիւ գործաւորներ աշխատցնելով՝ սորվեցուց տպագրական արուեստը: Սակայն գժբաղդութիւն մը վրայ հասաւ: Մայանս քաղաքը պատերազմական խռովութեանց ասպարէզ եղաւ, կիւթէմպէրկի տպարանը կործանեցաւ, գործաւորներն ու աշակերտները ցրուեցան և Գերմանիոյ ուրիշ կողմերը, ինչպէս նաև Ֆրանսա և Իտալիա գաղթելով՝ նորանոր տպարաններ հիմնեցին:

Կիւթէմպէրկ թշուառութեան մէջ մնաց: Բարեբաղդարար երբ խաղաղութիւնը վերահաստատեցաւ, Մայանսի Արքեպիսկոպոսն, որ իմաստուն եւ բարեսիրտ անձ մըն էր, թոշակ մը յատկացուց անոր, և տպագ-

րութեան մեծանուն հայրը խաղաղ և հանդիստ անցուց իր ծերութեան օրերը:

Այս պատմութիւնը շատ պարզ է, բայց միանդամյն տխուր: Գիտութեան և աշխատութեան դիւցազներու ինչպէս նաև մեծամեծ գիւտերու հեղինակներու պատմութիւնն ընդհանրապէս տխուր է արդէն. միշտ տառապանք, զրկանք և հալածանք կրած են. յաջող և երջանիկ կեանք վարողներն չափազանց հազուագիւտ են: Բայց իրենց մահուանէն յետոյ կը փառաւորուին: Մարդկութիւնը մեծամեծ պատիւներ և մինչև իսկ յաւերժական արձաններ կ'ընծայէ անոնց յիշատակին:

## Ֆ Ր Ա Ն Ք Լ Ի Ն

Նոր աշխարհի այս մեծ քաղաքացին ու պարծանքը ծնաւ 1706 ին Ամերիկայի Մասաքրիւսէթ նահանգին Պոութըն քաղաքը: Հայրը աղքատիկ օճառագործ մըն էր: Նախ Ֆրանքլին տպարանի գործաւոր եղաւ և իր բարի վարքովը ու խնայողութեամբ քանի մը տարի յետոյ կարեւոր տպարանի մը պետ եղաւ Ֆիլատէլֆիայի մէջ, և քիչ ժամանակի մէջ համեստ ապրուստ մը ձեռք բերաւ: Այն ժամանակէն սկսաւ հանրային օգտի վերաբերող գործերով գրադիլ: Մատենադարան մը և գրական ընկերութիւն մը հիմնեց, լրագրեր և տարեցյեր հրատարակեց, որոնք ժողովրդեան մէջ օգտակար ծանօթութիւններ ծաւալելու կը ծառայէին: Նատ չ'անցաւ՝ կառավարական պաշտօնի մէջ մտաւ. նախ քարտուղար եղաւ, յետոյ անդամ Պէնսիլվանիոյ

Երեսփոխանական ժողովին և կարեւոր տնօրէնութիւններ առաջարկեց և ընդունել տուաւ, այն է ուսումնարաններու, հիւանդանոցներու եւ ուրիշ հանրօգուտ հաստատութիւններու հիմնարկութիւն։ Միանդամայն



գիտութիւններու կը պարապէր։ Հանճարեղ գիւտերը ըրաւ ելեքտրականութեան վերաբերեալ, և շանթարգելն հնարեց։ 1753 ին Ամերիկայի թղթատարութիւններու վերատեսուչ անուանեցաւ։ Երկու տարի ետքն ալ պատգամաւոր զրկուեցաւ Անգլիա՝ իր հայրենակիցներու շահերն պաշտպանելու, և քանի մը մասնական յաջողութիւն ձեռք բերաւ։ Բայց դժոհութիւններու հիմնական պատճառները բառնալ կարելի չեղաւ եւ վերջապէս պատերազմ ծագելով Անգլիոյ և Ամերիկա-

յի միջեւ, Ֆրանքլին մեկնեցաւ Լոնտրայէն։ Վերադարձին՝ Պէնսիլվանիոյ կողմէ երեսփոխան ընտրուեցաւ կեդրոնական ընդհանուր ժողովին, և մեծ բաժին ունեցաւ Ամերիկայի անկախութեան հրատարակման գործին մէջ։ 1776 ին Ֆրանսա զրկուեցաւ օդնութիւն խնդրելու, և մեծ համակրութեամբ ընդունուելով՝ իր ամէն խնդրածը ձեռք բերաւ։ 1783 ին ստորագրեց հաշտութեան նշանաւոր դաշնագիրն որ իր հայրենիքին անկախութիւնը կ'ապահովէր։ Երկու տարի յետոյ վերադարձաւ Ամերիկա, ուր փառաւոր ընդունելութիւն մը ըրին իրեն իր հայրենակիցները, եւ Պէնսիլվանիոյ նահանգին գահերէց անուանեցին զինքը։ 1788 ին գործէ քաշուեցաւ և Երկու տարի յետոյ վախճանեցաւ 84 տարեկան հասակին մէջ։

Ֆրանքլին ոչ միայն գերընտիր քաղաքացի մը եւ ճարտար բնագէտ մը եղաւ, այլ և մեծ բարոյախօս մը և առաքինութեան տիպար։ Ինքնակրթական մեթոս մը հնարած էր իր բարոյական պակասութիւններն ու մոլութիւնները ուղղելու համար, և այսպէս իր հայրենակիցներու բարքն ալ կրթելու մեծապէս նպաստեց իր ժողովրդային գրուածներով։

Ահաւասիկ իր բարոյական ինքնակրթութեան մեթոսը, զոր իբրեւ կտակ իր սերունդին կ'աւանդէ այս մեծ քաղաքացին։

ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՄԷԶ ՑԱՌԱՋԴՐԻՄԵԼՈՒ ՄԻՋՈՑ

« Պատանեկութեանս ժամանակ դժուարին եւ խիզախ խորհուրդ մը յղացայ, այն է բարոյական կատարելութեան հասցունել զիս։ Կը բաղձայի պահպանել զիս այն ամէն մոլութիւններէն ու սխալներէն, որոնց մէջ

կրնային քաշել ձգել զիս բնական հակումը, սովորոյթը կամ ընկերութիւնը։ Այս դիտաւորութեամբ հետեւեալ միջոցը փորձեցի. Տասներկու առաքինութիւններու անուան տակ ժողվեցի ինչ որ ներկայացաւ միտքիս՝ իբրև կարեւոր և բաղձալի, և այն անուններու իւրաքանչիւրին առջև կարճ պատուէր մը դրի, անոնց նշանակութեան տուած ընդարձակութիւնս յայտնելու համար։

« 1. Փուժկալութիւն. — Մի՛ ուտեր ստամոքսդանրայնելու չափ, և մի՛ խմեր գլուխդ դառնալու չափ։

2. Լոռութիւն. — Մի՛ ըսեր այնպիսի բան մը որ ո՛չ ուրիշներու կրնայ օգտակար կամ պիտանի ըլլալ, և ո՛չ քեզ։ Զգուշացի՛ր ունայնաբանութենէ։

3. Բարեկարգութիւն. — Բնակարանիդ մէջ ամէն բան իր յատուկ տեղն ունենայ և ամէն գործ իր ժամանակ։

4. Յառաջադրութիւն. — Հաստատապէս որոշէ՛ ինչ որ պարտիս ընել, և առանց թերանալու կատարէ՛ ինչ որ դրած ես միտք։

5. Խնայսլութիւն. — Քեզ կամ ուրիշներու օգուտ չունեցող ծախք մի՛ ըներ, այսինքն մի՛ վատներ։

6. Աշխատութիւն. — Մի՛ կորսնցներ ժամանակը. միշտ զբաղէ՛ օգտակար բանով մը։ Հեռու կեցի՛ր անպէտ գործ երէ։

7. Անկեղծութիւն. — Զգուշացի՛ր պատիպատ գործերէ ու խօսքերէ. խորհէ՛ անմեղութեամբ ու արդարութեամբ, և ինչպէս որ կը խորհիս՝ այնպէս խօսէ՛։

8. Արդարութիւն. — Մի՛ վսասեր մէկուն՝ անիրաւութիւն ընելով կամ պարտականութիւնդ եղած բարեքը չընելով։

9. Չափաւորութիւն. — Փախի՛ր ծայրայեղութենէ։ Զգուշացի՛ր քեզ արուած վնասին կամ անիրաւութեանց վրայ դառնապէս զգածուելէ։

10. Մաքրութիւն. — Մաքո՛ւր պահէ մարմինդ, հանդերձներդ և բնակարանդ։

11. Հանդարտութիւն. — Մի՛ վրդովիր չնչին բաներէ, ո՛չ ալ հասարակ կամ անխուսափելի դէպքերէ։

12. Խոնարհութիւն. — Յիսուսի նմանէ՛։

« Այս ամէն առաքինութիւններն ինչ ունակութիւն ընելու համար, որոշեցի իւրաքանչիւրին կատարման մէկ մէկ շաբաթնուրիել մասնաւորապէս, առանց միւսներն ալ զանց առնելու։

« Այս նպատակով տասներկու երեսներէ բաղկացած տետրիկ մը չինեցի, ամէն մէկ երեսին վերի գլուխը առաքինութեան մը անունը դրեցի և կարմիր մելանով վերէն վար եօթը գիծ քաշեցի, շաբթուան եօթը օրերուն համար, և իւրաքանչիւր սիւնակին վերի ծայրը եօթը օրերէն մէկուն անունը. յետոյ այն սիւնակները տասներկու մասի բաժնեցի, տասներկու տողաձեւ գիրերով։ Այս գիծերուն և օրուան սիւնակին վրայ մելանով կէտ մը կը դնէի, նշանակելու համար այն սիւալները զոր գործած ըլլալս կը ճանչնայի։

« Այսպէս կրնայի կատարեալ դասընթաց մը ընել տասներկու շաբաթի մէջ, և տարին չորս անգամ վերսկսիլ։ Ինչպէս որ ընդարձակ պարտէզ մը մաքրել ուղող մարդ մը չը ջանար բոլոր մոլաքոյսերը միանգամայն խլել, վասն զի իր կարողութենէն վեր է, այլ կը սկսի նախ ածուներէն մին մաքրել և առաջինին գործն աւարտելէ յետոյ անցնիլ միւսին, այսպէս ես ալ կը

յուսայի քաջալերական բերկրութիւն մը ճաշակել տես-  
րիկիս երեսներուն վրայ տեսնելով իմ յառաջադիմու-  
թիւնս առաքինութեան ճանքուն մէջ, սխալացոյց կե-  
տերուն հետզհետէ նուազումովը, մինչև որ վերջապէս  
տետրիկիս երեսները կատարելապէս սպիտակ տեսնելու  
երջանկութիւնն ունենայի տասներկու եօթնեակի օր-  
քստօրէական քննութենէ ետքը:

«Ուստի սկսայ գործադրել այս ծրագիրը, և զար-  
մացայ տեսնելով որ երեւակայածէս շատ աւելի պա-  
կասութիւններ ունէի. բայց յետոյ գոհութեամբ տեսայ  
որ օրի կը պակսէին:

«Կը փափաքիմ որ իմ ապագայ սերունդս գիտնայ  
թէ իրենց պապերէն մին, Աստուծոյ չնորհած. օգնու-  
թեամբ, այս միջոցով երջանիկ կեանք մը վարեց մին-  
չեւ իր եօթանասուն իններորդ տարին, ուր կը գրէ այս  
տողերը»:

Նոյն մեծ անուն իմաստասէրին հրահանգիչ աւանդ-  
ներէն մին է նաև հետեւեալը:

#### Շ Զ Ա Կ

«Իմ կարծիքս է թէ մենք այս աշխարհի մէջ աւե-  
լի բարիք կրնայինք քաղել և աւելի քիչ նեղութիւն  
կրել, եթէ մեր շշակին համար (տիւտիւկ) յափազանց  
ծախս ընելէ զգուշանալուզէինք: Որովհետեւ ինձ այն-  
պէս կը թուի թէ աշխարհի մէջ գտնուած դժբաղդնե-  
րէն շատերը այս զգուշութիւնը չընելնուն համար թըշ-  
ուառութեան մէջ ընկած են:

«Պիտի հարցնէք անշուշտ թէ ի՞նչ ըսել կուզեմ:  
Դուք պատմութիւնը կը սիրէք. ուստի կը յուսամ որ  
չէք մեղադրեր զիս՝ եթէ ինձ վերաբերող պատմու-  
թիւն մը ընեմ ձեզ:

«Երբոր հինգ կամ վեց տարեկան տղայ էի, բա-  
րեկամներս տօնի օր մը իմ փոքրիկ գրպանս պղինձ  
գրամներ լեցուցին, իսկոյն խաղալիկ ծախողի մը խա-  
նութը վազեցի, բայց ճամբան տղու մը ձեռքը շակ  
մը տեսնելով, ա'յնչափ զմայլեցայ անոր ձայնին, որ  
գրպանիս բոլոր ստակն հանեցի անոր տուի և շակն  
առի: Երբոր տուն վերադարձայ եւ ուրախութեամբ  
շակը վեր վար հնչեցնելով ամենուն ականջը ճանձ-  
րացնել սկսայ, եղբայրներս քոյրերս և մօրաքեռորդի-  
ներս իմանալով որ այն անախորժ շունչին համար այն-  
չափ ստակ տուած էի, բայն ինձ թէ արժէքէն տաս-  
նապատիկ աւելի տուած էի, և գիտել տուին որ տուած  
ստակիս ինը տասներորդով շատ մը լաւ բաներ կրնայի  
գնել՝ եթէ խոհեմութիւն ըրած ըլլայի: Վերջապէս  
ա'յնչափ ծիծաղեցան անմտութեանս վրայ, որ խորհըր-  
դածութիւնը շակին ի սկզբան պատճառած հաճոյքէն  
աւելի կակիծ տուաւ ինձ և լացի:

«Սակայն այս գէպքը միտքէս չելլելով, ապագա-  
յին մէջ օգտակար եղաւ ինձ, այնպէս որ երբ սիրտս  
անպէտ բան մը զնելու յօժարութիւն զգար, իսկոյն  
շակը միտքս բերելով ետ կը կենայի և ստակս կը պահէի:

«Երբոր մեծցայ, մարդոց մէջ մտնելով և անոնց ա-  
րարքը գիտելով՝ տեսայ որ շակը շատ սուղ կը գնէին:

«Երբ մէկը կը աւեսնէի որ պատուանշան կամ աստի-  
ճան ձեռք բերելու համար իր ժամանակը, հանգիստը,  
աղատութիւնը, առաքինութիւնը և գուցէ նոյն իսկ իր  
ճշմարիտ բարեկամները զոհելով՝ առտուընէ մինչև ի-  
րիկուն մեծամեծներու տուները կը գեգերէր, կ'ըսէի  
միտքէս թէ «Այս մարդը չափէն աւելի ստակ կուտայ  
իր շակին:»

« Երբ ուրիշ մէկը տեսնէի որ ժողովրդեան սիրելի ըլլալու բաղձանքով հանրային վէճերով ժամանակ կ'անցունէր եւ իր գործերն երեսի վրայ կը թողուր. « Այս մարդն ալ արժէքէն աւելի ստակ կուտայ իր շշակին » կ'ըսէի :

« Երբ ագահ մարդ մը կը տեսնէի որ կտոր մը դեղին մետաղ աւելի ունենալու համար կը հրաժարէր կեանքին դիւրութիւններէն, ուրիշներու բարիք ընելու բերկութենէն և իր քաղաքացիներու յարգն ու բարեկամութիւնը վայելելու քաղցրութենէն, « Խեղճ մարդ, կ'ըսէի, արժէքէն աւելի ստակ կուտաս շշակիդ : »

« Երբ զբօսասէր մարդ մը կը տեսնէի, որ իր սրտին ամէն գովելի կատարելութիւնները և իր վիճակի բարուքումը զգայական հեշտութիւններու կը զոհէր և իր առողջութիւնը կը խանգարէր, « Անխոհե՛մ մարդ, կ'ըսէի, փոխանակ զուարճութիւններու՝ վիշտ կը հայթայթես քեզ, և արժէքէն աւելի ստակ կուտաս շշակիդ : »

« Երբ ուրիշ մէկն ալ կը տեսնէի, որ առանց կարողութիւնը ներելու՝ գեղեցիկ հագուստներ, գեղեցիկ կարասիներ, գեղեցիկ կառքեր ունենալու ետեւէ էր, զանոնք պարտքով կը հայթայթէր և վերջն ալ կեանքը բանտի մէջ պիտի լմացունէր, « Աւաղ, կ'ըսէի, արժէքէն շատ աւելի վճարեց իր շշակին : »

« Երբ գեղեցիկ օրիորդ մը կը տեսնէի բարեբարոյ և հեղ, որ բիրտ ու վայրագ մարդու մը հետ ամուսնացած ըլլալով՝ միշտ կը չարչարուէր անկէ, « Յաւալի բան է, կ'ըսէի, որ խեղճ աղջիկն այնչափ ստակ տուեր է շշակին : »

« Վերջապէս համոզուեցայ թէ մարդկային թշուառութիւններու մեծ մասն՝ իրերու արժէքը սխալ հաշ-

ուելէ և շշակները արժէքէն աւելի գնելէ առաջ եկած են :

« Սակայն կը զգամ որ այդ դժբաղդ մարդոց վրայ կարեկցելու պարտաւոր եմ, երբ կը խորհիմ որ իմ պարծած խոհեմութեամբս հանդերձ՝ ա'յնպիսի բաներ կան այս աշխարհի մէջ, որոնք եթէ աճուրդի դրուէին, դիւրաւ կրնայի զանոնք գնելով ինքզինքս աւերել, և յետոյ տեսնել թէ անդամ մըն ալ « Արժեթեն աւելի ստակ տուեր եմ շշակին : »

## Ա Ք Ր Ա Յ Թ

ԵՒ

Մ Ս Ն Ե Լ Ո Ւ Մ Ե Ր Ե Ն Ս Ց

Մեր հանդերձները սովորաբար կը շինուին բամպակէ, բուրդէ, մետաքսէ և կտաւէ : Բամպակը իր նախնական ձեւին մէջ շատ տարբեր է մանուած բամպակէն : Բամպակը մանելու համար յատուկ գործարաններ ու մեքենաներ կան : Ընդհանրապէս դիպուածը պատճառ եղած է մեծամեծ գիւտերու . պարզ գործաւորներ նշանաւոր հնարիչներ եղած են, այսպիսիններու կարգէն էր նաև Ռիշարթ Աքրայթ, բամպակ մանող մեքենային հնարիչը :

Աքրայթ ծանօթացած էր Բէյ անուն ժամագործի մը, և կը կարծուի թէ Բէյ տուած էր անոր բամպակ մանելու գաղափարը : Ինչ որ ալ ըլլայ, Աքրայթ իր ուշադրութիւնը բոլորովին այս գաղափարին նուիրեց, և անխոնջ եռանդով սկսաւ աշխատիլ, որպէս զի կա-

բենայ իրացնել զայն։ Նոյն միջոցին Ա.քրայթի հայրենակիցները Երեսփոխան ընտրեցին զայն, բայց Ա.քրայթ ա՛յն աստիճան չքաւոր էր, որ հագնելու զգեստ չունենալով՝ զինքը ընտրողները հանգանակութեամբ զգեստ մը տուին անոր, և այսպէս կրցաւ ընդունիլ իր Երեսփոխանական պաշտօնը։

Ա.քրայթի շինած մեքենան շատ թշնամիներ ունեցաւ, գլխաւորապէս բամպակի գործաւորները, որոնք այսպիսի մեքենայի մը հնարումը իրենց աշխատութեան վնասաբեր կը համարէին։ Հետեւաբար վախնալով ժողովրդեան սպառնալիքներէն, որոշեց իր մեքենան և ուրիշ գոյքերը ապահով տեղ մը փոխադրել։ Նոթինկէմ գնաց և հոն հարուստ դրամատէրներէ օգնութիւն խնդրեց։ Անոնք ալ հաճեցան պէտք եղած դրամը տալ, պայմանով որ մեքենայէն յառաջ եկած շահուն իրենք ալ մասնակցին։ Սակայն տեսնելով որ մեքենան ակընկալուած շահը չը բերեր, հրաժարեցան դրամ տալէ։ Այն ատեն Ա.քրայթ գիմեց Սթրիւտ և Նիտ պարոններուն, որոնց առաջինը գուլպայ շինելու արուեստին հնարիչն ու արտօնատէրն էր։ Աս իսկոյն հասկցաւ Ա.քրայթի գիւտին կարեւորութիւնը և ընկերութեան պայմանագիր մը կնքեց անոր հետ։ Սոյն ընկերութեան չնորհիւ հարստութեան գուռները բացուեցան Ա.քրայթի առջեւ։

1769 ին, «ՈՒՀԱՐՄ Ա.քրայթ Ժամագործ Նոթինկէմի մէջ» անունով հրամանագիր մը ստանալով, նոյն քաղաքի մէջ բամպակ մանելու գործարան մը հիմնեց, որու մեքենաները ձիերը կը դարձունէին, ուրկէ կը հասկըցուի թէ իր մեքենան տակաւին կատարելագործումի կարօտ էր։ Ա.քրայթ առանց բնաւ վհատելու, այնչափ

փոփոխութիւններ ու բարւոքումներ մտցուց անոր մէջ, որ վերջապէս գործածութիւնը շատ գիւրացաւ և օգտաւէտ եղաւ։ Ա.քրայթ այս յաջողութիւնը յարատեւ աշխատութեամբ միայն կրցաւ ձեռք բերել։ Նախ իրեն օգնող դրամատէրները տեսնելով որ Ա.քրայթի մեքենան մեծ ամեծ ծախքերու կ'ենթարկէր զիրենք առանց նշանաւոր արդիւնք մը արտադրելու, վհատեցան։ Սակայն ձեռնարկութիւնը յաջողեցաւ, բայց այն ժամանակ ալ գործաւորները զինուեցան Ա.քրայթի գէմ եւ Շորլիի մօտ շինած մէկ գործարանը հիմնայատակ ըրին։ Նոյնպէս և Լանքչայրի վաճառականները մէ արանելով դատ բացին Ա.քրայթի գէմ եւ արդարեւ յաջողեցան ոչչացնել անոր արտօնութիւնը, սակայն Ա.քրայթ չը վհատեցաւ այս ձախողուածէն։ Ընդհակառակն ուրիշ քաղաքներու մէջ նորանոր մանարաններ հիմնեց։ Սթրիւտի հետ կնքած պայմանագրին ժամանակը լրանալով, Քրամֆօրտի գործարանն ալ իր տրամադրութեան տակ առաւ, եւ քիչ ժամանակէն այնքան ընտիր գործեր արտադրեց որ ամենուն համակրանքը շահեցաւ։ Ա.քրայթ անխոնջ աշխատող մըն էր, զարմանալի եռանդով և փութաշանութեամբ օժտուած, Յիսուն տարեկան հասակին մէջ քերականութիւն ուսաւ իր ուղղագրութիւնը ճշգելու համար։ Այս նոր զբազման պատճառաւ ժամանակ չը կորսնցնելու համար՝ Ա.քրայթ քառաձի կառքով կ'երթար իր գործարանը։ Ահա այսպէս Ա.քրայթ հիմնադիրը եղաւ այժմու տարազագործութեան, որ այսօրուան օրս, անբաւ հարստութեան աղբիւր մըն է թէ՛ անհատներու և թէ՛ ազգերու։ Ուստի երբ բամպակ զգեստ մը հագնինք, երախտագիտութեամբ պարտինք յիշել այս ճշմարտապէս մեծ մարդուն անունը։



Է Տ Ի Ս Ը Ը Ն

ԵՒ

Զ Ա Յ Ե Ն Ա Գ Ի Ր

Թովմաս Այվա Էտիսըն 1847 ին ծնած է Միլան,  
Միացեալ Նահանդներու մէջ։ Հայրը փոփոխակի դեր-

ձակ, պարտիզպան, ընդավաճառ, կալուածներու փոխանակիչ ու առուժախի միջնորդ եղած էր։ Հօրմէն ժառանգեց առողջ և կորովի կազմ, որ իր ընտանիքին գլխաւոր հարստութիւնը կը թուի ըլլալ։ Իր երկու պապերը հարիւրամեայ են և դեռ կ'ապրին։ Իր ծնընդենէն յետոյ, ծնողքը Միլանէն մեկնեցան և Միջիկան գաւառին մէջ Բօոթ-Հիւրօն կոչուած աննշան գիւղը հաստատուեցան, ուր անցաւ էտիսընի մանկութիւնը։ Նշանաւոր հնարիչը իր կրթութիւնը կը պարտի իր մօր, որովհետեւ, ինչպէս ինք կը խոստովանի այժմ, կեանքին մէջ երեք ամիս միայն վարժարան գացած է։ Մանկութեան ժամանակ վայրենի բնաւորութեան մը տէր էր։ Միայնութիւն կը սիրէր, տանը մէկ անծանօթ անկիւնին մէջ առանձնացած կ'աշխատէր և անյագ հրապոյր մը կը զգար գիրքի տառերը տեսնելով։ Անխոնջ աշխատող մըն էր, մանուկ հասակէն կ'ուզէր ամէն բան ընդգրկել և ամէն բանի վրայ ծանօթութիւն ստանալ։ Իր ծնողքը աղքատ էին։ Իրիկուն մը, ճաշի ժամանակ, հայրը ըստաւ իրեն։ «Ահա՛ տասներկու տարեկան եղար։ կորովի եւ առողջ ես, մինչեւ հիմա քեզ խնամեցի, այսուհետեւ պէտք է որ դու հոգաս ինքզինքդ, վաղուընէ սկսած Շոգեկառի մանուկ պիտի ընեմ քեզ Քանատայի մեծ գիծին վրայ։ Էտիսըն առանց բնաւ դիտողութիւն ընելու՝ սա պատասխանը միայն տուաւ։ «Նատ լաւ։»

Տեսնենք թէ ի՞նչ է շոգեկառքի մանուկին պաշտօնը։ Ամերիկայի շոգեկառքերը չեն նմանիր հոս տեղի շոգեկառքերուն։ գիծին երկայնութեամբ շարուած կառքերուն մէջ նեղ ճամբար, մը կայ, որ կառքերը իւրարու հետ կը միացընէ։ Այդ երկայն դահլիճին (սալօն) մէջ են լոգարանը, սրահը, ննջարանը, խոհանոցը,

պարտէզը, ընթերցարանը. կարծես թէ շարժուն տուն  
մըն է: Այդ կառախումբերուն մէջ կը շրջին տասնէն  
տասնը չորս տարեկան տղաք, որոնք լրագիր, լուցկի,  
պտուղ, շաքարեղէն, սիկառ կը վաճառեն ուղեւորնե-  
րուն, անոնց ձանձոյթը գարմանելու համար: Ասոնց  
ընկերութեան մէջ մտաւ էտիսըն: Իր ընկերները առա-  
ւոտէն մինչեւ իրիկուն շարաշար կ'աշխատէին. էտիսըն  
երբեմն կը պահուըտէր հակերուն մէջ և հո՞ն պատուած  
ու աղտոտ գրքերով կը զբաղէր: իր աշխատանոցը այն  
հակերուն մէջ փոխադրած էր, և հոն պահած իր տղա-  
յական գործիները, քիմիական նիւթերը, և այլն: Գրե-  
թէ միշտ մեքենաներն ու գործիները կը դիտէր ուշա-  
դրութեամբ և տղայ հասակէն կը շանար հասկնալ մե-  
քենականութեան զարմանալի օրէնքները: Ամէն անգամ  
որ շոգեկառքը կայարան կը հասնէր, գործը կը թողուր,  
հեռագրի սենեակը կ'երթար և գործիները կը զննէր:  
Նմանապէս երբ ծախու լրագիր առնելու համար տպա-  
րանները կը մոնէր, ժամերով կը կենար հոն և հետա-  
զըննին աշքերով կը դիտէր տպագրական մամուլը, ինչ-  
պէս նաև տառերը ձուլելու, շարելու, տպելու, գիր-  
քերը կազմելու եւ այլ գործողութիւնները: Տէրոյթ  
մրի Բրէս լրագրին գործաւորները շատ կը սիրէին  
զայն: Օր մը յիշեալ լրագրոյն տպարանին մէջ 150 քի-  
լոյի շափ հին մաշած տառեր ծախու հանուելով, էտի-  
սըն չնին գնով մը առաւ զանոնք և տարաւ իր կառ-  
քին մէջ պահեց: Հոն զարմանալի գործի մը ձեռնար-  
կեց: Լրագիր մը հիմնեց, որու տէրը, յօդուածագիրը,  
գրաշարը, տպագրիչն ու ցրուիչը ինք միայն եղաւ, և  
երկաթուղիին անունով Կրէյս Թրըմի Հէրլիս կոչեց  
զայն: Պարզ թերթ մըն էր, շաբաթը մէկ

հրատարակուէր և մեծ քանակութեամբ կը ծախուէր:  
Իր առաջին թերթը այնքան համակրալիր ընդունելու-  
թեան արժանացաւ հասարակութեան կողմէ, որ Բորթ-  
Հիւրոնի մէջ երկրորդ թերթ մըն ալ հրատարակել  
սկսաւ Բոլ-Բրայ «Անխորհրդապահ Պողոս» անունով:  
Այս թերթ ո՛րչափ կծու յօդուածներ պարունակէր,  
ա՛յնչափ աւելի կը փնտուուէր ժողովրդէն: Բուռն յօդ-  
ուած մը գրած ըլլալով Բորթ-Հիւրոնի բնակիչներուն  
մէկուն գէմ, այն թիւը շուտով սպառեցաւ. թշնաման-  
ուած անձը փնտուելով նոգեկառի մանուկը՝ գետեղ  
ըին մօտ գտաւ զայն, կատաղաբար վրան յարձակեցաւ  
և բունեց գետին մէջ նետեց: Բարեբաղդաբար, էտի-  
սըն լողալ գիտնալով՝ ազատեց ինքզինքը: Այն օրէն  
յետոյ ալ չի հրատարակուեցաւ Բոլ-Բրայ թերթը: Միւս  
լրագիրն ալ տխուր վախճան մը ունեցաւ: Օր մը՝ աշ-  
խատանոցին սեղանին վրայ գրուած փոսփորի սրուակը  
վար իյնալով բունկեցաւ և սկսաւ այրիլ վաճառքներու  
կառքը: Նոգեկառքերու վարիչը մարել տուաւ հրդեհը  
և կառքէն գուրս նետեց էտիսընի գործիները, տպագ-  
րական տառերը և աշխատութեան բովանդակ ար-  
դիւնքը: Այս երկու գէպքերը փակեցին էտիսընի լրա-  
գրական ասպարէզը: Եւ սակայն ուրիշ անակնկալ գի-  
պուած մը աւելի փառաւոր ասպարէզի մը գուռները  
բացաւ մեծ հնարիչին առնկ: Օր մը Յօր-Բլէմանի կա-  
յարանին քարափին վրայ կը սպասէր, յանկարծ իր մօ-  
տէն անցնող ճեպընթաց վայրաշարժ մեքենայէ մը քսան  
մէթը հեռոի մանկիկ մը կը նշմարէ որ կը խաղար երկա-  
թէ ճամբուն վրայ: Էտիսըն տեսնելով տղուն անխու-  
սափելի վտանգը, իսկոյն ճամբուն վրայ կը նետուի և  
մանկիկը կը գրկէ ճամբէն գուրս կը նետէ յաղթական

գէմքով։ Կառախումբը կ'անցնի և մանկիկը ողջ առողջ հօրը կը յանձնուի։ Մանուկին հայրը, որ Բօռ-Քլէմանի հեռագրապետն էր, իր բնակարանը կը հրաւիրէ զայն, և հեռագրութիւն կ'ուսուցանէ անոր։ Այսպէս էտիսըն անակնկալ պտտահարի մը և միանգամայն իր անխոնջ աշխատութեան շնորհիւ նշանաւոր հեռագրապետ մը եղաւ։ Սկիզբները թերութիւն մը արգելք կը լաւ իր յառաջադիմութեան։ Զը կրնալով յաղթել իր ընթերցասիրական բուռն եռանդին, գործի ժամանակ գրական աշխատութիւններով կը զբաղէր։ այս պատճառով բազմաթիւ հեռագրատուններէ ճանրուեցաւ, բայց էտիսըն վհատիլ չէր գիտեր։ ուստի շարունակեց հեռագրական ասպարէզին մէջ և յամառ ու հանճարեղ աշխատութեամբ կարեւոր գիւտեր ըրաւ հեռագրութեան մէջ, որոնք իր համբաւը աւելի տարածեցին, մանաւանդ ձայնագրին գիւտը որու գործածութիւնը այսօր տիեզերական եղած է։ Զայնագրին միջոցաւ մեր ձայնը, մեր խօսքը և մեր երգերը կ'արձանագրուին մետաղեայ թերթի մը վրայ և ամէն անգամ՝ որ գործին շարժեցնենք, նոյնութեամբ լսելի կը լան այդ ձայները։ Էտիսըն իր ձայնագիր գործին հասարակութեան ցոյց տալով՝ շաբաթը 2500 ֆրանք կը շահէր։

Նիւ-Եօրքէն ժամ մը հեռու կը գտնուի իր ամառնային բնակարանը։ Հո՞ն է իր աշխատանոցը, գործիները, մեքենանները և ուրիշ ամէն նիւթերը։ Իր տնօրէնութեան տակ կ'աշխատին ելեքտրագէտներ, մեքենագէտներ և ճարտարագէտներ։ Գրեթէ ամէն օր աշխարհի ամէն կողմերէն նշանաւոր անձեր այցելութեան կուգան իրեն որ ժպտուն եւ համակրելի գէմքով կը հիւրընկալէ ամենքն տլ, և յօժարակամ ցոյց կուտայ

անոնց իր գործիները։ Էտիսըն միջահասակ, բարեկազմ և կորովի մարդ մըն է, անխոնջ աշխատող։ Օր մը նորոգութեան համար հեռագրական գործի մը բերին իրեն, 60 ժամ շարունակ աշխատեցաւ անոր վրայ։ Իր մեքենաններուն քով ունի սիրուն մատենագարան մը։ Այնքան ընթերցասէր է որ ամէն կարեւոր գիրք և լրագիր կը մտնեն իր աշխատանոցը։ Կ'ըսէ թէ «Լաւագոյն է տասներկու անգամ ընտիր գիրք մը կարդալ, քան տասներկու անկարեւոր գիրք մէկ մէկ անգամ կարդալ»։ Աշխատանոցին մէջ իր ամէնէն սիրելի ընկերն է իր վերջին կատարելագործած Զայնագիրը, որու յաճախակի սա հարցումը կ'ուղղէ։ «Ի՞նչպէս ես, ծերո՛ւկ Ֆօնօկրաֆս»։

Այսպիսի մարդ մըն է ահա ձայնագրի մեծահանճար հնարիչը։ աղմուկէ, փառքէ, պսակներէ հեռու, լոիկ և անձայն կ'աշխատի։ Օր մը թերեւս ժողովուրդները երթան յաղթանակով պսակել զինք, որովհետեւ իր աշխատութիւնները ամէն գովեստէ վեր են, և իր գիւտերը, որոնց թիւը միշտ կը բազմանայ, մեծամեծ օգուտներ կը մատուցանեն մարդկային ազգին։

## ՄՕՆԿՈԼՖԻԷ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

ԵՒ

### Օ Դ Ա Պ Ա Ր Ի Կ Ի Ն Գ Ի Տ Տ Տ Ը Ը

Ո՛շչափ մեծ եւ սքանչելի գիւտեր ըրած է մարդէակը։ Շոգենաւերը, շոգեկառքերը, օդապարիկները և ուրիշ բազմաթիւ գիւտեր իրենց հնարիչներուն ա-

նունը անմահացուցած են և պիտի անմահացունեն երկրի վրայ։ Արդարե գեղեցիկ բան է համբառնալ օդին մէջ, և այդ համբարձում օդապարիկով միայն կ'ըլլայ։ Մարդիկ օդապարիկով կը շրջին մթնոլորտին մէջ, կը քննեն անոր վերին խաւերը ու զանազան աշխատութիւններ կը կատարեն պատերազմներու ժամանակ։ Ո՞վ հնարած է օդապարիկը։ Թրանսայի Անօնէյ քաղաքին մէջ երկու եղբայրներ կային թղթի գործարանատէր, Մօնկօլֆիէ եղբայրներ անունով։ Օդապարիկի առաջին գաղափարը անոնք յղացան և իրենց անունով « Մօնկօլֆիէռ » կոչեցին զայն, Խոչոր կտաւէ գունտ մը շինեցին, վարի կողմէն բաց, և թելերու միջոցով կողովի մը հետ հաղորդակցող։ Կողովին մէջտեղ դրին երկաթեայ վառարան մը յարդ այրելու համար, որպէս զի տաք շոգին գունտին մէջ մտնելով՝ թեթեւցնէ զայն եւ բարձրացնէ։ Առաջին փորձը Փարիզի մէջ կատարուեցաւ 1783 Սեպտ. 12 ին, Գիտութեանց ձեմարանի անդամներու և խուռն բազմութեան ներկայութեամբ, որոնք հիացումով կը դիտէին հրաշալի տեսարանը։

Մօնկօլֆիէ եղբայրներուն գիւտը գեղեցիկ էր, բայց գունտը տաք օդով լեցնելը վտանգաւոր կրնար ըլլալ։ Այդ անպատեհութեան առաջքը առնելու համար հարկ էր այնպիսի կազ մը պատրաստել օդապարիկին համար որ օդէն աւելի թեթեւ ըլլար և անվտանգ։ Բնագիտութեան ուսուցիչ երիտասարդ մը, Շառլ և Ռոպէր անուն եղբայրներուն հետ ընկերակցութեամբ, առաջարկեց օդապարիկները փոխանակ տաք օդով լեցնելու՝ ջրածին կազով լեցնել, որ օդէն դրեթէ տասն և չորս անգամ թեթև է։ 1783 Օգոստոս 27 ին, առաջին փորձը կատարուեցաւ Փարիզ, եւ Դեկտեմբեր 1 ին,

Շառլ և Ռոպէր իրենց նորահնար գործիքովը օդային ուղեւորութեան մը ձեռնարկեցին, Օդապարիկին գունտը կը շինուի մետաքսէ հաստ բեհեզէ (թափթայ) ցանցով մը ծածկուած։ վարի կողմէն կախուած է նաւակ մը որու մէջ կը նատին օդանաւորդները. վերի մասին մէջ կան մէկ կամ երկու դուռները որոնք կրնան բացուիլ կամ գոյուիլ լարի մը միջոցով։ Ջրածին կազը նաւակին մէջ դրուած մասնաւոր տակառներու մէջ կը պատրաստուի և աւելի մեծ տակառի մը մէջ մտնելով՝ խողովակի մը միջոցաւ կ'անցնի օդապարիկի գունտին մէջ։ Օդանաւորդը իր հետ կ'առնէ գրօշակներ, խարիսխ, աւազով լեցուն պարկեր, ծանրաչափ գործիներ և այլն։ Քանի բարձր ելլել ուզէ, աւազով լեցուն պարկերը վար կը նետէ, որով օդապարիկը թեթեւնալով աւելի կը բարձրանայ։ Վար իջած ժամանակ եթէ անտառի մը կամ ծովեղերեայ ժայռի մը վրայ և կամ ծովու մէջ իյնալու վտանգ տեսնուի, օդանաւորդը ուղղութիւնը կը փոխէ և խարիսխը աւելի ապահով տեղ մը նետելով հոն կ'իջնէ։ Դրօշակները այլ և այլ նշաններ տալու կը ծառայէն։ ծանրաչափը մթնոլորտին այլ և այլ վիճակները կը ցուցնէ, օրինակի համար՝ ստորին խաւերուն մէջ օդի ճնշումը աւելի է, իսկ վերին խաւերուն մէջ շատ քիչ։ Մանրաչափ գործիքը առե՛ք ձորի մը մէջ գրէ՛ք, կը տեսնէ՛ք սնդիկի սիւնակը կը բարձրանայ օդին ճնշումին տակ։ Եերան մը գագաթը ելք՛ք, կը տեսնէ՛ք որ սնդիկի սիւնակը վար կ'իջնէ։ Բարձրութեանց մէջ օդը անօսր է և հետեւաբար նուազ ճնշող։

Օդապարիկը հնարուելէն ի վեր շատ մարդիկ բարձրացած են օդին մէջ։ 1804 ին, Կէյ-Լիւսաք բարձրա-

ցաւ մինչև 7016 մէթր. 1862 ին կլէյշը եւ Քօքսվէլ բնագէտները՝ մինչև 10,000 մէթր. Պառաւ և Պիքսիոյ մինչև 7049 մէթր։ Այս բարձրութիւններէն կը տեսնենք թէ մարդիկ մինչև ո՞ր աստիճան կը յաջողին համբառնաւ։ Մթնոլորտին վերին բարձրութեանց մէջ կեանքի վտանգը անխուսափելի է։ Քանի՛ քանի ուղեւորներ մարած են, չնչառութիւննին դադրած է, մարմնոյն ամէն կողմերէն արիւնը առատաբար հոսած է, և երբեմն վտանգը ա'յնքան սաստիկ եղած է որ մահը վրայ հասած է։

Օդապարիկին կատարելութեան համար բան մը միայն կը պակսի՛ ղեկը, որու միջոցով միայն կարելի է մեր ուղած ուղղութիւնը տալ անոր։ Վերջին տարիներուն մէջ, գիտուններէն ոմանք աշխատելով փորձեր ըրին ղեկաւորելու օդապարիկը, բայց դեռ պէտք եղածին չափ կատարելագործուած չէ այս գիւտ։ Աշխատութիւնները կը շարունակուին օդապարիկը աւելի օդտակար և աւելի գործածական վիճակի մէջ դնելու համար։

## Զ Ե Փ Ի Ռ Ո

Դու փափկաթեւ մանկիկ զեփիւռ  
Աղբերց վրայէն լուսակարկաւ  
Անուշ հոտով ծաղկանց իսփիւռ  
Ի՞նչպէս թոշիս ինձ ընդ առաջ.  
Ու խունկ և զով ընծայելով  
Զիս ողջունես հեղիկ շնչով։

Ո՞հ կը սիրեմ ըզքեզ հողմիկ  
Երբ դու փութաս ինծի դալու  
Ի պար, ի թուիչ, ի սոյլ մեղմիկ  
Այլած ճակտիս իմ այցելու։  
Ծաղիկ հոգւոյս քեւ զովացած  
Բացուի ի լոյս ախորժ կենաց։

Սլացիր փափկիկ դո՛ւ սուրհանդակ,  
Լուր տա՛ր հովտին ու ծործորին  
Ու անտառաց բարձրադիտակ,  
Ուր երամով սոխակը թառին,  
Թէ մտերիմն իւրեանց եկաւ  
Բիւր զմայլմանց յիշատակաւ։

Ո՞հ, կորսուած իմ հաճոյքներ,  
Հոս վերստին գտնեմ զձեզ,  
Ծառոց շըքով էք ծածկըւեր  
Ու փըրփըրով առուակին հեզ,  
Ահա կայտուէք ի յայս ծըմակ,  
Ի յայս թըքփուտ հովանոցակ։

Հոս դառն հոգեր մէկիկ մէկիկ  
Ճակտէս ի բաց հեռանային  
Ու փունջք ժամուց գեղապարիկ  
Սիրտս թեթեւ օրօրէին,  
Եւ բնութիւն մայր որդեսէր  
Քընքուշ գրկաց մէջ զիս գըգուէր։

Մըտերմութիւն, Սէր կրակ ու բոց,  
ի՞նչ անուշ էք յայս տեսարան,  
Ուր բիւր դալարք ձեղ հանգստոց  
Ու անհուն դաշտեր զբօսարան,  
Մըտերմութիւն, ինձ երանի՛,  
Թէ հոս ծոցէդ հոգիս թռանի։

Դու փափկաթեւ մանկիկ զեփիւու  
Աղբերց վրայէն քաղցրակարկաշ,  
Անուշ հոտով ծաղկանց ըսփիւու,  
Թըռի՛ր թըռի՛ր ինձ ընդ առաջ,  
Ու խունկ և զով ընծայելով՝  
Պարէ չորս դիս հեղիկ շնչով։



## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

### ՄԱՐԴՈՒՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Գեղեցիկ էր նախաստեղծ աշխարհը, երբ դեռ նոր  
էր զոյացած Աստուծոյ խօսքով, բայց անոր վրայ տա-  
կաւին մարդ չը կար և ոչ ոք կը վայելէր անոր գեղեց-  
կութիւնը. Յորեկը փայլուն արեւը կը բարձրանար եր-  
կինքին վրայ և լոյս ու չերմութիւն կը թափէր. գիշերը  
կ'երեւար համեստագեղ լուսինը և կը շողջողային ան-  
համար աստղեր. երկինքի կապոյտ կամարը, ոսկեփայլ  
և արծաթանման ամպերով զարդարուած, կը պարզէր  
իր հրաշալի անսահման վրանը, անհուն ծովը ալեկոծ-  
ուած կը տատանէր, երկրաբերձ լեռները իրենց ձիւ-  
նափայլ գագաթները ամպերուն մէջ կը ծրաբէին, ա-  
մէն կողմէ կը հոսէին յորդառատ գետեր և ջրվէժներ  
կազմելով ակնախտիղ կը ցոլային փրփրագեղառուակ-  
ներ խոխոջելով կ'ընթանային քաղցրաբոյր խոտերու  
վրայէն, բարձրուղէշ արմաւենիները իրենց սէգ կա-  
տարները կը շարժէին, թաւախիտ անտառները խօսա-  
կից էին թեթեւ և զովարար զեփիւոին հետ, կանաչ  
դաշտը՝ շքեղ ծաղիկներով հագուած՝ անուշահոտու-  
թիւն կը բուրէր, սիրունիկ կենդանիները վազվելով  
կը զուարճանային, երփներանգ թռչունները և փայլուն  
միջատները ադամանդի նման ցոլացած՝ օդին մէջ կը  
ոլանային, սոխակը իր քաղցր դայլայլիկը կ'արձէր,  
բայց մարդս դեռ ստեղծուած չէր, և ոչ ոք կը վայե-  
լէր աշխարհիս հարստութիւնները։

Արեգակը, լուսինը ու աստղերը թէև գեղապանծ, բայց կարծես անզգայ կ'ընթանային իրենց համար սահմանուած ճանքէն։ Վարդը պճնազարդուած կը բուրէը անտեղեակ իր գեղեցկութեան։ սոխակին դայլայլիկը չէր պարարէր մէկուն լսելիքը։ Կենդանիները թէեւ ամէն բան կը տեսնէին ու կը լսէին, բայց չէին համկընար ո՛չ բնութեան գեղեցկութիւնը և ո՛չ այն ամենիմաստ օրէնսդրութիւնը, որով ստեղծուած էր ան։ անոնցմէ ոչ մէկը կարող էր մինչեւ անգամ՝ գլուխը երկինք բարձրացնել եւ երախտագիտութեամբ գոչել։ «Ստեղծո՛ղ, ո՛րքան մեծ և ողորմած ես դու, ո՛րշափ կը սիրեմ ես Քեզ։» Ամէն արարած Արարչին սահմանած օրէնքներուն համեմատ կ'ապրէր։ չունենալով սեպհական անկախ կամք, չէր կարող մեղանչել, բայց և ոչ ալ բարի գործել, որովհետեւ չէր գիտեր ո՛չ չարը և ո՛չ բարին։

Տեսնելով թէ որքան գեղեցիկ է աշխարհս, Աստուած՝ լեցուն անսպառ սիրով, ուզեց ստեղծել էակ մը որ իր անմահ հոգիով նմանէր տիեզերքի Արարչին եւ գործադրէր անոր օրէնքը՝ ոչ թէ բռնադատուած ինչպէս միւս անբան արարածները, այլ հասկնալով այդ օրէնքին զգոնութիւնն ու քաղցրութիւնը, այնպէս որ իր դատողութեամբ ձդտէր դէպի ճշմարիտը, բարին ու գեղեցիկը և յօժար կամքով հրաժարէր չարէն ու մեղքէն։

«Արացուք զմարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան», ըստ Տէրը, և հողէ ստեղծելով գեղեցիկ մարմին մը՝ իր աստուածային բերնէն ներշնչեց անոր հոգի բանական։ Մարդս բացաւ աչքերը, զարմացած ու հիացած նայեցաւ աշխարհիս վրայ, և զգալով

իր աստուածային ծագումը, իր հոգին լեցուեցաւ երջանկութեամբ, երախտագիտութեամբ և սիրով դէպի իր Ստեղծողն։

Աստուած տեսնելով որ մարդ միայնակ տիւուր կ'ապրի երկրի վրայ, մտածեց անոր երջանկութիւնը կատարեալ ընել և անոր համար գեղեցիկ կենակից մը ստեղծեց։ Ստեղծագործութիւնը վերջացնելով՝ Աստուած ըստ նախամարդուն և անոր ընկերին. «Սիրեցէ՛ք զմիմեանս, աճեցէ՛ք և բազմացարո՛ւք և լցէ՛ք զերկիր և տիրեցէ՛ք դմա և իշխեցէ՛ք ամենայնի որ ի վերայ երկրի . . . . .»

Առաջին մարդն ու կինը Ադամ ու Եւա կոչուեցան։

## ԱՐԱՀԱՍՏԻ ԿՈՉՈՒՄԸ

Միջագետի Խառան քաղաքին մէջ կ'ապրէր Աբրահամ։ Հայրը կուապաշտ էր, իսկ ինք՝ աստուածապաշտ։ Աստուած բարեբեր երկիր մը ցոյց տուաւ անոր և օրհնեց անոր աղքը ու սերունդը։ Աբրահամ իր Սառա կնոյ և Ղովտ եղբօրորդիին հետ Քանանացոց երկիրը գնաց, և Սիւքէմ կոչուած հովտին մէջ հաստատուեցաւ։ Աբրահամ և Ղովտ հարուստ էին. բազմաթիւ խաշինք, ոսկի և արծաթ ունէին. բայց որովհետեւ Սիւքէմի երկրը փոքր էր, Աբրահամի և Ղովտի հովիւներուն միջն վէճ ծագեցաւ։ Այդ վէճերու եւ գժտութեանց վերջ տալու համար, Ղովտ բաժնուեցաւ Աբրահամէն և գնաց բնակիլ Յորդանանու պտղաւէտ և արգաւանդ հովիտն որ սիրուն և գեղեցիկ պարտէզի մը երեւոյթը ունէր։

Արրահամ միակ փոփաք մը ունէր. չէր ուզեր անցաւակ մեռնիլ և կ'աղաշէր Աստուծոյ որ իրեն որդի մը շնորհէ. իբր վարձք և միխթարութիւն, իր ծերութեան օբերուն մէջ: Աստուծային հրամանը նպաստաւոր էր Արրահամու. երկինքի աստղերուն չափ պիտի բազմանային իր զաւակներն և երկիս ամէն կողմը պիտի տարածուէին:

Աստուծոյ խոստումը կատարեցաւ. Սառա որդի մը ունեցաւ, որու անունը դրին իսահակ. Արրահամ երբ հայր եղաւ, հարիւր տարեկան ծերունի մը եղած էր: Մանկիկը կը մեծնար հօրը խնամքին տակ, և ծերունի հայրը երախտագիտութեամբ շնորհակալ կըլլար Աստուծոյ՝ այս օրհնեալ պարգեւին համար: Բայց իր ուրախութիւնը երկար չը տեւեց: Աստուծած ուզեց փորձել զայն և իրապէս տեսնել անոր երախտագիտութիւնը: Օր մը հրամայեց անոր. « Արրահամ'մ, ա՛ռ քու սիրելի որդիդ իսահակը, գնա՛ Մօրէայի երկիրը և հոն բլուրի մը վրայ, զոր ցոյց պիտի տամքեղ, ողջակէզ ըրէ՛ ինծի. » Արրահամ հնազանդեցաւ այս հրամանին: Առաւոտուն կանուխ ելաւ, համետեց էշը, փայտ պատրաստեց ողջակէզին համար, միասին առաւ որդին և երկու սպասաւոր, և գնաց այն տեղ զոր Աստուծած ցոյց տուած էր իրեն: Երեք օրէն յետոյ, տեսաւ հեռուէն նշանակուած բլուրը, և սպասաւորներէն բաժնուելով, գնաց հոն ողջակէզը մատուցանելու: Իսահակ շալկեց փայտը, Արրահամ ալ դանակը առաւ, և բլուրն ի վեր կ'ելլէին: Որդին հարցուց. « Հա՛յր, ահա՛ւասիկ փայտն ու կրակը, բայց ոչխա՞րը ուր է »: — Զա՛ւակս, պատասխանեց հայրը, Աստուծած պիտի ցուցնէ մեզ զայն: » Երբ բլուրին վրայ ելան, հոն Արրահամ սեղան շինեց, փայտերը

դիզեց, կրակը վառեց, զաւկին ձեռներն ու ոտները կապեց, և դանակը ձեռքը առաւ իր միակ զաւակը մորթելու համար: Մէկէն ձայն մը եկաւ երկինքէն. « Արրահամ'մ, Արրահամ'մ, այժմ հասկցայ թէ դու կը սիրես Աստուծած. Անոր սիրոյն համար չը խնայեցիր քու միակ սիրելի որդիդ: » Այն ատեն հայրը ուրախու-



թեամբ աշերը վեր բարձրացուց և տեսաւ որ մօտակայ ծառի մը ոստերէն խոյ մը կախուած էր. իսկոյն գնաց վար առաւ զայն և իսահակին տեղ զոհ ըրաւ Աստուծոյ: Այս նուիրական ողջակէզէն վերջ, հրեշտակն ըսաւ Աստուծոյ կողմէ. « Որովհետև այսպէս սրտանց կը սիրես Աստուծած և Անոր համար չը խնայեցիր միակ որդիդ, քու զաւակներդ երկինքի աստղերուն չափ անթիւ և անհամար պիտի ըլլան և քեզմով պիտի օրհնուին աշխարհի ամէն ազգերը: »

## ԻՍԱՀԱԿԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ

Սառա հարիւր քսան եօթ տարեկան մեռաւ Քերբոնի մէջ, Աբրահամ շատ կը սիրէր իր կինն, ուստի անոր մահուան վրայ սկսաւ լալ և սուգ բռնել: Արդէն ինքն ալ խոր ծերութեան հասած ըլլալով, ուզեց ամուսնացընել Խսահակը: Կանչեց իր հաւատարիմ ծառան Եղիազարն և ըսաւ անոր: «Ես չեմ ուզեր Քանանացոց աղջիկներէն կին առնել զաւկիս համար. գնա՛ հայրենի երկիրս Խառան և կին մը ընտրէ՛ զաւակիս համար: Աստուծոյ Հրեշտակը պիտի առաջնորդէ քեզ այդ գործին մէջ:» Եղիազար հնազանդեցաւ իր տիրոջ հրամանին: Անմիջապէս բազմաթիւ ծառաներ, տասն ուղտ և ընծաներ միասին առնելով ճամբայ ելաւ դէպ ի Միջադետքի Խառան քաղաքը որ Աբրահամու հայրենի երկիրն էր. քաղաքէն դուրս ջրհորի մը մօտ կանգ առաւ իր ուղտերուն հետ, որովհետև ամէնքն ալ հանգստութեան պէտք ունէին: Արեւը մարը մանելու վրայ էր: Քաղաքին աղջիկները սովորութիւն ունէին իրիկունները սափորը ձեռքերնին դալու այն ջրհորէն ջուր առնելու, Եղիազար Աստուծոյ աղօթեց. «Աստուած ի՛մ, ըսաւ, յաջողութիւն տո՛ւր ինձ, երբ սա աղջիկները իրենց սափորները լեցնեն և ես ըսեմ անոնցմէ մէկուն՝ «Կարկառէ՛ սափորդ ու ինձ ջուր խմցուր»: ան ալ ուղտերուս և ինձ ջուր տայ, ան ըլլայ Խսահակի կինը:»

Հազիւ այս խօսքը աւարտած էր և ահա դէպ ի իր կողմը կուգար Ուերեկան, Բաթուէլի գուստը: Դեղեցիկ աղջիկ մըն էր, սափորը ուսին վրայ դրած: Հասաւ Ջրհորին քով, լեցուց սափորը, և երբ մեկնելու կը պատ-

րաստուէր, Եղիազար մօտեցաւ անոր քով եւ ըստւ. «Թոյլ տո՛ւր որ ջուր մը խմեմ սափորէդ»: Ուերեկա իսկոյն վար առաւ սափորը իր ուսէն և մոմէ, տէր իմ, ըսելով, ոչ միայն իրեն ջուր տուաւ, այլ նաև ուղտերուն: Եղիազար հասկնալով որ Աստուած լսեր էր իր աղօթքը, իսկոյն ընծայեց անոր զոյգ մը ոսկի օղեր ու երկու ապարանջան եւ հարցուց. «Որո՞ւ աղջիկն ես: — Ես Բաթուէլի գուստըն եմ, պատասխանեց Ուերեկա. Եկէ՛ք մեր բնակարանը և հիւր եղէ՛ք մեզ: Հայրս ուրախութեամբ կ'ընդունի ձեզ:»

Ուերեկա վազեց տուն գնաց և մօրը պատմեց իրեն եղած հանդիպումը: Իսկոյն Լաբան, Ուերեկայի եղրայրը, վազեց եկաւ Եղիազարի քով և հրաւիրեց զայն իրենց բնակարանը: Ուերեկա և մայրը հիւրընկալեցին ճանբորդը, մեծ արեցին զայն և կերակուր պատրաստեցին: Ուղտերուն ալ յատուկ պատսպարան տուին: Եղիազար անմիջապէս յայտնեց անոնց իր ուղեւորութեան նպատակը, և մանրամասն տեղեկութիւն տուաւ իր տիրոջը և անոր որդւոյն՝ Խսահակի վրայ: Բաթուէլ և կինը միաբերան պատասխանեցին. «Այսպէս է եղեր Աստուծոյ կամքը, պարտինք հնազանդիլ: Ուստի կը յանձնենք ձեզ մեր սիրելի գուստը, տարէ՛ք ձեր տիրոջը տունը և Աստուծոյ կամքին համեմատ ամուսին ըլլայ Խսահակի:»

Եղիազար ծունկի վրայ գալով փառք տուաւ Աստուծոյ. յետոյ այլ և այլ ընծաներ նուիրեց Ուերեկայի ծնողացը ու եղրօրը և ուրախալի ինճոյք մը ըրին: Հետեւեալ առաւաօտուն Եղիազար իմացուց Ուերեկայի ծնողքին թէ մեկնելու դիտաւորութիւն ունէր: Անոնք ալ կանչեցին Ուերեկան և գործը յայտնեցին: Աղջիկը

պատասխանեց թէ պատրաստ էր իրենց հրամանին եւ նոյն օրը ճամբայ ելաւ Եղիազարի հետ։

Երբոր Աբրահամի բնավայրին մօտ հասան, Իսահակ իրիկուան դէմ դաշտը ելած էր պարտելու։ Ոերեկա զայն տեսնելով ուզեց իմանալ ո՛վ ըլլալը, և երբ Եղիազար յայտնեց անոր թէ Իսահակն էր, իսկոյն աղջիկը երեսը ծածկեց քողով։ Իսահակ ուրախութեամբ առաւ տուն տարաւ Ոերեկան և ամուսնացաւ անոր հետ։

### ՅԱԿՈԲ ԵՒ ԵՍԱՒ

Իսահակ երկու որդի ունեցաւ. անդրանիկն էր Եսաւ, իսկ երկրորդը՝ Յակոբ։ Եսաւ քաջ տղայ մըն էր, որսորդութեամբ կը զբաղէր, անտառները կ'երթար, որս կը բոնէր և որսի միսը հօրը կը բերէր։ Այս պատճառով Իսահակ աւելի Եսաւը կը սիրէր։ Յակոբ հանդարտ և մեզմ բնաւորութիւն մը ունէր, տանը մէջ կը կենար, մօրը կ'օգնէր առտնին աշխատութեանց մէջ։ այս պատճառով մայրն ալ զայն աւելի կը սիրէր։ Օր մը, Յակոբ տանը մէջ լաւ ոսպնաթան մը եփած էր։ Եսաւ որսորդութենէ տուն վերադարձաւ՝ սաստիկ յոդնած և անօթի։ Եսաւ ուզեց Յակոբին եփած ոսպնաթանին ուտել, բայց ան թող չը տուաւ և առաջարկեց որ անդրանիկութեան իրաւունքը իրեն տայ։ Եսաւ հաւանութիւն տուաւ ոսպնաթանին փոխարէն և իր անդրանիկութեան իրաւունքը ծախեց իր կրտսեր եղբօրը։ Իսահակ ծերացած էր, հարիւր երեսուն տարեկան եղած էր և աչքին տեսութիւնը տկարացած։ Օր մը

կանչեց Եսաւը և ըսաւ. «Զաւա'կս, մեռնելու ժամանակս մօտ է, պէտք է օրհնեմ քեզ. ա՛ռ աղեղդ, դաշտ գնա'», ինձ համար որս մը ըրէ՛ և խորտիկ մը պատրաստէ՛, որպէսզի ուտեմ և օրհնեմ քեզ։» Եսաւ դաշտ գնաց իր հօրը վերջին կամքը կատարելու համար։ Բայց Ոերեկա այր լսելով, ուզեց որ այդ վերջին օրհնութիւնը Յակոբ ստանայ։ Ուստի զայն քովը կանչելով ըսաւ. «Որդեա'կ իմ, լսեցի հօրդ վերջին կամքը. Եղբայրդ դաշտը գնաց որս բռնելու և խորտիկ մը եփելով հօրը օրհնութիւնը ժառանգելու։ Դու գնա' դաշտ, մեր ոչխարներու հօտէն երկու ուլ բե՛ր, որպէսզի հօրդսիրած խորտիկը պատրաստեմ եւ օրհնութիւնը դուն ստանաս։» Յակոբ գնաց ուլերը բերաւ, մայրը խորտիկը պատրաստեց, Եսաւին հանդերձները Յակոբին հագցուց և ուլին մոլթովը ծածկեց անոր լերկ ձեռները, որովհետև Եսաւի մարմինը մազոտ էր և Իսահակ կընար ճանչնալ շօշափելով Յակոբի լերկ մարմինը։

Յակոբ գնաց հօրը քով և Իսահակ անկողնին մէջ նստելով՝ առաւ խորտիկը և շօշափելով որդին, կասկածեցաւ. «Չեռներդ Եսաւի ձեռներն են, ըսաւ անոր, իսկ ձայնդ Յակոբի ձայնը։» Կրկին հարցումներ ուզեց անոր և ըսաւ. «Իմ Եսաւ որդին ես դուն։ — Այս՝ պատասխանեց Յակոբ։ — Ուրեմն մօտ եկուր որ օրհնեմ քեզ», ըսաւ Իսահակ և օրհնեց զայն։ «Եստուած երկինքէն առատ ցող տայ քեզ. արտերդ ցորենով և այգիներդ խազողով լեցուին. ազգերը քեզ ծառայեն և եղբայրներուդ վրայ դուն միայն իշխան ըլլաս։»


Եսաւ որսէն վերադարձաւ, պատրաստած խորտիկը հետը առած հօրը անկողնին քով երթալով ըսաւ. «Հա՛յր, ահաւասիկ պատրաստ է խորտիկը. կե՛ր և օրհ-

նէ՛ զիս : » Ծերունի հայրը զարմացաւ և իսկոյն հասկըցաւ որ Յակոբ խորամանկութեամբ խաբած էր զինքը : Եսաւ թախանձանքով խնդրեց հօրմէն որ զինքն ալ օրհնէ : Իսահակ իր անդրանիկ որդւոյն սիրտը չը կոտորելու համար՝ օրհնեց զայն . « Բնակած երկիրդ պտղաւէտ ըլլայ , միայն թէ եզրորդ իշխանութեան տակ պիտի մնաս» , ըսաւ : Եսաւ սկսաւ ատել իր եղբայրը եւ միտքը դրաւ սպաննել զայն : Մայրը զգալով այս , կանչեց Յակոբը և յորդորեց որ հեռաւոր երկիր մը երթայ եզրորդ վրէժինդրութենէն ազատ մնալու համար : Յակոբ հնազանդելով Միջագետքի երկիրը գնաց : Ճանապարհին երբ արեւը մարը մտնելու վրայ էր , քար մը առաւ և գլխուն տակը գնելով՝ հանգստացաւ : Քունին մէջ երազ մը տեսաւ : Երկայն սանդուղ մը , որու մէկ ծայրը երկի վրայ էր և միւս ծայրը երկինք կը հասնէր . սանդուղին սատիճաններուն վրայէն հրեշտակներ կ'ելլէին կ'իջնէին և Աստուած սանդուղին գլուխը կեցած կ'ըսէր . « Ես եմ Աստուած Արքահամին և Իսահակի . այդ երկիրդ ուր կը գտնուիս , քեզ և ժառանդորդներուդ կը չնորհեմ : Քու զաւակներդ ծովու աւազին նման պիտի շատնան եւ երկրի ամէն ազդերը քեզմով պիտի օրհնուին : » Յակոբ արթնալով փառք տուաւ Աստուածոյ և քարին տեղը կոթող մը տնկելով՝ « Երկնից դուռը » անուանեց զայն :

### Յ Ո Վ Ս Է Փ Գ Ե Ղ Ե Ց Ւ Կ

Յակոբ տամներկու որդի ունեցաւ , որոնց մէջ ամենէն գեղեցիկն էր Յովաէփ : Տասնը եօթը տարեկան էր

երբ իր եղբայրներուն հետ ոչխար կ'արածէր : Յակոբ ամենէն աւելի սիրելով զայն՝ ծաղկեայ պատմուճան մը շինել տուաւ անոր : Եղբայրները այս տեսնելով՝ նախանձեցան և սկսան ատելութեամբ վարուիլ անոր հետ : Յովսէփ անմեղ էր , միշտ քաղցրութեամբ և սիրով կը վարուէր իր եղբայրներուն հետ : Գիշեր մը երազ տեսաւ և առաւատուն պատմեց իր եղբայրներուն որոնք ալ աւելի գրգռուեցան անոր դէմ : Պատմեց թէ արտի մը մէջ ցորենի որաներ կը կապէին : Յանկարծ իր կապած որան ելաւ կանգնեցաւ և եղբայրներուն կապած որաները խոնարհեցան անոր առջեւ : Երկրորդ երազ մըն ալ տեսաւ , որ աւելի զայրացուց եղբայրները : « Արեւը , Լուսինը և տասնըմէկ աստղեր երկրպագութիւն կ'ընէին իրեն :



Օր մը Յակոբի որդիքը խմբովին դուրս գացած էին իրենց հօր ոչխարները արած ելու : Հայրելնին տեսնելով որ կուշանային , Յովսէփին անոնց ետեւէն զրկեց : Եղբայրները Յովսէփի գալը հեռուէն տեսնելով , իսկոյն խորհուրդ ըրին սպաննել զայն և մարմինը փոսի մը մէջ

Նետել։ Այս սոսկալի խորհուրդին դէմ կեցաւ անդրանիկ եղբայրնին Ռուբէն։ Ասոր առաջարկութեամբ բըռնեցին Յովսէփը, մերկացուցին և անջուր գուփի մը մէջ նետեցին։ Յետոյ այծ մը մորթելով՝ անոր ծաղկեայ պատմուճանը արիւնով թաթաւեցին։ Նոյն միջոցին քանի մը Խսմայելացի վաճառականներ պատահեցան, որոնք Եգիպտոս կ'երթային։ Յովսէփի եղբայրներէն մին՝ Յուդա՝ առաջարկեց որ Խսմայելացիներուն վաճառեն Յովսէփը։ Եղբայրները հաւանեցան այս խորհուրդին և վաճառեցին Յովսէփը։ Իրիկուան տուն վերադառնալով Յովսէփի արիւնաթաթաւ պատմուճանը տիսրութեամբ իրենց հօրը ցոյց տուին ըսելով։ «Վայրի գաղաններ գեշատեր կերեր էին զայն, ահաւասիկ իր արիւնոտ պատմուճանը զոր մեր ճանբուն վրայ գտանք։» Յակոր դառնապէս լացաւ իր սիրելի զաւկին աղետալի կորըստեան վրայ։

Խսմայելացի վաճառականները Եգիպտոս տարին Յովսէփը և հոն վաճառեցին Պետարբէս անուն հարուստ մարդու մը, որ Փարաւոն թագաւորին դահճապետն էր։ Յովսէփի հաւատարմութեամբ ծառայել սկսաւ իր տիրոջ և սիրելի եղաւ անոր։ բայց ժամանակէ մը ետքը զըրպարտութեան մը հանդիպելով բանտ նետուեցաւ։ Բայց Աստուած կը հսկէր անոր վրայ։ Նատ չ'անցաւ Փարաւոնի տակառապետը ու մատակարարը նոյն բանտը դրուեցան։ Գիշերը երկուքն ալ մէկ մէկ երազ տեսնելով, առաւարտուն շատ տիսուր էին և մէկը կը փնտուէին որ մեկնէր։ Յովսէփի խմանալով այս՝ խոստացաւ մեկնել անոնց տեսած երազը։ Տակառապետը տեսած էր որթ մը և վրան երեք ողկոյզ հասուն խաղողով, զորս Փարաւոնի գաւաթին մէջ ճմլելով իրեն կը մատուցանէր։

Մատակարարն ալ տեսած էր որ իր գլխուն վրայ երեք սկաւառակ բարձած կը տանէր, որոնց մէջ թագաւորին ամենէն սիրուն կերակուրները դրուած էին և թըռչունները կուգային կուտէին այն կերակուրները։ Յովսէփի երկուքն ալ լսելէ վերջը, ըսաւ տակառապետին։ «Ուրախ եղի՞ր, երեք օրէն թագաւորին ներումին արժանանալով պիտի վերահաստատուիս պաշտօնիդ մէջ։» Յետոյ մատակարարին դառնալով ըսաւ։ «Դուն ալ երեք օրէն պիտի կախուիս և մարմինդ կեր պիտի ըլլայ թուշուններուն։» Երազները ճշդիւ իրականացան, երեք օր ետքը տակառապետը հաստատուեցաւ իր պաշտօնին մէջ, մատակարարն ալ կախուեցաւ։ Բայց տակառապետը իր առջի վիճակը գտնելէն ետքը մոռցաւ Յովսէփը, զոր բանտէն ազատել խոստացած էր եթէ իր երազին մեկնութիւնը ճիշդ ելլէր։ Երկու տարի վերջը նոյն ինքը Փարաւոն թագաւորն երկու երազ տեսաւ։ առաջինին մէջ կը տեսնէր եօթն գէր կովեր զորս կուլ կուտային ուրիշ եօթն նիհար կովեր։ Երկորդ երազին մէջ կը տեսնէր եօթն գեղեցիկ հասկեր, զորս կուլ կուտային եօթը վտիտ հասկեր։ Ի՞նչ կը նշանակէին այս երկու նմանօրինակ երազները։ Փարաւոն մեծ մտատանջութեան մէջ ինկաւ։ Եգիպտոսի բոլոր մոգերը և իմաստունները կանչեց, բայց ոչ ոք կըցաւ գոհացուցիչ պատասխան մը տալ։ Այն ատեն տակառապետը յիշելով Յովսէփը՝ խօսեցաւ թագաւորին, և Յովսէփի բանտէն հանու ելով՝ թագաւորին առջև տարուեցաւ։ Յովսէփի Փարաւոնի երազը լսելէ ետքը՝ պատասխանեց։ «Տէ՛ր արքայ, երկու երազներն ալ միենոյն նշանակութիւնը ունին։ Եգիպտոսի մէջ եօթը տարի առատութիւն պիտի ըլլայ և եօթը տարի սով։ Պէտք է հան-

Ճարեղ պաշտօնեայ մը գտնել, որ ընդարձակ համբարանոցներ շինելով առատութեան եօթը տարիներուն աւելութ ցորենները անոնց մէջ շտեմարանէ եւ եօթնամեայ սովին ժամանակ մատակարարէ։ Փարաւոն շատ հաւնելով Յովսէփի այս իմաստուն խորհուրդին, առաջին նախարար և Եգիպտոսի ընդհանուր կառավարիչ անուանեց զայն։ Յովսէփ երեսուն տարեկան էր այս բարձր պաշտօնին հասած ժամանակ։

---

### ՅՈՎՍԷՓ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

Առատութեան եօթը տարիներէն վերջ, եօթը տարի սով եղաւ Եգիպտոսի շրջակայ Երկիրներուն մէջ։ Քանանացոց Երկիրն ալ սովէն սաստիկ նեղուելով, Յակոր ալ իր որդիները Եգիպտոս ղրկեց ցորեն գնելու, և միայն իր կրտսերագոյն որդին՝ Բենիամինը, զոր շատ կը սիրէր, իր քով պահեց։ Յովսէփի Եղբայրները Եգիպտոս գալով իրեն ներկայացան և առանց զայն ճանչելու Երկրպագութիւն ըրին անոր։ Յովսէփ իսկոյն ճանչցաւ իր Եղբայրները և հարցաքննելով զանոնք, ամէն բանի տեղեկացաւ։ Քանանացոց Երկրէն կուգային, իրենց հայրը հոն էր, տամներկու Եղբայրներ էին, մին իրենց հօր քով թողած էին և միւսը վայրի գաղաններու կեր եղած էր։ «Դուք լրտես էք», ըստ Յովսէփ և բանտ դնել տուաւ զանոնք։ Հետեւեալ օրը բանտէն հանելով, մին իբր աւանդ պահեց իր քով և միւսները արձակեց, հրամայելով որ Երբ Երկրորդ անգամ Եգիպտոս գան, կրտսեր Եղբայրնին ալ միասին բերեն։

Ինը Եղբայրները վերադարձան Քանանացոց Երկիրը և Եղելութիւնը պատմեցին իրենց հօրը որ մեծապէս տրտմեցաւ իր Շմաւոն զաւկին Եգիպտոսի մէջ վարդրուելուն վրայ, բայց միւս կողմէ նոյնչափ զարմանքով տեսաւ որ ցորենին ստակները պարկերուն մէջ դրուած էին։ Երբ Երկրորդ անգամ՝ Եգիպտոս Երթալ հարկ եղաւ, Եղբայրները իրենց հետ ուղեցին տանել Բենիամինը, ինչպէս որ խօսք տուած էին Եգիպտոսի ընդհանուր կառավարիչին։ Յակոր լալ սկսաւ և չէր ուղեր բաժնուիլ իր սիրելի Բենիամինէն, բայց վերջապէս հարկադրեցաւ յանձնել։ Այս կերպով Յակորի որդիները Երկրորդ անգամ Եգիպտոս գացին, Երբ Յովսէփ զանոնք տեսաւ, հրամայեց հաղարապետին որ զանոնք իր տունը տանի եւ սեղան պատրաստէ անոնց։ Եղբայրները ապշած կը մնային տեսնելով իրենց եղած մեծ պատիւները օտար Երկրի մը մէջ օտար անձի մը կողմէ, և չէին կրնար մեկնութիւն մը տալ։ Ճաշէն ետքը Յովսէփ հրամայեց հաղարապետին որ իր Եղբայրներու պարկերը ցորենով լեցնել տայ և իւրաքանչիւրին դրամը ամէն մէկուն պարկին մէջ գնէ, և իր ոսկի սկահն ալ իր կրտսեր Եղբայր պարկին մէջ։ Հրամանը կատարուեցաւ։ Երբ հետեւեալ օրը ճանբայ ելան, հաղարապետը անոնց ետեւէն հասնելով հրամայեց որ կանգ առնեն։ «Ի՞նչ ապահովի մարդիկ էք Եղեց։ այդպէ՞ս կը պատասխանէք ձեզ Եղած հիւրընկալութեան եւ տիրոջս սկահը գողնալու կը յանդգնիք։» Յովսէփի Եղբայրները բացարձակապէս ժխտելով՝ ուղեցին ապացուցանել իրենց անմեղութիւնը։ Պարկերը բացին, ինամով քըննեցին և սարսափահար Եղան Երբոր Բենիամինի պարկին մէջէն ելաւ Յովսէփի սկահը։

Ամօթահար, ապշած և յուզուած, Յովսէփի տունը վերադարձան։ Յովսէփ հրամայեց իր եղբայրներուն որ մեկնին և միայն Բենիամինը իր քով մնայ։ Այն ժամանակ Յուդա ջանաց հասկցնել իրենց հօր սրտատանջ վիճակը, պատմեց թէ ո՞րչափ գժուարութեամբ բերած էին իրենց Բենիամին եղբայրը, և թէ հիմա ի՞նչպէս պիտի կրնային ներկայանալ իրենց ծերունի հօր և ի՞նչ պատասխան պիտի տային անոր։ Յովսէփ սաստկապէս զգածուելով չը կրցաւ ալ զսպել իր սրտին յուզմունքը և գոչեց. «Ես Յովսէփին եմ, ձեր եղբայրը, զոր գուք Խսմայելացիներուն վաճառեցիք. մի՛ վախնաք։ Աստուած զիս այս վիճակին հասցուց, որպէս զի սովէն ազատիք։» Ապա գորովանքով համբուրելով զանոնք, խնդրեց որ անյտպաղ վերադառնան եւ իրենց հայրը Եգիպտոս բերեն։

Յակոբի որդիները ուրախութեամբ ճամբայ ելլելով՝ Քանանացոց երկիրը վերադարձան և ամէն ինչ յայտնեցին իրենց հօրը։ Յակոբ անպատում ուրախութեամբ լեցուելով՝ փառք տուաւ Աստուծոյ եւ իսկոյն չուեց Եգիպտոս իր բովանդակ գերդաստանին հետ։

## Ս Ո Վ Ս Է Ս

Յովսէփի մեռնելէն ետքը, Խսրայելացիները այնչափ բազմացան Եգիպտոսի մէջ, որ Փարաւոնները վախնալով անոնց արագ աճումէն՝ սկսան չարաչար նեղել զանոնք։ Դժնդակ աշխատութիւններ կուտային անոնց և անտանելի կերպով կը գառնացնէին անոնց կեանքը։

Խսրայելացիները բոլորովին կորուսած էին իրենց նախկին հանդիսաւը. իբրեւ պարզ գործաւոր՝ կ'աշխատէին Փարաւոններուն համար պալատներ եւ ուրիշ շնչքեր շինելու, և բնաւ չէին գանգատեր։ Փարաւոն որոշեց վերջապէս ի սպառ ջնջել Խսրայելացոց ցեղը. ուստի հրաման ըրաւ որ Եփրայեցոց բոլոր նորածին արու զաւակները ջուրը նետեն, իսկ աղջիկներուն չի գպչին։



Այս ընդհանուր կոտորածին ժամանակ Ղեւիի ցեղէն Եբրայեցի մը, Ղեւի անունով, աղջկան մը հետամուսնանալով՝ արու զաւակ մը ունեցաւ. Ընդհանուր կոտորածէն զայն զերծ պահելու համար կնիւնէ սնապուկ մը շինեց, տղան մէջը դրաւ, ամէն կողմը կուպրով ծեփեց և տարաւ գետը նետեց։ Մանկան քոյրն ալ հեռուէն դիտել սկսաւ տեանելու համար թէ ի՞նչ պիտի ըլլայ։ Նոյն միջոցին Փարաւոնին աղջիկը գետեզըն

Եկած էր իր աղախիններուն հետ լուացուելու համար։ Յանկարծ կը տեսնէ գետին ալիքներուն վրայ ծփացող սնտուկը, կը հրամայէ աղախիններէն մէկուն որ երթայ նայի թէ ինչ էր ան։ Կը հանուի սնտուկը գետին մէջէն և կը բերուի թագաւորին աղջկան առջեւ։ Կը բանայ և կը տեսնէ մանուկ մը, կը հասկնայ թէ իսրայելացի է, և գթալով կը հրամայէ որ չը վնասեն։ Այն ատեն մանուկին քոյրը պահուըտած տեղէն դուրս ելլելով՝ կը մօտենայ թագաւորին աղջկան և կը հարցնէ։ «Կուզէ՞ք որ երրայեցի մայր մը կանչեմ որպէս զի մնուցանէ մանկիկը իր կաթով։» Փարաւոնին աղջիկը հաւանութիւն կուտայ, և նոյն ժամուն մայրը կը ներկայանայ իրը ստնտու, կ'առնէ տղան և իր տան մէջ կը սնուցանէ, անունը Մովսէս դնելով, որ ցրէն հանուածըսել է։

Մովսէս երբ չափահաս եղաւ, Եգիպտացոց ամէն գիտութիւնները ուսաւ և իմաստուն մարդ մը եղաւ։ Տեսաւ իր իսրայելացի եղբայրներուն կրած տառապանքը և միտքը դրաւ դարման մը գտնել։ Եգիպտոսի մէջ կը շրջէր և բնաւ առիթ չէր փախցնէր իր աղքակիցները պաշտպանելու համար։ Օրին մէկը կը տեսնէ Եգիպտացի մը որ իսրայելացի մը կը կոփէր։ Շուրջը կը նայի և երբ կը տեսնէ որ մարդ չը կայ՝ կը զարնէ կը սպաննէ Եգիպտացին և կը թաղէ աւազի մէջ։ Փարաւոն իմացաւ այս գէպքը և ուզեց սպաննել Մովսէսը։ Իսկ ան Մադիամու երկիրը փախաւ, ամուսնացաւ Յոթոր անուն քուրմի մը աղջկան հետ, և իր աներոջ խաշինքը կ'արածէր։ Օր մը անապատին մէջ, Քորեր լերան մօտերն երթալով՝ մորենի մը տեսաւ որ կը վառէր, բայց չէր այրեր։ Մովսէս աւելի մօտ գնաց տեսնելու համար


թէ ինչո՞ւ չէր այրեր մօրենին։ Իսկոյն ձայն մը լսեց որ «Մովսէս, Մովսէս» կը գոչէր։ Մովսէս ալ հարցուց։ «Ի՞նչ է, Տէ՛ր»։ Ձայնը պատասխանեց. «Հանէ՛ կօշիկներդ, վասն զի կեցած տեղդ սուրբ է։ Ես եմ Աստուած Աբրահամի, Իսահակի և Յակոբի։» Մովսէս ծածկեց երեսը իր ձեռքերով. Ձայնը շարունակեց. «Տեսայ Ժողովրդեանս քաշած տառապանքը. լսեցի անոր աղաղակը և կ'ուզեմ ազատել զայն այդ գառն վիճակէն։ Գնա՛ Փարաւոնի մօտ և ազատէ՛ Ժողովուրդս։»

Մովսէս ներկայացաւ Փարաւոնի և յայտնեց անոր Աստուածոյ հրամանը։ Փարաւոն մերժեց Մովսէսի այս խնդիրը. «Ես այդ Աստուածը չեմ ճանչնար», գոչեց և անմիջապէս հրաման հանեց բովանդակ Եգիպտոսի մէջ որ ալ աւելի չարչարեն խեղճ իսրայելացիները։ Աստուած բարկացաւ Փարաւոնի դէմ և զայն պատժելու համար տեսակ տեսակ պատուհամներ զրկեց Եգիպտոսի վրայ. Կարկուտ, մարախ, գորտ, մուկ և այլն։ Փարաւոն պատուհաս մը եկած ժամանակ կը խոստանար ազատ թողուլ իսրայելացիները, բայց ամէն անգամ որ պատուհասն անցնէր, կը մոռնար իր խոստումը։ Վերջին պատուհաս մըն ալ եկաւ, աւելի աղետալի։ մէկ գիշերուան մէջ Եգիպտացոց բոլոր անդրանիկ զաւակները մեռան, Փարաւոնի անդրանիկ որդիէն մինչեւ յետին աղախինին որդին։ Փարաւոն այս աղետներուն վերջ տալու համար հրամայեց Մովսէսի որ իսրայելացիները առնէ տանի Եգիպտոսէն։ Իսրայելացիները 600,000 հոգի, առաջնորդութեամբ Մովսէսի, մեկնեցան Եգիպտոսէ, 430 տարի հոն մնալէ ետքը։ Իրենց հետ տարին նաև Յովսէփի սոկորները։ Առաւոտները ամպէ սիւն մը կ'առաջնորդէր անոնց, գիշերն ալ հրեղէն սիւն մը։

## ԻՄՐԱՅԵԼԱՑԻՆԵՐԸ ԱՆԱՊԱՏԻՆ ՄԷԶ

Երբ Փարաւոն իմացաւ Իսրայելացոց Եգիպտոսէն մեկնիւը, զղչաց և անմիջապէս հրամայեց իր զօրքերուն որ անոնց ետեւէն երթան և ետ դարձունեն։ Եգիպտացիները վեց հարիւր պատերազմական կառքերով և ձիերով ճանբայ ելան Իսրայելացոց ետեւէն եւ հասան անոնց կարմիր Ծովուն մօտ։ Իսրայելացիները սարսափահաճար եղան երբ տեսան Եգիպտական զօրքը։ Բնականաբար կը կարծէին թէ նորէն Եգիպտոս տարուելով պիտի չարչարուէին։ Մովսէս քաջալերեց զանոնք։ Աստուած հրամայեց Մովսէսի որ Իսրայելացիները ճամբայ հանէ։ « Բարձրացո՛ւ գաւազանդ և ձեռքդ ծովուն վրայ երկնցո՛ւ։ » Երբ Մովսէս կատարեց աստուածային հրամանը, ծովուն ջուրը պատռելով՝ երկու կողմ քաշուեցաւ, և Իսրայելացիները ծովուն մէջէն քալելով անվտանգ միւս եղերքը անցան։ Երբ Եգիպտական զօրքն ալ Իսրայելացոց ետեւէն հասնելու համար նոյն ճանապարհին մէջ մտաւ, Աստուած հրամայեց Մովսէսի որ ձեռքը ծովուն վրայ երկնցունէ։ Մովսէս կատարեց աստուածային հրամանը. իսկոյն ծովուն ջուրերը վերստին միանալով ծածկեցին Եգիպտացիները, որոնք չարչար խեղդուեցան, Իսրայելացիները այս տեսնելով՝ փառք տուին Աստուծոյ և « Օրհնեացո՛ւք զջէր, զի փառօք է փառաւորեալ » երդը երգեցին։

Իսրայելացիները կարմիր Ծովին անցնելէ ետքը մտան անապատին մէջ, ուր բնականաբար նեղութիւն կրելով՝ սկսան տրտնջել Մովսէսի դէմ և զայն պատճառ համարիլ. Ուտելու հաց չէր մնացած և անօթի



պիտի մեռնէին եթէ Աստուած օդնութեան չը հասնէր։ Երեկոյին լորամարգիներ թափեցան բանակին վրայ։ Առաւօտեան դէմ ալ բանակը մէգով պատած էր. մէ-

գին փարատելէն ետքը տեսնուեցաւ որ երկրին երեսը ալիւրի նման նիւթով մը ծածկուած էր։ Մովսէս հրամայեց որ վեց օր շարունակ հաւաքեն զայն, բայց վեցերորդ օրը կրկնապատիկ աւելի, որովհետեւ յաջորդ օրը շաբաթ էր, այսինքն «Սուրբ Օր»։ Սոյն ալիւրը, զոր Խորայելացիները մանամայ անուանեցին, ամէն օր կը տեղար անապատին մէջ և անոնք անով կը կերակրուէին։

Ուրիշ անգամ մըն ալ Խորայելացիները ջուր չը գըտնելով, վերստին սկսան տրտնջել Մովսէսի դէմ և ստիպողաբար «ջո՛ւր, ջո՛ւր» պահանջել։ Մովսէս ճարահատած՝ Աստուծոյ դիմեց։ Այն ատեն Աստուած հրամայեց անոր որ գաւազան մը առնէ, իր ցոյց տուած ապառաժին զարնէ։ Մովսէս կատարեց աստուած ային հրամանը և իսկոյն ապառաժէն անուշ ու պաղ ջուր մը բղխելով յագեցուց ժողովրդին ծարաւը։

Խորայելացիները Եգիպտոսէ մէկնելէն երկու ամիս ետքը Սինայի անապատը հասան և այն լերան առջեւ բանակ դրին։ Աստուած հրամայեց Մովսէսի որ երթայ պատուէր տայ Խորայելացի ժողովրդեան, որպէս զի երրորդ օրը Սինա լերան շուրջը հաւաքուելու պատրաստուի։ Մովսէս կատարեց աստուած ային հրամանը, երրորդ օրը՝ լեռը մոխրագոյն ամպերով պատած էր, որոնց մէջէն որոտումի ձայներ կը լսուէին և կայծակներ կը փայլատակէին։ միանգամայն փողը ուժգին կը հնչէր։ Այն ատեն ամպերուն ու ծուխերուն մէջէն Աստուծոյ ահեղ ձայնը լսուեցաւ, որ կ'ըսէր Խորայելացի ժողովրդին։ 1. Ես եմ քու Տէր Աստուածդ, որ ազատեց քեզ Եգիպտոսի մէջ կրած չարչարանքէդ, ինձմէ զատ ուրիշ Աստուած չի պիտի ունենաս երբէք։ 2.

Կուռքը չի պիտի շինես պաշտելու համար, այլ միայն ինձ պիտի երկրպագես և զիս միայն պիտի պաշտես։ 3. Տէր Աստուծոյդ անունը պարապ տեղը բերանդ մի՛ առներ։ 4. Շաբաթ օրը սուրբ պահէ՛, այսինքն վեց օր աշխատէ՛ եւ եօթներորդ օրը հանգստացի՛ր, վասն զի այն օրը Աստուծոյ նուիրուած է։ 5. Հայրդ ու մայրդ պատուէ՛, որպէս զի երկար ապրիս։ 6. Մի՛ սպաններ։ 7. Մի՛ չնար։ 8. Մի՛ գողնար։ 9. Ընկերիդ վրայ սուտ վկայութիւն մի՛ ըներ։ 10. Ընկերոջդ ունեցածին աչք մի՛ տնկեր։

Ժողովուրդը սարսափահար ականջ կը դնէր աստուածային ձայնին։ Մովսէս քաջալերեց զանոնք և Սինա լեռը ելաւ ժողովրդեան կողմէն Աստուծոյ հետ խօսելու համար և քառասուն օր հոն մթաց։ Աստուած երկու քարէ տախտակ տուաւ անոր, որոնց վրայ իր ձեռքով գրած էր տասնաբանեայ պատուէրները։

Մովսէս գեռ չէր իջած լեռնէն, ժողովուրդը անոր կը սպասէր անհամբեր։ տեսնելով որ կ'ուշանար, Ահարոնի դիմեց և ստիպողաբար պահանջեց որ իրենց աստուածներ շինէ, որպէս զի առաջնորդ ըլլան իրենց, որովհետեւ Մովսէս, որ զիրենք Եգիպտոսէն հանեց, անյայտ եղած էր։


Ահարոն չը կրնալով զանոնք համոզել, հրամայեց որ իրենց կիներուն և աղջիկներուն ոսկի օղերը իրեն բերեն։ անոնք ալ բերին։ Ահարոն զանոնք հալեցնելով ոսկիէ հորթ մը շինեց և անոնց առջեւ գրաւ, որպէս զի երկրպագութիւն ընեն անոր, Եգիպտացոց օրինակին համեմատ, որոնք Ապիս անունով կով մը կը պաշտէին։ Խորայելացիները ոսկիէ հորթին երկրպագելէ ետքը, սկսան ուրախութեամբ պարել անոր շուրջը եւ

կեր ու խումընել։ Նոյն միջոցին Մովսէս լեռնէն իշաւ Տասնաբանեայ Օրէնքներու տախտակները ձեռքը։ Երբ տեսաւ Իսրայելացոց գատապարտելի գործը, սաստիկ զայրացաւ և տախտակները գետին նետելով խորտակեց։ յետոյ ոսկիէ հորթը առաւ, կրակը նետեց, այրեց և մոխիրը ջուրի հետ խառնելով խմցուց անոնց։ Ապա իր քով կանչեց այն ամէն Իսրայելացիները որոնք Աստուծոյ հաւատարիմ մնացած էին, հրամայեց սր սուրերնին հանելով սպաննեն անկարգութեան հեղինակները։ Անոնք ալ կատարեցին Մովսէսի հրամանը, եւ այնպէս 23,000 հոգի մահուամբ պատժուեցան։

Մովսէս հասկցուց ժողովրդեան, գործուած յանցանքին ծանրութիւնը և Աստուծմէ ներում խնդրելու համար գարձեալ Աինա լեռը ելաւ։ Աստուած ջնջեց յանցաւորներու անունները և ուզեց այն երկու քարէ տախտակները զորս Մովսէս խորտակած էր իր բարկութեան միջոցին, և Տասնաբանեայ Պատուիրանքը վերըստին գրուեցաւ նոր տախտակներու վրայ զորս Մովսէս կրկին անգամ՝ Իսրայէլի որդիներուն բերաւ։

### Ս Ա Մ Փ Ս Ո Ն

Իսրայելացիները գարձեալ անկարգութեան մէջ իյնալով՝ բարկացուցին Աստուած որ զանոնք Փղշտացոց ձեռքը մատնեց քառասուն տարի շարունակ։ Գերութիւնը զգաստացուց զանոնք։ Վերստին Աստուծոյ գառնալով և իրենց մեղքերուն վրայ ապաշխարելով, Աստուած ալ ողորմեցաւ անոնց և Սամփսոն անունով



զօրեղ մարդ մը ազատարար զրկեց։ Սամփսոն այնշափ մեծ ուժ ունէր, որ օր մը գաշտին մէջ առիւծ մը իր վրայ յարձակած ըլլալով, կզակէն բռնեց զայն և եր-

կուքի ճեղքեց։ Քանի մը շաբաթ ետքը նոյն տեղէն անցնելով՝ կը տեսնէ որ առիւծին բերնին մէջ մեղուներ հաւաքուած էին և մեղր կը շինէին։

Սամփսոն Փղտացիներէն աղջիկ մը առաւ կնութեան։ Հարսնիքի հանդիսին օրը՝ Սամփսոն հետևեալ հանելուկը առաջարկեց հրաւիրուած երիտասարդներուն։ «—Ուտողէն կերակուր ելաւ, և հզօրէն անուշ։ Եթէ մինչեւ երեք օր կարենաք լուծել այս հանելուկս, երեսուն ձեռք հագուստ կուտամ ձեղ, իսկ եթէ չը կրնաք լուծել, դուք կուտաք ինձ։»

Երիտասարդները չը կրնալով լուծել, աղաչեցին Սամփսոնի կնոշն որ ջանայ իր ամուսնոյն բերնէն առնել մեկնութիւնը և իրենց հաղորդել։ Սամփսոն չը կրնալով դիմանալ իր կնոջ թախանձանքին ու թափած արտասուքներուն, յայտնեց անոր հանելուկին իմաստը։ Երիտասարդներն ալ կնոջմէն իմանալով, գացին ըսին Սամփսոնի։ «Ի՞նչ կայ մեղրէն աւելի անուշ և առիւծէն աւելի հզօր։» Սամփսոն հասկցաւ իր կնոջ խարէութիւնը։ Զայրանալով ելաւ իսկոյն Փղտացոց մէկ ուրիշ քաղաքը գնաց և երեսուն Փղտացի սպաննելով՝ անոնց հանդերձներն առաւ և հանելուկը լուծողներուն տուաւ, ինչպէս որ խոստացած էր։

Փղտացիները վրէժ առնելու համար, երեք հազար հոգի թուգայի երկիրը արշաւեցին և հոն բանակ դնելով, ստիպեցին Խորայելացիները որ իրենց յանձնեն Սամփսոնը։ Խորայելացիները վախնալով՝ խոստացան կատարել անոնց պահանջումը։ Սամփսոն թոյլ տուաւ որ Խորայելացիները կապեն զինքը և թշնամիներուն բանակը տանին յանձնեն։ Սամփսոն թշնամիներուն բանակը մտնելուն պէս, զինքը կապող հաստ պարան-

ները բարակ դերձանի պէս դիւրութեամբ խզեց եւ սատկած իշու ծնօտ մը գտնելով գետնէն, յարձակեցաւ Փղտացոց վրայ և 1000 հոգի սպաննեց այն ծնօտով։ Փղտացիները ալ աւելի զայրանալով, առիթ կը վնատուէն վրէժ առնելու։ Օր մը իմանալով որ Սամփսոն Գազաքաքը գացած էր, գիշերը քաղքին դուռները փակեցին որպէս զի չի կարենար դուրս ելլել, և ամէն պատրաստութիւն ըրին որպէս զի առաւօտուն կանուխ անոր գտնուած տունը կոխելով խեղդամահ ընէին զայն։ Սամփսոն իմանալով կէս գիշերին ելաւ, քաղքին դուռները իրենց ծխնիներով ու փականքներով կորզեց հանեց և շալկելով տարաւ մօտակայ լեռան գագաթին վրայ դրաւ։

Սամփսոն իր կինը վոնտած ըլլալով զինքը խաբելուն համար, Դալիլա անուն ուրիշ Փղտացի աղջկան մը հետ ամուսնացաւ։ Փղտացոց իշխանները, այս հաւոր թշնամիին ձեռքէն մէկէն աղատելու համար, դիմեցին այս նոր կնոջը և մեծագումար դրամ խոստանալով՝ համոզեցին, որպէս զի քնացած միջոցին իրենց ձեռքը մատնէ։ Դալիլա կատարեց անոնց փափաքը։ Սամփսոնի խոր քունին ժամանակ Փղտացիները կանչեց, որոնք բռնեցին զայն, երկաթէ շղթաներով կապեցին և աչքերը հանելով Գազաքաքը տարին բանտարկեցին։

Մեծ եղաւ Փղտացոց ուրախութիւնը իրենց այս յաջողութեան վրայ։ Իրենց ահաւոր թշնամին պարտուած էր, ալ չէր կրնար վնաս մը տալ իրենց։ Օր մը իրենց Դագոն շաստուածին ի պատիւ տօն կատարելով, ուղեցին նոյն առիթով իրենց անզօր թշնամիին Սամփսոնի վրայ նայելով զուարծանալ ուստի բանտէն հանել

տուին զայն և իրենց առջև կանգնեցուցին երկու սիւներու մէջտեղ, որոնց վրայ հաստատուած էր կուատան շէնքը։ Սամփոն բռնեց այդ երկու սիւները եւ Աստուծոյ անունը կարդալով՝ այնչափ ուժգին ցնցեց, որ շէնքը փլչելով թէ՛ ինքը եւ թէ՛ մէջը գտնուող 3000 է աւելի Փղշտացիներ փլատակներուն տակ թաղուեցան։

## ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

ԵՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՍ. ՌԵՄՈՒ ԳԻՒՏԸ

Սուրբ Մեսրոպ, մականուանեալն Մաշտոց, Տարօն Գաւառի Հացեկաց գիւղէն էր և աշակերտ՝ Մեծն ներսէսի։ Անդադար Սուրբ Դիրքը կարդալու կը պարապէր. այս կերպով այնքան վարժեցաւ ու վառեցաւ հոգեւորապէս, որ հրաժարեցաւ աշխարհէ և աբեղայ ձեռնադրուելով վանք մոաւ, յետոյ պահ մըն ալ ճրդնաւորական կեանք վարեց։ Այնուհետև Մեսրոպ, որ մեծ տաղանդի տէր էր, միանձնական կեանքը անձուկ գտնելով՝ սկսաւ ազգային լուսաւորութեան գործոյն. շատ աշակերտներ ժողվեց, կրթեց զանոնք, և հետք առած՝ զանազան տեղուանք քարոզութիւններ կ'ընէր. այսպէս յնչեց նոյն տեղերու աւելորդապաշտութիւնները եւ աղանդներու մնացորդները։ Այս քարոզութեանց ժամանակ մեծ նեղութիւն կը կրէր, որովհետև հարկադրուած էր Աստուածաշունչ գիրքը կարդալ և հայերէն թարգմանել։ Այս դժուա-

րութիւնները իրեն մեծապէս զգալի ըրին հայկական տառերու պէտքը, զոր գտնելու համար շատ փորձեր ըրաւ՝ բայց անօգուտ։ Ապա իմանալով Ս. Սահակ Հայրապետին բարի համբաւը, անոր մօտ եկաւ և իր խորհուրդը յայտնելով՝ տեսաւ որ ան ալ միենոյն մտածութեամբ գրաւուած էր։ Ս. Սահակ ժողով գումարեց, և հոն յայտնուեցաւ թէ, Միջագետի մէջ Հարէլ անուն երէց մը ըսեր էր թէ Դանիէլ Եպիսկոպոսին քով Հայոց նշանագիրեր կան։ Այս նշանագրերը բերել տուին, և թէպէտ երկու տարի շարունակ փորձեր ըրին անոնցմով ուսուցանելու, բայց ի զուր աշխատեցան, որովհետև ձայնաւոր տառեր պակաս էին։ Ս. Մեսրոպ միտքը գրաւ աւարտել սկսած աշխատութիւնը, ուստի քանի մը աշակերտներով գնաց Դանիէլ Եպիսկոպոսին քով, որպէս զի անոր հետ խորհրդակցութեամբ տառերուն պակասը լրացնելու հնարը մտածէին, բայց այս ջանքն ալ ի գերեւ ելաւ։ Մեսրոպ՝ իր աշակերտներէն մէկ քանին Դանիէլի քով թողլով, երկուքին հետ Եդեսիա գնաց, Պղատոս անունով հեթանոս ճարտասանի մը մօտ։ Բայց անկէց ալ օգուտ չը տեսաւ. վերջապէս գնաց Սամոսատ Հռովիանոս փիլիսոփային, և դարձեալ ձեռնունայն ելաւ։ Այսպէս օտարներու օժանդակութենէն և մարդկային հնարքներէ յոյսը կտրելով՝ ապաւինեցաւ Աստուծոյ և իր աշխատութիւնը շարունակելով՝ վերջապէս գտաւ ցանկացած տառերը, 406 թուին։

Գլխաւոր գժուարութիւնը մէջ տեղէն վերցած էր։ Երանելի վարդապետը Սամոսատ քաղաքին մէջ ուսումնարան բացաւ, և իր աշակերտ Յովհան երէցին և Յովհի Պաղնացիին օգնութեամբ Սաղմուն ու Առակներու սէփ

Գիրքը ու Նոր Կտակարանը թարգմանեց։ Երբոր վերադարձաւ երկիր, հայրապետը եւ համայն ժողովուրդը մեծ հրճուանքով ընդունեցին զայն իր նորագիւտ նշանագիրերով և անոնցմով թարգմանուած մատեաններու հետ, և ուրախութեան տօն կատարեցին։ Ուսումնարաններ բացուեցան եւ զարմանալի յառաջադիմութեամբ Հայերէն գպրութիւնները ծաղկիլ սկսան։ Այսուհետեւ այդ մեծ մարդը յօրինեց նաև Վրաց և Աղուաններու գրերը։ Յետոյ գնաց Յունաց կողմերը, ուր Ս. Սահակ Հայրապետի կողմէ նուիրակ զրկուեցաւ և իր մեծ գիտութեան համար «Եկլէսիանտիկոս» կոչումով պատուեցաւ։ Ս. Սահակէն ետքը վեց ամիս կառավարեց Հայրապետական աթոռը, և կնքեց իր արդիւնաւէտ և յաւիտեան անմուանալի կեանքը։ Հայերը այն ժամանակէն անոր ցոյց տուին իրենց երախտագիտութիւնը. փառաշուք յուղարկաւորութեամբ անոր սուրբ մարմինը զետեղեցին Օշական գիւղին մէջ և վրան եկեղեցի շինեցին։

Բարերարներու յիշատակը օրհնութեամբ և երախտագիտութեամբ պիտի յիշուի միշտ։



## ՎԵՑԵՐՈՐԴԻ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

### ՄԱՐԴՈՒՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

#### Ա. ԱՏՈՒՍ. ՖՊԱՇՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՐՈՆՔ

Աստուած մեզ իրեն նման ստեղծեց, այսինքն բանական, որպէս զի կարող ըլլանք ճանչնալ զինքը իբրև անսահման ճշմարտութիւն և սիրել իբրև անհուն բարութիւն։

Կրօնքը կը մխիթարէ մարդը իր դժբաղդութեան մէջ, և երկնային քաղցրութիւն մը կը խառնէ կեանքին դառնութիւններուն։

Սքանչելի՛ բան. քրիստոնէական կրօնը, որ հանգերձեալ կեանքին երջանկութիւնը միայն նպատակ ունենալ կը թուի, այս աշխարհի մէջ ալ երջանիկ կը նէ մեզ։

#### Խ Դ Մ Մ Ս Ս Ն Կ

Մաքուր խղճմտանքը կակուղ բարձի կը նմանի, որու վրայ բարի մարդը միայն կրնայ հանդիստ ննջել։ Ինքիրմէ գոհ ըլլալը ապացոյց և վարձատրութիւնն է բարի վարքին։

Մաքուր և հանդարտ խղճմտանք ունեցողը հաճոյք կը զգայ իր շուրջը գտնուած ամէն բանէ. անո՞ր համար միայն բնութիւնը գեղեցիկ է։

Թ Ա. Ր Ի Ն Ա. Խ Ա. Ն Զ

Բարի և չար նախանձին միջև նոյն տարբերութիւնը կայ, ինչ որ կայ առաքինութեան ու մոլութեան միջեւ:

Բարի նախանձը կամաւոր և անկեղծ զգացում մըն է, որ կ'արդասաւորէ հոգին և օգուտ քաղել կուտայ բարի և վսեմ օրինակներէ:

Թ Ա. Ր Ի Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Պարկեշտ մարդերու ընկերակցութիւնը գանձ մըն է:

Աւելի լաւ է մինակ մնալ քան թէ չար ընկերներու հետ գտնուիլ:

Ըսէ՛ ինձ ո՛վ է ընկերդ, եւ ըսեմ քեզ ի՛նչպէս մարդ ես:

Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե Ւ Տ Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ինչպէս որ կոյրը արեւի լոյսէն կը զրկուի, տգէտն ալ կատարեալ կեանքէ կը զրկուի: Աւելի լաւ է աչքով կոյր ըլլալ քան թէ մտքով:

Հրահանգիչ գիրքերը նոյն են մարդուս հոգիին համար, ինչ որ են սննդատու կերակուրները մարմինին համար:

Հ Ա. Մ Ե Ս Ս Ո Ւ Թ Ի Ւ Ն

Մոլութիւններու ամէնէն վատը և ամէնէն վտանգաւորը ամբարտաւանութիւնն է:

Տիմարութիւնը ու մնափառութիւնը երկու անբաժան քոյրեր են:

Համեստութիւնը արժանիքներու զարդն է. աւելի զօրութիւն ու փայլ կուտայ անոր:

Ճշմարտապէս գովելի մարդիկը չեն ախորժիր գովեստէ:

Իր ազնուականութեան, հարստութեան կամ տաղանդին վրայ պարձողը ցոյց կուտայ թէ արժանի չեանոնց:

Պ Ա. Ր Զ Ա. Կ Ե Ց Ո Ւ Թ Ի Ւ Ն

Պերճասիրութիւնը մարդուս պէտքերը շատցնելով հարստանալու տենչ կը գրգռէ, իսկ պարզասիրութիւնը արտաքին փայլերէ հեռացնելով մարդը՝ անոր առաքինութիւնը պաշտպանող ամուր պատուար մը կ'ըլլայ:

Պարզ և ժուժկալ կեանքը առողջութիւն, սրտի անդորրութիւն և անկախութիւն կը պարգևէ մարդոց:

Հ Ա. Մ Ե Ս Ս Ո Ւ Թ Ի Ւ Ն

Բարկութիւնը յիմարութիւն է:

Մի՛ ըլլար խրոխտ և ցասկոտ. զգուշացի՛ր կուիւէ, որ աղքիւր է բոլոր չարիքներուն:

Հրդեհ մը մարելէ աւելի շուտով պէտք է հանդարտել բարկութիւնը:

Բարկութիւնը կը գառնացնէ ու կ'ուժացնէ սիրտերը, իսկ քաղցրութիւնը կը գրաւէ:

Ս. Ր Ի Ո Ւ Թ Ի Ւ Ն Փ Ո Ր Չ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե Ր Ո Ւ Դ Ա Է Մ

Զախորդութիւնը առաքինութեան փորձաքարն է:

Վիշտը կը յաղթէ քեզ եթէ տկար սիրտ ունիս. իսկ դու կը յաղթես անոր, եթէ արի սիրտ ունիս:

Վեհ սիրտերը բարձր են թշնամանքէ, անիրաւութենէ և կոկիծէ:

Ժ.ՐՈՒԹԻՒՆ, ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ, Ժ.Ս.Մ.Մ.Ն.Ս.Կ.Ի.  
Գ.ՈՒ.Ծ.Ս.Ծ.ՈՒ.Մ

Աստուած աշխատութիւնը պահապան կարգեց առաքինութեան:

Անգործութիւնը աշխատութենէ աւելի շուտ կը ձանձրացունէ մեզ:

Չանձրութիւնը ծուլութեան հետ մտած է աշխարհ: Ինչ որ կրնաս այսօր ընել, վաղուան մի' թողուր: Ժամանակը թանկագին բարիք մըն է, ինչպէս ոսկի դրամը. մի' վատներ զայն ընդունայն, որպէս զի չի զղաս ետքը:

Խ.ՈՀԵ Մ.ՈՒԹԻՒՆ

Խոհեմութիւնը իմաստուն խորհրդածութեամբ վարուելու արհեստն է:

Առանց խորհելու գործելը՝ առանց պատրաստութեան ճամբորդութիւն ընելու կը նմանի:

Գործի մը մի' ձեռնարկեր առանց լաւ մը խորհելու. բայց որոշումդ ընելէ ետքը՝ ժրութեամբ կատարէ':

Առաջին երեւոյթներու հաւատ մի' ընծայեր և մի' աճապարեր դատողութիւն ընելու. մտածէ' թէ ճըշմարտանման բաներ կան՝ որոնք ճշմարիտ չեն և կամ ճշմարիտ բաներ՝ որոնք ճշմարտանման չեն:

Միշտ օգտակար է պարկեշտ և լուսամիտ մարդու մը խորհուրդ հարցնել. մարդ մը, որչափ և խելացի ըլլայ, դարձեալ խորհուրդի պէտք կ'ունենայ: Ով որ

միշտ մինակ և առանց առաջնորդի կ'երթայ, մոլորելու վտանգէն ազատ չի կրնար ըլլալ:

ԽՈՐՃՐԴԱՎ.ՊԱՀՈՒԹԻՒՆ, ԽՈՌԻԹԻՒՆ

Գաղտնիքի մը յայտնութեան յանցանքը՝ զայն ուրիշի մը պահ տուողին է:

Ով որ իր գործերը ամենուն կը յայտնէ, յաճախ արգելքներու կը հանդիպի նոյն իսկ այն անձերուն կողմէ, որոնց վրայ կասկած չ'ունի բնաւ:

Իր ձեռնարկութեանց մէջ յաջողելու գլխաւոր միջոցը զանոնք ծածուկ պահելն է:

Լաւ խօսելու համար քիչ խօսիլ պէտք է:

Քիչ խօսողը քիչ անգամ կը զղայ պակաս խօսած ըլլալուն վրայ, իսկ շատ խօսողը շատ կը զղայ:

Կ'ուղե՞ս որ քու վրայ լաւ խորհին ու խօսին, ուրիշը մի' բամբասեր:

Ա.Ն.ՏԵՍՈՒԹԻՒՆ, Ն.Ս.Խ.Ս.ՏԵՍՈՒԹԻՒՆ

Եթէ կ'ուղես հարստանալ, ո՛չ միայն վաստկել սորվէ', այլ և վաստակդ պահել:

Զանա' ձեռքէ չը հանել մանր դրամները. ոսկի դրամներն ինքնին կը պահուին:

Անպէտ բանը միշտ սուղ է՝ որչափ ալ աժան գնուի:

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ, ԱՐԴ.Ա.ՐԱ.ՍԻՐՈՒԹԻՒՆ

Ուղղութիւնն ուրիշ շատ բարեմասնութիւններու տեղը կը բռնէ, բայց առանց ուղղութեան ո՛չ մէկ բարեմասնութիւն արժէք ունի:

Պէտք չէ երբէք վստահիլ այնպիսի մարդոց որոնք

Կը թերանան ուղղութենէ, որչափ ալ տաղանդաւոր բլիան :

## ՊԱՐԿԵՏՈՐԵՐԻ

Պարկեշտ մարդն օրէնք կը դնէ իրեն տուած խօսքը բոնել, մինչեւ իսկ մանր բաներու մէջ, վասն զի ով որ մանր բաներու մէջ հաւատարիմ չըլլալու կը վարժուի, մեծ բաներու մէջ այ անհաւատարիմ կ'ըլլալ:

Պարկեշտութիւնը սուրբ բան մըն է աղնիւ սիրտի  
մը համար. ո՞չ մէկ հարկ, ո՞չ մէկ սպառնալիք, ո՞չ  
մէկ հրապոյր, Են կրնար անհաւատարիմ բնել զայն:

ԱՐԿԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Պէտք չէ միշտ ըսել մտքէն անցածն . բայց պէտք  
է խորհիլ ըսելիքը :

Երբոր մէկը ճշմարտախօս ճանչցուի, ամէն մարդ կը վստահի անոր խօսքին և երդում իսկ կ'ընէ.

Սուտ խօսողն ու սուտ դրամ քցողն միեւնոյն են :

Ստախօսն եթէ ճշմարիտ խօսի, մէկը չի հաւատար  
անոր :

Ծողոքորթութիւնը սուտ վկայութենէ գէշ է, վասն զի սուտ վկան կը խարէ դատաւորը, բայց չը զեղծաներ զայն (բարքը չ'աւրեր). Իսկ չողոքորթը թէ կը խարէ և թէ կը զեղծանէ մեզ:

## ԵՐԱԽՏՎՈՒԹՅՈՒՆ

Երախտագիտութիւնն այնպիսի զգացում մըն է, որ մարդը իր բարերարին կը կապէ, և իր այդ զգացումն արդեամբ լայտնելու փափաք կ'ազդէ անոր:

Բարերարին ու բարերարուածին միջեւ լոին դաշ-

Նադրութիւն մը կը կնքուի, այսինքն մէկը կը պարտի անմիջապէս մոռնալ իր ըրած բարիքը և միւսը կը պարտի միշտ յիշել:

Ապերախտութիւնն հակաբնական մոլութիւն մընէ,  
զի անասուններն անգամ երախտագէտ են:

ԵՐԵՎԱՆԻ ՊՐԵՄԻՈՒԹՅՈՒՆ

Իր անձը միայն սիրելը յիմարութիւն է. եթէ մէկը  
ուրիշներու բարիք չընէ, ինքն ալ ուրիշներէն բարե-  
կամութիւն, երախտագիտութիւն և մինչեւ իսկ օդ-  
նութիւն պէտք չէ որ սպասէ:

Ինքն իրեն միայն օդտակար եղողն անպիտան է  
այխարհի համար :

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՎԻ ԹՐԱԴԻ

«Երբոր մէկու մը ծառայութիւն մը ընեմ, կ'ըսէր  
իմաստուն մը, չեմ կարծեր թէ չնորհ մը կ'ընեմ, այլ  
պարտք մը կը վճարեմ։»

Հաճոյակատարութիւնն , երբ պատուաւոր պատ-  
ճառներէ ներշնչուած է , կեանքին ամենաքաղցր կա-  
պերէն մէկն է :

Ներողամտութիւնն , այսինքն մարդոց պակասութիւններուն համբերել և սխալներուն ներելը , լուսամիտ առաքինութեան մը ամենէն սիրուն նկարագիրներէն մէկն է : Ընդհանրապէս մարդ մը ո՛րչափ աններող ըլլայ իրեն համար , ա՛յնչափ ներողամիտ կ'ըլլայ ուրիշներուն համար :

Ա.Ն.Ց.Տ.Ս.Զ.Ս.Ր.ՈՒ.Թ.Ի.Ի.Ն

Վրէժինդրութենէ զգացուած գոհութիւնը քանի  
մը վայրկեան կը տեւէ, իսկ անյիշաշրութեան ար-  
տադրած գոհութիւնն անվախճան է:

ՈՂՈՐՄԱՆ ՌԱԴԱՐԱՐՈՒԹ.Ի.Ն, ԲԱ.ԲԵԳ.ԱՐ.Թ.ՈՒ.Թ.Ի.Ն

Կանուխէն վարժեցո՛ւր քեզ ողորմած ութեան, բայց  
ջանա՛ որ խելքով լուսաւորուած և արդարութենէ ա-  
ռաջնորդուած ըլլայ:

Ողորմածութիւնը մի միայն դրամ չնորհել չէ. այլ  
պէտք է նաեւ ժամանակ, խելք, խնամք ընձեռել, որ  
շատ անդամ դրամէ աւելի թանկագին են:

Հարուստներուն երջանկութիւնն իրենց ունեցած  
ինչքերուն մէջ չի կայանար, այլ իրենց ըրած բարիք-  
ներուն մէջ:

Հարուստն ինքինք իբրեւ բաշխիչ պարտի նկատել  
այն բարիքներուն զորս նախախնամութիւնը յանձնած  
է իրեն:

Բարերարելու սովորոյթը տեսակ մը քաղցր հեշտու-  
թիւն կամ անդորրութեան զգացում կը պարգեւէ  
մարդուն սիրտին:

Ողորմութիւն տուած ժամանակդ ջանա՛ չի նուաս-  
տացընել ողորմընկալը, վասն զի ան ալ ի բնէ քեզ հա-  
ւասար մարդ է: Քաղցրութեամբ տրուած ողորմութիւ-  
նը կրկնապատիկ արժէք կը ստանայ և կ'ազնուացընէ  
բարերարը նոյն իսկ իր առջեւ:

Մ.Ս.Ր.Դ.Ա.Մ.Ի.Ր.ՈՒ.Թ.Ի.Ն, Ա.Ն.Չ.Ն.ՈՒ.Ի.Ր.ՈՒ.Թ.Ի.Ն

Ահագին հրդեհի մը արտադրած դժբաղդութեանց  
տեսարանն, աւազակներու ձեռք ինկած մարդու մը

տեսքը, ծովս ինկած և խեղդուելու կէտն հասած տը-  
ղու մը ճիշերը, վերջապէս որեւէ վտանգի մը ներկա-  
յութիւնը կը դրդէ ազնիւ սիրտի տէր մարդիկն իրենց  
կեանքը վտանգի մէջ գնելով օգնութեան դիմել իրենց  
նմաններուն: Հոգիին այս թռիչքը, ինքնայօժար վե-  
հանձնութեան այս շարժումը, ամէն գովեստներէ վեր  
են և պատիւ կը բերեն մարդկային բնութեան:

Վ. Ե Հ Ա. Ն. Զ Ա Խ Թ Ի Ւ Ն

Ով որ իր պատքը կը կատարէ, արդար է. իսկ ով  
որ իր պարտքէն աւելին կը կատարէ, վեհանձն է:

Վեհանձն մարդը բարերարութեամբ կը պատասխա-  
նէ իրեն եղած թշնամանքներուն:

Զարիքի փոխարէն չար հատուցանելով՝ քու դա-  
տապարտածդ կատարած կ'ըլլաս, այսինքն չարիք գոր-  
ծողին նմանած կ'ըլլաս. իսկ երբոր բարերարութեամբ  
վրէժ ինդրես, երբոր թշնամիիդ բարիք ընես, կը կ-  
նապատիկ կը փառաւորուիս:

Ֆ. Ն. Ո Դ. Ա. Ս Խ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ծնողասիրութիւնը սուրբ պարտականութիւն մըն  
է, վասն զի նոյն ինքն Աստուած կը պատուիրէ մեզ:

Ծնողասիրութիւնն է՝ յարգանք, գորով, երախ-  
տագիտութիւն և անձնուիրութիւն ծնողքին նկատ-  
մամբ:

Գ.Ի.Տ.ՈՒ.Թ.Ի.Ն ԵՒ Ա.Ր.ՈՒ.Ե.Ս.Տ.Ն.Ե.Ր

Երբոր գիտութիւնն յարատեւ ճիգերով ինքինք  
մարդկութեան ծառայելու կը նուիրէ, առաքինու-  
թեան կը նմանի, կամ աւելի ճիշդ խօսելով՝ առաքի-  
նութիւն կ'ըլլայ:

Արուեստները մեծապէս կը նպաստեն քաղաքակըրթեան զարգացման և զիրենք մշակող երկրին բարգաւաճման։ Փառքի սէր, բարենախանձ մրցում և մանաւանդ արուեստը առաքինութեան յաղթանակին ծառայեցնելու ջերմ բաղչանք, այս է ճշմարիտ արուեստագէտին նկարագիրը։

Ժրայան երկրագործը, պարկեշտ վաճառականը, հանճարեղ արուեստագէտը կը հարստացնեն պետութիւնը, ընկերութեան ամէն դասերուն բարեկեցութիւնը կ'աւելցնեն և ասովլ արժանի կ'ըլլան անոնց յարգանքին ու պաշտպանութեան։

ԱՐԹՈՒՐԻԴԻՆ, Դ.Ս.ՍՏԻՄ.ՐՍ.ԿԱՆԵՐԸ ԵԽ ԱՇԱԿԵՐՑՆԵՐԸ

Մանուկներու դաստիարակութիւնն անձնուիրութեան գործ մըն է։

Դաստիարակի մը խնամքն ու գորովը չի հասնիր հայրական գորովի բարձրութեան, բայց կրնայ մօտենալ անոր,

Տղու մը կրթութիւնն յաջողելու համար, ամէն բանէ առաջ պէտք է որ հնազանդ և ջանասէր ըլլայ ան։ Իր կրթութեան գործակցող ամէն անձերու մէջ առաջին և ամենակարեւոր դերակատարը նոյն ինքն (տղան) է։ Եթէ ինք չ'օգնէ իրեն արուած խնամքներուն, անօգուտ կը մնան անոնք։

Ք. Ա. Դ. Ա. Վ. Ա. Ր ՈՒԹ. Ի Կ Ն

Քաղաքավարութիւնը տեսակ մը ուշադրութիւն է, որպէս զի մեր խօսքերն ու ձեւերը հաճելի ըլլան ուրիշներուն։

Քաղաքավարութիւնն արդարեւ բարութիւն, արդարութիւն, հաճոյակատարութիւն, երախտագիտութիւն չըներջնչեր միշտ, բայց գոնէ անոնց երեւոյթիւնը այնպէս կ'երեւցնէ արտաքուստ, թը կուտայ և մարդը այնպէս կ'երեւցնէ արտաքուստ, ինչպէս պարտի ըլլալ ներքուստ։

Ք. Ա. Ր Ե Կ. Ա. Վ. Ա. Ր ՈՒԹ. Ի Կ Ն

Բարեկամութիւնն հոգիին պէտքերէն մէկն է, գեղեցիկ հոգիներուն ամէնէն աղնիւ պէտքը։ Պայմանագիր մըն է սիրտերուն միջեւ, դրաւոր պայմանագրերէ աւելի նուիրական, վասն զի ամենասիրելի պարտականութիւններ կը դնէ մեր վրայ։

Զանացէ՛ք ունենալ ընտիր բարեկամ մը, որ ճշմարտութեան խօսքեր թափէ ձեր սիրտին մէջ։ Բարեկամի վրայ վնասուուելիք առաջին արժանիքն է առաքինութիւն, որ միայն կը ցուցնէ մեզ թէ կարող և արժանի է ան բարեկամութեան։

— \* \* \* —

ԽՆՈՒՆՁԸ ԵՒ ԽԼՈՒՐԴԸ

Հուսաւորեալ ծեր մի Խղունջ  
Ժամանակին  
Կ'ապրէր անհոգ և անտրտունջ  
(Զի չունէր կին...)  
Եւ ոստէ ոստ, թփէ ի թուփ  
Մառէ ի ծառ  
Առանձնացեալ իբրեւ ի տուփ  
Վարէր պայծառ  
Նախանձելի, ջի՞նջ մի կենցաղ.

— Զէր նա թեթեւ,  
Արագընթայ, հապա դանդաղ,  
Զի չունէր թեւ,  
Զի իր ուսին տուած էր Տէր  
Տնակ մ'ի կախ,  
Եւ սողալով միայն պարտ էր  
Քրտնաթաթախ  
Շրջել, ապրել անիծապարտ,  
Եւ իր կոչման  
Համեմատ, օր մ'երթալ հանդարտ  
Ի գերեզման,

— Բայց մեր Խղունջ պարզամիտ չէր.  
«Օր մ'անկասկած  
Պէտք է, ըստ, որ իմ աչեր  
Դեռ չը փակած

Ճամբայ ելեմ, և մի անդամ  
Իր չորս կողմէն  
Ուշի ուշով տեսնեմ, ժուռ դամ  
Աշխարհ ամէն:  
Եւրոպացոց նման յաւետ  
Հետաքրքիր՝  
Ի՞նչ որ տեսնեմ անոր, օդտաւէտ,  
Առնեմ ի գիր,  
Յետոյ ձօնեմ զայնս իմ ազգին  
(Ա՛զգ անդիտակ)  
Իբր իրապէս պերճ և անդին  
Մի յիշատակ: »

— Հարկ չէ ըսել թէ երբ այս լուր  
Տարածուեցաւ,  
Լեռ ու պարտէզ, դաշտ ու բլուր  
Զգացին ցաւ,  
Եւ թէ իր քոյլն ու քեռորդին  
Եւ այլք, այր կին  
Մեր թէ մանուկ, մեր ճամբորդին  
Ցուղարկ եկին.  
Եւ յանձնելով զայն առ երկին,  
Զայնով տրտում  
Վերադարձին կրկին կրկին  
Առին խոստում:

— Մայիսի մէջ, մինչդեռ Գարուն  
Սիրազուարթ  
Սփռած էր վեր ողջ դաշտերուն  
Շուշան և վարդ,

Եւ արեգակն հեղոյր յերկնի  
Լոյս իր վսեմ:  
Թողուց Խղունջն իր հայրենի  
Պարտիզին սեմ,  
Եւ եռանդուն անկաւ յուղի՝  
Միշտ յամրաքայլ,  
Սակայն առանց ահ ու դողի  
Եւ անայլալ,  
Ընթանալով դիշեր ցորեկ  
Յաղթ անվկանդ,  
Երբ զինքն զգաց վաստակաբեկ՝  
Օր մ'առաւ կանդ  
Եւ անձկանօք դիտեց իր շուրջ:

— Կար մի հովիտ  
Մերկ և անչեն, և իր կամուրջ  
Նեղ ու վտիտ,  
Ոյր ներքեւէն փափկամրմունջ  
Մի ջուր խոնարհ  
Զերթ տարագիր որբ անտերունչ  
Ի ծով գնար:

— Խղունջն իսկոյն — «Է՛ճ, չկայ ճար,  
Շուտ թէ կամաց,  
Պէտք է, ըստ, սրտիւ յօժար  
Անցնիմ դիմաց,  
Քանզի այս չար, վայրի, խոպան  
Դաշտերուն մէջ  
Տեսնելու և գրելու բան  
Չկայ մի էջ...» :

Ամրան օրերն անցած էին  
Շատոնց ի վեր,  
Կը փշէին աշնանային  
Ուժդին հովեր,  
Դաշտք՝ անծաղիկ, ծառք՝ անտերև,  
Երկինք՝ մժին,  
Էին, և յորդառատ անձրեւ  
Տեղար չորս դին,  
Եւ հովտին նուրբ առուակին տեղ,  
Փրփրակուտակ  
Մոնչելով մի բուռն հեղեղ  
Կ'երթար շիտակ,  
Սարսէր կամուրջն անսիւն և ցած,  
Խարխուլ և հին...:

— Իսկ մեր Խղունջն անդին անցած,  
Զէր տակաւին...:  
Այլ կը քալէր (ժիր և կայտառ)  
Իբրեւ մի քար,  
Ուժակորոյս և շնչասպառ  
Ու կը տքար...:

Նոյն պահուն ալ Խլուրդ մ'արի  
Եւ սրբնթաց,  
Ոյր՝ անձրեւէն՝ անձն ալ կարի  
Յուղեալ և թաց,  
Կամուրջն ելաւ, արագ արագ  
Իբրեւ կայծակ,  
Անցնիլ երթալ և անձրագ  
Մտնել իր ծակ:

Ճիշդ նոյն պահուն ալ մեր Խղունջ  
Որ զայն տեսաւ,  
Ճիգ մ'ալ թափեց — բեկեալ, անշունչ  
Միւս եղբն հասաւ,  
Բաղխեցին ջուրք, ալիք փրփուր,  
Ոլոր ոլոր,  
Կամուրջն անսիւն, նեղ ու թափուր  
Տարի՝ ն բոլոր,  
Եւ քայքայուն, կէս վլատակ  
Կամուրջին հետ  
Դժբախտ Խլուրդն ալ ջրոց տակ  
Եղաւ անհետ . . . .

— Խղունջն յայնժամ ձայնեց ուժդին.  
«Խեղճ կենդանի,  
Յանդուգն էակ, իմ ընթացքին  
Ո՞վ կը հասնի . . .  
Յաւէտ օրհնեալ լինի՛ Աստուած,  
Որ յ'աշխարհի  
Իր բարութեամբ ինձ է տուած  
Մարմին մ'արի,  
Որով կրնամ՝ զերդ մի բազէ  
Արագաթեւ՝  
Երթալ հոգիս ուր որ ուզէ,  
Շուտ և թեթեւ . . .  
Առանց որու անտարակոյս  
Ճիշդ քեզ նման,  
Ջուրն ինձ պիտի լինէր անլոյս  
Մի Գերեզման . . . .

Անհրաժեշտ պէտք է մարդուն  
Ըլլալ ուսեալ, ժիր և արթուն,  
Այլ մեր ուսմունք, ջանք և համայն  
Դառնան անպէտ և ընդունայն  
Երբ վերին Պատգամըն անյաղթ  
Չէ տուած մեզ և չունինք բախտ:

Ա. Գ. ՓԱՆՈՍԵԱՆ

ՎԵՐՋ Դ. ՏԱՐԻՈՅՑ



2013 4568



ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

**ՀԱՅՈՅ ՄԻԱՅԵԱԼ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ**



<b>ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ</b> (Ն. Տ. Ղեւնդեան)	<b>Ա.</b> Տարի, 19րդ
Տպագրութիւն (43 պատկերով)	3 Դր.
<b>ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ</b> (Ն. Տ. Ղեւնդեան)	<b>Բ.</b> Տարի, 15րդ
Տպագրութիւն (66 պատկերով)	5 »
<b>ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ</b> (Ն. Տ. Ղեւնդեան)	<b>Տարի, 18րդ</b>
Տպագրութիւն (80 պատկերով)	5 »
<b>ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ</b> (Ն. Տ. Ղեւնդեան)	<b>Դ.</b> Տարի, 5րդ
Տպագրութիւն (20 պատկերով)	5 »
<b>ԹՈՒՄԱՐԱՆՈՒԹԻՒՆ</b> (պատկերազարդ)	5 »
<b>ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆԸ</b> (Մարկոսան), 31րդ	60 Փառա

Վարժարանաց հարիւրին 50 զեղչ

● Ի նպաստ աղքատիկ ուսանողաց ●



Սոյն հրատարակութեանց ամբողջ հասայքը  
Ազգային կարօս վարժարանաց եւ որբանոցաց  
յատկացուած է :



Գլխաւոր կեդրոնատեղին է

Զագմագձրաւ, Մեծ-Նոր խան, Հիւանդանոցի գրասենեակը.



Պատրիարքարանի կնիքը չի կրող օրինակները կեղծ են :

معارف عمومية نظارت جليله سنك رخصتامة سيله طبع أولمش در